



**ԱԶԳԱԳԻՐ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

Հայ-ռուսական «ՀայՌուսգազարդ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Թրիխայան խճուղի 43,

Հեռախոս՝ (+374 10) 29 48 10 Ֆաքս՝ (+374 10) 29 47 24,

Էլ-փոստ՝ inbox@armrusgasprom.am, ինտերնետային կայքը՝ www.armrusgasprom.am

արժեթղթերի դասը՝	Անվանական արժեկտրոնային պարտատում
արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
արժեթղթերի քանակը՝	20,000 (քսան հազար) հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ

**«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԳԱԳՐՈՒՄ
ՁԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ
ՉԻ ՀԱՎԱՍՏՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:**

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:

Ստորագրող անձինք՝

Վալերի Գոլուբև	Տնօրենների խորհրդի նախագահ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Արմեն Մովսիսյան	Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Ելենա Կարպել	Տնօրենների խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Դմիտրի Լավրով	Տնօրենների խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Իոսիֆ Իսայան	Տնօրենների խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Կարեն Կարապետյան	Վարչության նախագահի Գլխավոր տնօրեն	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Գենադի Սկլիբանով	Տնօրենների խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Անատոլի Պողոմիշչակի	Վարչության նախագահի տեղակալ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		

<u>Ելենա Բորովելա</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Ալեքսանդր Տերնյուկ</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Բորիս Գյուլումյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Աշոտ Հովսեփյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Նաիլ Ախմետովա</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
<u>Արմեն Ունանյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>
Ստորագրությունները վավերացնում են՝			
<u>Կարեն Կարապետյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն</u> (պաշտոն)	<u>(ստորագրություն)</u>	<u>(ամսաթիվ)</u>

ԱԶԳԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	3
1.1. Տեղեկություններ թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ.	3
1.2. Տեղեկություններ Թողարկողի վերաբերյալ.	5
2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	10
2.1. Ընդհանուր տեղեկություններ	10
2.2. Տեղեկություններ Պարտատոմսերի գնի վերաբերյալ.....	11
2.3. Տեղեկություններ Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ.....	12
2.4. Տեղեկություններ սահմանափակումների վերաբերյալ	12
2.5. Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձինք.....	13
2.6. Տեղեկություններ բաժանորդագրությունների վերաբերյալ.....	14
2.7. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը	14
2.8. Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները.....	15
2.9. Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը	16
2.10. Տեղեկություններ շուկա ստեղծողի վերաբերյալ	16
2.11. Թողարկման նպատակը	16
3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	17
3.1. Ընդհանուր տեղեկություններ	17
3.2. Տեղեկություններ Թողարկողի գործունեության վերաբերյալ	20
3.3. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ	48
3.4. Տեղեկություններ Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ	50
3.5. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի սեփականատերերի վերաբերյալ	58
3.6. Տեղեկություններ Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ.....	62
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	65

1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

1.1. Տեղեկություններ թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ.

Թողարկողի կողմից սույն ազդագրի շրջանակում առաջարկվում են 1,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 20,000 հատ անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր:

Համաձայն Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 20.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման թիվ IB/08-002 պայմանագրի 2.2.5. կետի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կազմակերպում է պարտատոմսերի տեղաբաշխումը երաշխավորված եղանակով: Նշված պայմանագրով իրեն վերապահված իրավասության շրջանակներում Բանկը 05.06.2008թ կնքված Տեղաբաշխման խմբի ստեղծման և գործունեության մասին պայմանագրով ձևավորել է տեղաբաշխման խումբ, որի կազմում մտնում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ որպես գլխավոր տեղաբաշխող, և «ԱՐՅԱԽ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն և «ԱՐՄԵՆԲԲՈՎԿ» ԲԲԸ-ն՝ որպես տեղաբաշխման խմբի անդամներ: Համաձայն այդ պայմանագրի՝ պարտատոմսերի ծավալի 50%-ը՝ 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, տեղաբաշխվելու է տեղաբաշխման խմբի անդամների միջև:

Մնացած 500 մլն ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերը տեղաբաշխվելու են բաց բաժանորդագրության միջոցով, որի իրականացման ընթացակարգը հաստատվել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Գործադիր տնօրենի 06.06.2008թ. թիվ 159 Լ հրամանով (ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության ընթացակարգը ներկայացվում է որպես սույն ազդագրի Հավելված):

Բաժանորդագրությունը սկսվում է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրվանից և տևում 10 աշխատանքային օր: Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացնում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն: Պարտատոմսեր ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են մասնակցել բաժանորդագրությանը պարտատոմսերի ազդագիրը ստանալու պահից առնվազն 24 ժամ հետո: Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0010, Խանջյան 13/2), նրա ինտերնետային կայքից (www.armswissbank.am), ինչպես նաև Թողարկողի ինտերնետային կայքից (www.armrusgasprom.am):

Ներդրողները բաժանորդագրության միջոցով կարող են պարտատոմս ձեռք բերել՝ Բաժանորդագրության ընթացակարգով հաստատված հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկին ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00-ն:

Եթե տեղի է ունեցել պարտատոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են առաջնահերթության սկզբունքով, իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված հայտերում ձեռք բերվող պարտատոմսերի ծավալը գերազանցում է տվյալ օրվա ընթացքում չվաճառված պարտատոմսերի ծավալին, ապա մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական պարտատոմսեր, ապա դրանք ենթակա են կլորացման թվաբանական կլորացման եղանակով: Չբավարարված պարտատոմսերի համապատասխան դրամական միջոցները «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Պարտատոմսերի դիմաց վճարումներն ընդունվելու են անկանխիկ եղանակով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում բացված 250003691186 տարանցիկ հաշվին միանվագ կերպով փոխանցումների միջոցով: Ֆիզիկական անձինք պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ կարող են միանվագ կերպով մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը պարտատոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը: Եթե ներդրողների կողմից համապատասխան դրամական միջոցները նշված բանկային հաշվին վճարվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները

մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով (հիմք ընդունելով պարտատոմսերի տեղաբաշխման գնի որոշման բանաձևը):

Ներդրողները պարտատոմսերի հայտերը մուտքագրելուց հետո 9 ժամվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր եղանակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչել իրենց բաժանորդագրությունները՝ եթե մինչև այդ ներդրողների հայտերը չեն բավարարվել և տվյալ հայտերի հիման վրա գործարքներ չեն կատարվել: Եթե ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և ներկայացվում է նոր հայտ:

Հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա հայտի հետ կանչման ամսաթվից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա է վերադարձման՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Պարտատոմսերի դիմաց նախատեսվում է վճարել արժեկտրոնային եկամուտ՝ տարեկան 9.5% տոկոսադրույքով: Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ դրամով, պարտատոմսի անվանական արժեքի 4.75%-ի չափով, պարտատոմսերի տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամսվա համապատասխան օրերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողի կողմից թողարկման մասին որոշումն ընդունելուց ի վեր ֆինանսական շուկայի բոլոր հատվածներում գրանցվել է տոկոսադրույքների աճ, սույն առաջարկի շրջանակում, որպես պարտատոմսերի գրավչության բարձրացման միջոց, Թողարկողը պարտատոմսերը տեղաբաշխում է 10% եկամտաբերության (գեղձով վաճառելու) պայմանով՝ չփոփոխելով արժեկտրոնային եկամտաբերության տոկոսադրույքի մակարդակը (տարեկան 9.5%):

Պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով և անվանական արժեքով: Պարտատոմսերի մարման օր է համարվում տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 36-րդ ամսվա համապատասխան օրը (եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը): Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ փակման օրվա ժամը 09:00 դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Պարտատոմսերի թողարկման պայմաններով վաղաժամկետ մարում չի նախատեսված:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելում):

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար)՝ օրենքով սահմանված կարգով (մանրամասնությունները ներկայացված են ազդագրի համապատասխան բաժնում):

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները.

1. Ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և մարման գումարը:
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնների և/կամ մարման գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ստանալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տույժերն ու տուգանքները:
3. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:

4. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից:
5. Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով:
6. Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
7. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը պարտավորվում են ստանձնել հետևյալ պարտականությունները՝

1. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուի մոտ բացել արժեթղթերի անձնական հաշիվ:
2. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը որևէ բանկում բացել բանկային հաշիվ:
3. Կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

1.2. Տեղեկություններ Թողարկողի վերաբերյալ.

ա. ընդհանուր տեղեկություններ.

Թողարկողի անվանումն է՝ **Հայ-Ռուսական «Հայ-Ռուսագազարդ» փակ բաժնետիրական ընկերություն:**

Թողարկողը հիմնադրվել է ՀՀ Էներգետիկայի նախարարության, «Գ-ազարդ» բաց բաժնետիրական ընկերության և «Իտերա» միջազգային էներգետիկական կորպորացիայի կողմից՝ 1997թ. օգոստոսի 30-ին կնքված հիմնադիր պայմանագրի, ՀՀ գործող օրենսդրության հիման վրա, ՀՀ կառավարության և «Գ-ազարդ» ռուսական բաժնետիրական ընկերության միջև 1997թ. հունվարի 18-ին Մոսկվայում կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում գազամուղների կառուցման և շահագործման, Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական բնական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրա տարանցման մասին» համաձայնագրի համաձայն: Թողարկողն իրավաբանական անձանց պետական ռեզիստրում գրանցվել է 30.12.1997թ.:

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 278,040,807,288 (երկու հարյուր յոթանասուներեք միլիարդ քառասուն միլիոն ութ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, որը Թողարկողի բաժնետերերի կողմից ամբողջությամբ վճարված է: Թողարկողի բաժնետերերի կառուցվածքը հետևյալն է.

- **ՀՀ Էներգետիկայի նախարարությանը** պատկանում է 12,600,000 հատ սովորական անվանական բաժնետոմս՝ 63,333,900,000 (վաթսուներեք միլիարդ երեք հարյուր երեսուներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է կանոնադրական կապիտալի **22.78%-ը:**
- **«Գ-ազարդ» ԲԲԸ-ին** պատկանում է 39,914,992 հատ սովորական անվանական բաժնետոմս՝ 200,632,707,288 (երկու հարյուր միլիարդ վեց հարյուր եռեսուներկու միլիոն յոթ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է կանոնադրական կապիտալի **72.16%-ը:**
- **«ԻՏԵՐԱ»-ին** պատկանում է 2,800,000 հատ սովորական անվանական բաժնետոմս՝ 14,074,200,000 (տասնչորս միլիարդ յոթանասուներեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է կանոնադրական կապիտալի **5.06%-ը:**

բ. Տեղեկություններ Թողարկողի գործունեության վերաբերյալ.

Թողարկողի հիմնական գործունեությունը կենտրոնացված է ՀՀ տարածքում գազամատակարարման համակարգում: Թողարկողը ՀՀ բնական գազի ներկրման և բաշխման շուկայում ունի մենաշնորհային դիրք և հանդիսանում է համապատասխան գործունեության լիցենզիաներ ունեցող միակ ընկերությունը, իսկ գազի փոխադրումը Թողարկողը կազմակերպում է իր դուստր ընկերության՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ի միջոցով: Ուստի Թողարկողի գործունեությունը, ի

տարբերություն մրցակցային հատվածում ծավալվող գործունեության տեսակների, գտնվում է ավելի խիստ կարգավորման և վերահսկողության դաշտում: Թողարկողի գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքն է՝ համաձայն որի գազամատակարարման համակարգը հանդիսանում է ՀՀ էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ մասերից մեկը: Թողարկողի գործունեությունը կարգավորող մարմինն է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Կարգավորող մարմին), որի հիմնական խնդիրներից մեկն է՝ գազամատակարարման բնագավառում սպառողներին հիմնավորված սակագներով հուսալի և անվտանգ բնական գազի մատակարարման երաշխիքների ապահովումը:


Թողարկողը բնական գազի ներկրումն իրականացնում է Ռուսաստանի Գաշնությունից: Միակ մատակարար ընկերությունը ռուսական «Գազպրոմէքսպորտ» ՍՊԸ-ն է, որն ամբողջությամբ պատկանում է «Գազպրոմ» ԲԲԸ-ին: Համաձայն Թողարկողի և «Գազպրոմէքսպորտ» ՍՊԸ-ի միջև կնքված բնական գազի առուվաճառքի մասին պայմանագրի՝ բնական գազի սեփականության իրավունքը մատակարարից Թողարկողին է անցնում բնական գազի՝ Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական սահմանն անցնելու պահից (այսինքն՝ բնական գազը մատակարարվում է DAF-Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական սահմանը պայմանով): ՀՀ տարածքում բնական գազի փոխադրումն իրականացնում է Թողարկողին պատկանող «Տրանսգազ» ՍՊԸ-ն (որը փոխադրման գործունեություն է իրականացնում ՀՀ բնական մենաշնորհները կարգավորող հանձնաժողովի 22.09.2003թ. N 0111 լիցենզիայի հիման վրա), իսկ իրացումն իրականացնում է Թողարկողը՝ իր գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղերի (Գ-ԳՄ) միջոցով:

Սպառողներին բնական գազի մատակարարումը, գազիֆիկացումը, գազամատակարարման ցանցի վերականգնումը, գազամատակարարման ցանցին գազասպառման համակարգերի միացումը, գործարկումն ու տեխնիկական սպասարկումն իրականացվում են Կարգավորող հանձնաժողովի 08.07.2005թ. թիվ 95 Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ»-ով, ինչպես նաև Թողարկողի և բաժանորդի միջև կնքված՝ գազամատակարարման, գազիֆիկացման, միացման կամ տեխնիկական սպասարկման պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով:

Թողարկողի կողմից Հայաստան ներկրվող և իրացվող բնական գազի ծավալներում արձանագրվում է դինամիկ աճ: Այսպես, 2007թ.-ին ՀՀ-ում իրացվել է 1869.3 մլն խմ բնական գազ: Նշված ցուցանիշը շուրջ 18%-ով գերազանցում է 2006թ.-ին իրացված բնական գազի ծավալները: Իրացման ցուցանիշներում առկա դրական միտումները պայմանավորված են ինչպես երկրում գրանցվող տնտեսական աճով, այնպես էլ Թողարկողի կողմից վարվող էքստենսիվ և ինտենսիվ զարգացման քաղաքականությամբ:

ՀՀ տարածքում բնական գազի սպառողների շրջանակը կարելի է բնութագրել 2 հիմնական խմբերով՝ բնակչությունը և տնտեսության արտադրական հատվածը: Գծապատկերում ներկայացված են Թողարկողի կողմից իրացված բնական գազի ծավալները՝ 2003-2007 թվականներին:

Թողարկողի կողմից իրացված բնական գազի ծավալները, 2003-2007թթ.



2008թ. և հետագա տարիներին հանրապետությունում սպասվում է բնական գազի սպառման ծավալների դինամիկ աճ: Վերջինս պայմանավորված է դարձյալ տնտեսության սպասվող աճով և Թողարկողի կողմից բնական գազի իրացման ուղղությամբ վարվող քաղաքականությամբ:

Մոտակա տարիներին Թողարկողի գործունեության հիմնական ուղղությունը շարունակելու է մնալ բնական գազի ներկրումը և բաշխումը, ուստի Թողարկողի հիմնական եկամուտները կձևավորվեն այդ գործունեության հասույթից, մասնավորապես՝ Թողարկողը գազի ներկման գործող պայմանագիր ունի «Գազէքսպորտ» ՍՊԸ-ի հետ՝ 28.12.2005թ. կնքված բնական գազի առուվաճառքի թիվ 2107-06-04 պայմանագիրը (27.12.2007թ. կնքվել է թիվ 6 Լրացուցիչ համաձայնագիրը): Համաձայն վերոհիշյալ պայմանագրի՝ 2008 թվականին նախատեսվում է 2,212 մլն խ.մ., իսկ տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում՝ մինչև 2,400 մլն խ.մ. գազ մատակարարել Հայաստանի Հանրապետություն:

Վարկային պատմության, ֆինանսատնտեսական վիճակի վերլուծության և գործունեության որակական գնահատականների հիման վրա 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից Թողարկողին շնորհվել է ներդրումային համարվող **Բ** վարկանիշ, որը Թողարկողի պարտատոմսերով ՀՀ կենտրոնական բանկը կնքել պատրաստակամ է ռեպո գործարքներ: Իսկ դա իր հերթին մեծապես կնպաստի պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը և ներդրողների համար պարտատոմսերի ձեռք բերման լրացուցիչ խթան կհանդիսանա:

գ. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ.

Վերջին 3 տարվա համար Թողարկողի զուտ շահույթի մեծությունը ներկայացված է ստորև.

Թողարկողի ֆինանսական արդյունքները

	<i>մլն դրամ</i>		
	2005թ.	2006թ.	2007թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ	58,045	80,977	102,735
Համախառն շահույթ/(վնաս)	3,696	9,899	13,706
Գործառնական շահույթ/(վնաս)	(1,778)	504	4,454
Չուտ շահույթ/(վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	627	6,638	11,544
Չուտ շահույթ/(վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	627	6,638	11,194

Թողարկողի զուտ շահույթը կայուն աճի միտում ունի, քանի որ 2005թ. համեմատությամբ 2006թ. և 2007թ. զուտ շահույթի աճը կազմել է համապատասխանաբար շուրջ 1059% և 1785%:

Վերջին 3 տարիների կտրվածքով Թողարկողի եկամտաբերության ցուցանիշները ներկայացված են ստորև.

Թողարկողի եկամտաբերության ցուցանիշները

	2005թ.	2006թ.	2007թ.
Ակտիվների եկամտաբերություն (%)	0.35	3.0	3.9
Սեփական կապիտալի եկամտաբերություն (%)	0.5	3.7	5.9
Իրացման եկամտաբերություն (%)	1.1	8.2	10.9

Ինչպես երևում է աղյուսակից, Թողարկողի եկամտաբերության բոլոր ցուցանիշները 2005-2007թթ.-ին դրսևորել են աճի միտում: Նշված ժամանակահատվածում աճել է ինչպես Թողարկողի զուտ շահույթը, այնպես էլ՝ Թողարկողի մյուս ֆինանսական ցուցանիշները (ակտիվները, սեփական կապիտալը և իրացումը), սակայն զուտ շահույթի բացարձակ աճը եղել է ավելի մեծ, քան մյուս ցուցանիշների բացարձակ աճը, ուստի յուրաքանչյուր տարի աճել է նաև եկամտաբերությունների չափը: Այս ցուցանիշների մման աճի գործում նույնպես էական դերակատարում է ունեցել 2006 և 2007 թվականների ընթացքում Թողարկողի կողմից ստացված արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված եկամուտների մեծ ծավալը:

31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ Թողարկողի ընդհանուր պարտավորությունները կազմել են ակտիվների համապատասխանաբար 24.5%, 17.7% և 33.6%-ը:

Ոչ ընթացիկ պարտավորությունները 31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 4.5%, 2.3% և 2.0%-ը:

Ընթացիկ պարտավորությունները 31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 95.5%, 97.7% և 98.0%-ը:

31.12.2005թ.-ի դրությամբ Թողարկողի սեփական կապիտալի մեծությունը կազմել է 131,587,501.0 հազ. դրամ, 31.12.2006թ.-ի դրությամբ՝ 180,022,290.0 հազ. դրամ և 31.12.2007թ.-ի դրությամբ՝ 191,215,844.0 հազ. դրամ:

դ. Տեղեկություններ Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ.

Թողարկողի կառավարման մարմիններն են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը, տնօրենների խորհուրդը և գործադիր մարմինը (գլխավոր տնօրենը և վարչությունը):

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձինք են.

1. Գոլուբև Վալերի Ալեքսանդրի - Տնօրենների խորհրդի նախագահ,
2. Մովսիսյան Արմեն Խիկարի - Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ,
3. Կարպել Ելենա Եվգենիի - Տնօրենների խորհրդի անդամ,
4. Լավրով Գմիտրի Գեորգիի՝ Տնօրենների խորհրդի անդամ,
5. Իսայան Իոսիֆ Գեորգիի - Տնօրենների խորհրդի անդամ,
6. Կարապետյան Կարեն Վիլիելմի - Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն, Տնօրենների խորհրդի անդամ,
7. Սլիդանով Գեորգի Նիկոլայի - Տնօրենների խորհրդի անդամ,
8. Պողոմիշալսկի Անատոլի Արկադիի - Վարչության նախագահի տեղակալ,
9. Բորովիկովա Ելենա Իգորի - Վարչության անդամ,
10. Տերնյուկ Ալեքսանդր Սիլեստրի - Վարչության անդամ,
11. Գյուլումյան Բորիս Հակոբի - Վարչության անդամ,
12. Հովսեփյան Աշոտ Սիբայելի - Վարչության անդամ,
13. Ախմետովա Ելենա Իսախանի - Վարչության անդամ,
14. Սալիկով Պավել Բորիսի - Վերստուգող հանձնաժողովի նախագահ,
15. Կովալյով Վիտալի Անատոլիի - Վերստուգող հանձնաժողովի անդամ,
16. Հակոբյան Վալերի Նիկոլայի - Վերստուգող հանձնաժողովի անդամ:

ե. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, սեփականատերերի վերաբերյալ

Թողարկողի սեփականատերերն են «Գազպրոմ» ԲԲԸ-ն (72.16%), ՀՀ էներգետիկայի նախարարությունը (22.78%) և ԻՏԵԲԱ միջազգային էներգետիկ կորպորացիան (5.06%):

Թողարկողի հետ փոխկապակցված անձինք են՝

1. «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությունը, որը հանդիսանում է Թողարկողի բաժնետոմսերի 72.16%-ի սեփականատերը,
2. ՀՀ էներգետիկայի նախարարությունը, որը հանդիսանում է Թողարկողի բաժնետոմսերի 22.78%-ի սեփականատերը,
3. Թողարկողի 9 դուստր ընկերությունները, որոնց 100% բաժնեմասը պատկանում է Թողարկողին: Դրանք են՝
 - ա) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Բութան» ՍՊԸ-ն,
 - բ) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Ավտոտրանսգազ» ՍՊԸ-ն,
 - գ) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ-ն,
 - դ) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Ավտո գազ» ՍՊԸ-ն,
 - ե) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազշին» ՍՊԸ-ն,
 - զ) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Արմավիրի գազմաշ» ՍՊԸ-ն,
 - է) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Ֆակել» ՍՊԸ-ն,
 - ը) «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Ստրոլիտել» ԴԶ-ն,

- թ) «ՀայՌ-ուսագաարդ» ՓԲԸ «Ստրոյինժայրոյէկտզագ» ՍՊԸ-ն:
4. Թողարկողի բաժնետեր «Գազպրոմ» ԲԲԸ-ի հետ փոխկապակցված անձինք, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հանդիսանում է հրապարակային և բացահայտված է ընկերության www.gazprom.ru ինտերնետային կայքում:

զ. Տեղեկություններ Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ

Թողարկողի կողմից նախկինում թողարկվել և տեղաբաշխվել են փաստաթղթային անվանական սովորական բաժնետոմսեր և ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր: Թողարկողի կողմից թողարկված բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն: Պարտատոմսերը ցուցակված են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում, գրանցման համարն է՝ ASE/ARS0275, տարբերակիչ ծածկագիրը (ISIN)՝ AMHRGAB01ER4:

Տեղաբաշխված բաժնետոմսերի քանակն ազդագիրը ներկայացնելու պահին կազմում է 55,314,992 հատ՝ յուրաքանչյուրը 5,026.5 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 278,040,807,288 (երկու հարյուր յոթանասունութ միլիարդ քառասուն միլիոն ութ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ: Համաձայն Թողարկողի գրանցման վկայականի՝ Թողարկողի գործունեության ժամկետն է մինչև 2047թ. դեկտեմբերի 31-ը, հետևաբար՝ Թողարկողի կողմից թողարկված բաժնետոմսերը կմարվեն 2047թ. դեկտեմբերի 31-ին:

Տեղաբաշխված պարտատոմսերի քանակը կազմում է 100,000 հատ՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը կազմում է 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ: Տեղաբաշխված պարտատոմսերը մարվելու են 2008թ. դեկտեմբերի 25-ին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԳԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՍԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՏԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԳ ԹՎՈՒՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԳԱԳՐԻ ՄՅՈՒՄ ՍԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՋՈՒՄ:

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Ընդհանուր տեղեկություններ

ա. Թողարկողի կողմից սույն ազդագրի շրջանակում առաջարկվում են անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր:

բ. Թողարկողի Տնօրենների խորհրդի 2007թ. սեպտեմբերի 11-ի թիվ 3/47-2007 որոշմամբ պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը սահմանվել է 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ, սակայն սույն առաջարկի շրջանակում Թողարկողը ցանկանում է հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխել 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ծավալը, որը կազմում է 20,000 հատ պարտատոմս:

գ. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

դ. Թողարկվող արժեթղթերը փոխարկելի չեն:

ե. Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվանից և տևելու է 10 աշխատանքային օր:

զ. Պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20 և 21 հոդվածներով սահմանված հիմքերի առկայությունը: Մասնավորապես՝

1. Եթե տեղաբաշխողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավորվում է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Հետգնման պահանջը կարող է ներկայացվել ազդագրի լրացման հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր:
2. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել ՀՀ կենտրոնական բանկի որոշմամբ այն դեպքերում, եթե՝
 - տեղաբաշխման ընթացքում խախտվել են հրապարակային առաջարկը կարգավորող իրավական ակտերի պահանջները.
 - տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
 - ազդագիրը պարունակում է էական սխալներ եւ ապակումնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:Այս դեպքում տեղաբաշխումը կարող է շարունակվել ԿԲ-ի թույլտվությամբ՝ հայտնաբերված խախտումներն ու բացթողումները վերացնելու դեպքում:
3. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել նաև տեղաբաշխողի նախաձեռնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով, եթե առկա է ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությունը: Կասեցման ժամկետի ավարտի պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվելու դեպքում տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը եւ ներդրողներին վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռք բերման հայտերում (պայմանագրերում) ներդրողների կողմից նշված բանկային հաշիվների վրա փոխանցելու միջոցով:

է. Պարտատոմսերի դիմաց վճարումներն ընդունվելու են անկանխիկ եղանակով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում բացված 250003691186 տարանցիկ հաշվին միանվագ կերպով փոխանցումների միջոցով: Ֆիզիկական անձինք պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ կարող են միանվագ կերպով մուտքագրել

նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը պարտատոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը:

Եթե ներդրողների կողմից համապատասխան դրամական միջոցները նշված բանկային հաշվին վճարվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

ը. Պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով և անվանական արժեքով: Պարտատոմսերի մարման օր է համարվում տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 36-րդ ամսվա համապատասխան օրը (եթե նշված օրն աշխատանքային չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը): Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օր է համարվում պարտատոմսերի մարման օրը, իսկ պարտատոմսերի մարման գումարները վճարվում են պարտատոմսերի սեփականատերերին ռեեստրի փակման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ փակման օրվա ժամը 09:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավորվում է մինչև պարտատոմսերի մարման օրը հաշվարկային բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները, ինչպես նաև մինչև պարտատոմսերի մարման օրվան հաջորդող օրը հաշվարկային բանկ ներկայացնել մարման գումարներ ստացող անձանց անհրաժեշտ տվյալները:

Հաշվարկային բանկը մարման գումարները վճարում է անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Սահմանված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը պարտավորվում է վճարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ չվճարման հետևանքով առաջացած տույժերն ու տուգանքները:

Պարտատոմսերի թողարկման պայմաններով վաղաժամկետ մարում չի նախատեսված:

թ. Թողարկվող պարտատոմսերն առանց ապահովման են:

ժ. Պարտատոմսերի թողարկման մասին որոշումն ընդունվել է Թողարկողի Տնօրենների խորհրդի կողմից՝ 2007թ. սեպտեմբերի 11-ի թիվ 3/47-2007 որոշմամբ, որով հաստատվել է նաև պարտատոմսերի թողարկման ծրագիրը, որի շրջանակում թողարկողը մտադիր է տեղաբաշխել մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսեր: Սույն ազդագրի շրջանակում նախատեսվում է տեղաբաշխել միայն 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսեր:

2.2. Տեղեկություններ Պարտատոմսերի գնի վերաբերյալ

Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{N}{(1+t * R/m)} * \left\{ c * \sum_{j=1}^n \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

- P – պարտատոմսի հաշվարկված (տեղաբաշխման) գինն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,
- R – պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքն է,
- t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
- m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
- c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
- n – մնացած արժեկտրոնների վճարումների քանակն է, ընդ որում n արժեքը պարտատոմսի շրջանառության ընթացքում փոփոխվում է ըստ նվազման, այսինքն՝ 6-1 միջակայքում:
- j – արժեկտրոնի հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև

վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ j արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ն արժեքները (երբ n-ը ընդունում է 1 արժեք, j-ն նույնպես ընդունում է 1 արժեքը):

Սույն առաջարկի շրջանակում, որպես պարտատոմսերի գրավչության բարձրացման միջոց, Թողարկողը պարտատոմսերը տեղաբաշխում է 10% եկամտաբերության (զեղչով վաճառելու) պայմանով՝ չփոփոխելով արժեկտրոնային եկամտաբերության տոկոսադրույքի մակարդակը (տարեկան 9.5%): Այսինքն՝ պարտատոմսերի տեղաբաշխման գնի որոշման բանաձևում R-ը (պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքը) հաշվարկվելու է որպես 5%, իսկ c-ն (կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույք) հաշվարկվելու է որպես 4.75%: Թողարկողի նման մարտավարությունը պայմանավորված է Թողարկողի Տնօրենների խորհրդի 2007թ. սեպտեմբերի 11-ի թիվ 3/47-2007 որոշման ընդունման պահից մինչև ՀՀ կենտրոնական բանկ սույն ազդագրի ներկայացման պահը ֆինանսական շուկայի բոլոր հատվածներում գրանցված տոկոսադրույքների աճով, մասնավորապես՝ պետական երկարաժամկետ պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքները և ՀՀ կենտրոնական բանկի կողմից առաջարկվող ռեպո տոկոսադրույքները գրանցել են ավելի քան 2% աճ: Վերջինս էլ էականորեն նվազեցնում է Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերը 9.5%-ով տեղաբաշխելու ներդրումային գրավչությունը: Տեղաբաշխման արդյունքում Թողարկողի կողմից ստացված ամբողջ հասույթը նվազագույնը կկազմի 987,310,769.8 ՀՀ դրամ (մեկ պարտատոմսի տեղաբաշխման նվազագույն գինը կկազմի 49,365.5 ՀՀ դրամ, որը կհաշվարկվի տեղաբաշխման սկսման օրվա համար):

2.3. Տեղեկություններ Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ

Պարտատոմսերի դիմաց նախատեսվում է վճարել արժեկտրոնային եկամուտ՝ տարեկան 9.5% տոկոսադրույքով: Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ դրամով, պարտատոմսի անվանական արժեքի 4.75%-ի չափով:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ ռեեստրի փակման օրեր են համարվում պարտատոմսերի տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամսվա համապատասխան օրերը: Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը փակման օրվա ժամը 09:00-ի դրությամբ):

Արժեկտրոնները վճարվում են անկանխիկ եղանակով՝ հաշվարկային բանկի կողմից, որը համապատասխան գումարները Թողարկողի հաշվից փոխանցում է սեփականատերերի համապատասխան բանկային հաշիվներին: Որպես հաշվարկային բանկ հանդես է գալու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

Որպես պարտատոմսերից ստացվող եկամուտ դիտարկվում է նաև պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերը զեղչով վաճառվելու արդյունքում պարտատոմսի անվանական արժեքի և տեղաբաշխման գնի տարբերությունը (օրինակ՝ տեղաբաշխման սկսման օրվա համար զեղչի չափը կկազմի 634.5 ՀՀ դրամ), որը տեղաբաշխման ժամանակահատվածում փոփոխական է՝ կախված այն հանգամանքից, թե տեղաբաշխման որ օրվա ընթացքում է կատարվում պարտատոմսերով գործարք (ըստ տեղաբաշխման ժամկետի՝ զեղչի չափը փոքրանում է), մասնավորապես՝ տեղաբաշխման սկսման օրվա համար տեղաբաշխման գինը մեկ պարտատոմսի համար կազմում է 49,365.5 ՀՀ դրամ:

Պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը պարտավորվում է վճարել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տույժերն ու տուգանքները:

2.4. Տեղեկություններ սահմանափակումների վերաբերյալ

ա. Թողարկողի կանոնադրությամբ և պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պարտատոմսերի թողարկման կամ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանված սահմանափակումներ չկան:

բ. Բաժանորդագրությունների նվազագույն մեծություն սահմանված չէ, իսկ առավելագույն մեծությունը սահմանափակված է բաժանորդագրության դրված պարտատոմսերի ծավալով, այն է՝ թողարկման ծավալի 50%-ը, որը կազմում է 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 10,000 հատ պարտատոմս:

2.5. Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձինք

Համաձայն Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 20.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման թիվ IB/08-002 պայմանագրի 2.2.5. կետի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կազմակերպում է պարտատոմսերի տեղաբաշխումը երաշխավորված եղանակով: Նշված պայմանագրով իրեն վերապահված իրավասության շրջանակներում Բանկը 05.06.2008թ. կնքված Տեղաբաշխման խմբի ստեղծման և գործունեության մասին պայմանագրով ձևավորել է տեղաբաշխման խումբ, որի կազմում մտնում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ որպես գլխավոր տեղաբաշխող, և «ԱՐՑԱԽ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն և «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն՝ որպես տեղաբաշխման խմբի անդամներ: Համաձայն այդ պայմանագրի՝ պարտատոմսերի ծավալի 50%-ը՝ 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, տեղաբաշխվելու է տեղաբաշխման խմբի անդամների միջև: Ընդ որում՝ տեղաբաշխման խմբի անդամները կարող են լավագույն ջանքերի սկզբունքով (առանց պարտատոմսեր ձեռք բերելու լրացուցիչ պարտավորությունների) մասնակցել մնացած 500 մլն ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերի ազատ բաժանորդագրությանը: Տեղաբաշխման խմբի անդամների համար նախատեսված է պարզևավճար՝ իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի 0.2%-ի չափով:

Տեղաբաշխման խմբում ընդգրկված անձանց վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Ֆիրմային անվանումները	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	«ԱՐՑԱԽ ԲԱՆԿ» ՓԲԸ	«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ
Կազմակերպական իրավական ձևը	Փակ բաժնետիրական ընկերություն	Փակ բաժնետիրական ընկերություն	Բաց բաժնետիրական ընկերություն
Փոստային հասցեն և կապի միջոցները	ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2, հեռ. 52-95-93, e-mail: info@armswissbank.am , www.armswissbank.am	ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Կնունյանցների 25, հեռ. (374 479) 71249, 52705 www.artsakhbank.am	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1 հեռ. 53 87 00, e-mail: info@armenbrok.com www.armenbrok.com
Չեռք բերման ծավալը և	5,000 հատ պարտատոմսեր (ընդհանուր ծավալի 25%) + բաժանորդագրությամբ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի չտեղաբաշխված ծավալ	2,000 հատ պարտատոմսեր (ընդհանուր ծավալի 10%):	3,000 հատ պարտատոմսեր (ընդհանուր ծավալի 15%):
Պարզևատման չափը	Իր կողմից ձեռք բերվող և բաժանորդագրության դրված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.5%-ի չափով: Տեղաբաշխման անդամների կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր ծավալի 0.3%-ի չափով (որպես գլխավոր տեղաբաշխող):	Իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի և իր միջոցով բաժանորդագրության ընթացքում տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.2%-ի չափով:	Իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի և իր միջոցով բաժանորդագրության ընթացքում տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 0.2%-ի չափով:
Նրանց կողմից առաջարկվող գինը	Տեղաբաշխման ընթացքում Գլխավոր տեղաբաշխողի և տեղաբաշխման խմբի անդամների կողմից տեղաբաշխման են ենթակա միայն ազատ բաժանորդագրության		

Ֆիրմային անվանումները	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	«ԱՐՑԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ	«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ
և քանակը	դրված 500,000,000 դրամի ընդհանուր ծավալով 10,000 հատ պարտատոմսերը, որոնց գինը սահմանվում է սույն ազդագրի 2.2. կետում նշված բանաձևով:		

2.6. Տեղեկություններ բաժանորդագրությունների վերաբերյալ

ա. Հաշվի առնելով այն, որ Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր ծավալի 50%-ը տեղաբաշխվում է տեղաբաշխողների խմբի միջոցով, բաց բաժանորդագրության եղանակով նախատեսվում է տեղաբաշխել մնացած 10,000 հատ պարտատոմսերը՝ 500 (հինգ հարյուր) մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

Հիմք ընդունելով Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 20.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման թիվ IB/08-002 պայմանագրի 2.2.5. կետը՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից (Գործադիր տնօրենի 06.06.2008թ. թիվ 159 Լ հրաման) հաստատվել է «Հայֆուսգազարդ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության ընթացակարգը, որը ներկայացվում է որպես սույն ազդագրի Հավելված:

Բաժանորդագրությունը սկսվում է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրվանից և տևում 10 աշխատանքային օր: Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացնում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն: Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2), նրա ինտերնետային կայքից (www.armswissbank.am), ինչպես նաև Թողարկողի ինտերնետային կայքից (www.armrusgasprom.am):

Ներդրողները բաժանորդագրության միջոցով կարող են պարտատոմս ձեռք բերել՝ Բաժանորդագրության ընթացակարգին կից հաստատված հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկին ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00-ն:

Եթե տեղի է ունեցել պարտատոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են առաջնահերթության կարգով, իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված հայտերում ձեռք բերվող պարտատոմսերի ծավալը գերազանցում է տվյալ օրվա ընթացքում չվաճառված պարտատոմսերի ծավալին, ապա՝ մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական պարտատոմսեր, ապա դրանք ենթակա են կլորացման թվաբանական կլորացման եղանակով: Չբավարարված պարտատոմսերի համապատասխան դրամական միջոցները «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

բ. Ներդրողները պարտատոմսերի հայտերը մուտքագրելուց հետո 9 ժամվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր եղանակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչել իրենց բաժանորդագրությունները՝ եթե մինչև այդ ներդրողների հայտերը չեն բավարարվել և տվյալ հայտերի հիման վրա գործարքներ չեն կատարվել:

գ. Եթե ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և ներկայացվում է նոր հայտ:

Հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա հայտի հետ կանչման ամսաթվից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա է վերադարձման՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

2.7. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելած):

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար):

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում՝ վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես՝ եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելած և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

ՀՀ-ում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից կապիտալի հավելածից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով: Հաշվի առնելով այն, որ պարտատոմսերը տեղաբաշխվելու են 10% եկամտաբերության պայմանով, այսինքն՝ անվանական արժեքից ցածր գնով, հետևաբար որպես եկամուտ կդիտարկվի նաև պարտատոմսերի անվանական արժեքի և տեղաբաշխման գնի տարբերությունը, որը ևս ֆիզիկական անձանց դեպքում կհաշվառվի համախառն եկամտում և կհարկվի 10% դրույքաչափով: Մասնավորապես՝ տեղաբաշխման առաջին օրը պարտատոմսեր ձեռք բերելու դեպքում 1 պարտատոմսի համար զեղչի չափը կկազմի 634.5 ՀՀ դրամ, որի նկատմամբ պարտատոմսերի մարման ժամանակ կառաջանա 63.45 դրամ հարկային պարտավորություն:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Թողարկողը:

2.8. Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները.

1. Սույն ազդագրի 2.1. կետի ը) ենթակետում և 2.3. կետում նշված ժամկետներում ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և մարման գումարը:
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնների և/կամ մարման գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ստանալ ՀՀ օրենսդրությամբ նման դեպքերում նախատեսված տույժերն ու տուգանքները:
3. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:
4. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից:

5. Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով:
6. Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
7. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը պարտավորվում են ստանձնել հետևյալ պարտականությունները՝

1. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուի մոտ բացել արժեթղթերի անձնական հաշիվ:
2. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը որևէ բանկում բացել բանկային հաշիվ:
3. Կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

2.9. Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն իրականացնելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (այսուհետև՝ ՀԿԳ): Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Սկրտչյան 5բ, հեռ.՝ (+374 10) 566-446, 520-978, www.cda.am:

Բացի ՀԿԳ-ից, պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել նաև օրենքով սահմանված կարգով լիցենզավորված այլ պահառուի մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

2.10. Տեղեկություններ շուկա ստեղծողի վերաբերյալ

Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 20.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման թիվ IB/08-002 պայմանագրի 2.2.8. կետի համաձայն պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով ՀՖԲ-ում պարտատոմսերով առևտրի ընթացքում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հանդես է գալու որպես շուկա ստեղծող՝ ՀՖԲ-ի կանոններով սահմանված կարգով:

2.11. Թողարկման նպատակը

Պարտատոմսերը թողարկվում են գազամատակարարման վերականգնման ֆինանսավորման նպատակով: Մասնավորապես՝ Թողարկողը նախատեսում է պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցներն ուղղել գազաբաշխման ցանցի ընդլայնման՝ հատկապես պոտենցիալ բաժանորդների միացման աշխատանքների իրականացմանը՝ նրանց բնակարաններում տեղադրելով հաշվիչներ և անցկացնելով գազաբաշխման ցանց:

3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3.1. Ընդհանուր տեղեկություններ

3.1.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

ա. Թողարկողի ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝	Հայ-Ռուսական «Հայ-Ռուսագազարդ» փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝	Армянско-Российское закрытое акционерное общество «АрмРосгазпром»
անգլերեն՝	Armenian-Russian Closed Type Joint-Stock Company «ArmRusgasprom»

Թողարկողի կրճատ անվանումն է՝

հայերեն՝	«Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ
ռուսերեն՝	ЗАО «АрмРосгазпром»
անգլերեն՝	Closed Type Joint-Stock Company «ArmRusgasprom»

բ. Թողարկողը հիմնադրվել է ՀՀ էներգետիկայի նախարարության, «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության և «Իտերա» միջազգային էներգետիկական կորպորացիայի կողմից՝ 1997թ. օգոստոսի 30-ին կնքված հիմնադիր պայմանագրի, ՀՀ գործող օրենսդրության հիման վրա՝ համաձայն ՀՀ կառավարության և «Գազպրոմ» ռուսական բաժնետիրական ընկերության միջև 1997թ. հունվարի 18-ին Մոսկվայում կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում գազամուղների կառուցման և շահագործման, Հայաստանի Հանրապետության տարածքով ռուսական բնական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրա տարանցման մասին» համաձայնագրի:

Թողարկողի կազմակերպական-իրավական ձևն է՝ փակ բաժնետիրական ընկերություն: Թողարկողի գործունեության ընթացքում նրա անվանումը և կազմակերպական-իրավական ձևը փոփոխություններ չեն կրել:

Համաձայն ՀՀ պետական ռեգիստրի 2000թ. սեպտեմբերի 29-ի տեղեկանքի՝ 29.09.2000թ. Թողարկողին է միացել «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ն (գրանցման համար՝ 264.110.04749, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Գյուլբենիկյան փող 38):

Համաձայն «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «ԳԱԶԱՐԳՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների, «ՌԻՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների, «ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԵՏԱՂԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների և Թողարկողի բաժնետերերի 05.05.2006թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման՝ կատարվել է «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «ԳԱԶԱՐԳՍԵՐՎԻՍ», «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «ՌԻՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» և «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԵՏԱՂԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միացում Թողարկողին:

Թողարկողը հանդիսանում է «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «ԳԱԶԱՐԳՍԵՐՎԻՍ» ՍՊԸ (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 28.06.1999թ., գրանցման թիվ՝ 264.110.04750, վկայական 02 Ա 045581, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի թիվ 43), «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «ՌԻՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 28.06.1999թ., գրանցման թիվ՝ 282.110.03628, վկայական 02 Ա 045583, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Նոր-Նորքի 8-րդ զանգված, նախկին «Անի» մտուր-մանկապարտեզի շենք) և «Հայ-Ռուսագազարդ» ՓԲԸ «ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԵՏԱՂԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 30.06.1999թ., գրանցման թիվ՝ 282.110.03631, վկայական 02 Ա 045589, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ռուբինյանց 27/3) իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

գ. Թողարկողի առաջին գրանցման ամսաթիվն է 30.12.1997թ., գրանցման համարն է՝ 264.120.04128, գրանցման վկայականի համարը՝ 039934: Թողարկողի գործունեության իրականացման ժամկետն է՝ մինչև 2047թ. դեկտեմբերի 31-ը: Թողարկողը գրանցված է Երևանում, գրանցող երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

3.1.2. Տեղեկություններ ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ

Թողարկողը արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերում կամ միություններում մասնակցություն չունի:

3.1.3. Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք

ա. Թողարկողի 2005թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Ամերիա» փակ բաժնետիրական ընկերությունը.

հասցե՝ ՀՀ., ք. Երևան 0019, Բաղրամյան պող. 6-2,
հեռախոս՝ + 374 (10) 524 040,
ֆաքս՝ + 374 (10) 546 800,
էլ. փոստ՝ ameria@ameria.com:

Թողարկողի 2006թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Ինֆոկոնսալտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը.

հասցե՝ ՀՀ., ք. Երևան 0001, Աբովյան 15,
հեռախոս՝ + 374 (10) 565 385:

Թողարկողի 2007թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Քյավառ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը.

հասցե՝ ՀՀ., ք. Գավառ, Սայադյան 27,
հեռախոս՝ (0264) 2 35 75:

բ. Վերջին 3 տարվա ընթացքում Թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու կամ աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

3.1.4. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

ա. Ազդագրում փորձագետների կամ խորհրդատուների կողմից տրված կարծիքներ չկան:

Թողարկողին պարտատոմսերի թողարկման նախապատրաստման, այդ թվում՝ պարտատոմսերի ազդագրի կազմման հարցերում խորհրդատվական ծառայություններ է մատուցել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ համաձայն 20.05.2008թ. կնքված IB/08-002 պայմանագրի:

բ. Ազդագրում երրորդ անձանցից ձեռք բերված տեղեկություններ ներառված չեն:

3.1.5. Տեղեկություններ երաշխավորողի վերաբերյալ

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունները որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից երաշխավորված չեն:

3.1.6. Կանոնադրական կապիտալը

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 278,040,807,288 (երկու հարյուր յոթանասուներեք միլիարդ քառասուն միլիոն ութ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, որը Թողարկողի բաժնետերերի կողմից ամբողջությամբ վճարված է: Կանոնադրական կապիտալը կազմված է 55,314,992 (հիսունհինգ միլիոն երեք հարյուր տասնչորս հազար ինը հարյուր իննսուներկու) հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,026.5 ՀՀ դրամ անվանական արժեքով: Թողարկողի բաժնետերերի կառուցվածքը հետևյալն է.

- **ՀՀ էներգետիկայի նախարարությանը** պատկանում է 12,600,000 հատ սովորական անվանական բաժնետոմս՝ 63,333,900,000 (վաթսուներեք միլիարդ երեք հարյուր երեսուներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է կանոնադրական կապիտալի **22.78%-ը**:

- «Գազարոմ» ԲԲԸ-ին պատկանում է 39,914,992 հատ սովորական անվանական բաժնետոմս՝ 200,632,707,288 (երկու հարյուր միլիարդ վեց հարյուր եռեսուներկու միլիոն յոթ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է կանոնադրական կապիտալի 72.16%-ը:
- «ԻՏԵՐԱ»-ին պատկանում է 2,800,000 հատ սովորական անվանական բաժնետոմս՝ 14,074,200,000 (տասնչորս միլիարդ յոթանասունչորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է կանոնադրական կապիտալի 5.06%-ը:

Թողարկողի կանոնադրական կապիտալը հիմնադրման պահին կազմել է 10 մլն ԱՄՆ դոլար, որը 1997թ. օգոստոսի 15-ի դրությամբ համարժեք է եղել 5,026,500,000 ՀՀ դրամի: Կանոնադրական կապիտալի հետագա փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

N	Փոփոխության ամսաթիվը	Կան. կապ. մեծությունը (ՀՀ դրամ)	Բաժնետոմսերի քանակը	Փոփոխության հիմքը
1.	30.08.1997թ. (հիմնադրման պահին)	5,026,500,000	1,000,000	Կանոնադրական կապիտալի սկզբնական մեծությունը սահմանվել է 30.08.1997թ. կնքված հիմնադիր պայմանագրով:
2.	գրանցված 05.08.1998թ.	140,742,000,000	28,000,000	Փոփոխությունը հաստատվել է 12.07.1998թ. բաժնետերերի ժողովի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ զազատրանսպորտային համակարգի հիմնական միջոցները Թողարկողին հանձնելու և նրա վճարման պայմանների մասին համաձայնագիրը:
3.	գրանցված 21.11.2006թ.	196,938,270,000	39,180,000	05.09.2006թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից որոշվել է «Գազարոմ» ԲԲԸ-ի օգտին լրացուցիչ տեղաբաշխել 11,180,000 հատ բաժնետոմս՝ ավելացնելով կանոնադրական կապիտալը 56,196,270,000 ՀՀ դրամով:
4.	գրանցված 07.04.2008թ.	182,537,307,288	36,314,992	25.01.2008թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ մարվել են Թողարկողին պատկանող 2,865,008 հատ բաժնետոմսերը՝ 14,400,962,712 ՀՀ դրամ անվանական արժեքով:
5.	գրանցված 28.04.2008թ.	278,040,807,288	55,314,992	25.01.2008թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից որոշվել է «Գազարոմ» ԲԲԸ-ի օգտին լրացուցիչ տեղաբաշխել 19,000,000 հատ բաժնետոմս՝ ավելացնելով կանոնադրական կապիտալը 95,503,500,000 ՀՀ դրամով:

Թողարկողի 05.09.2006թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկված 11,180,000 հատ սովորական անվանական բաժնետոմսերից տեղաբաշխվել են 8,314,992-ը: Մնացած 2,865,008 հատ չվճարված բաժնետոմսերը գտնվել են Թողարկողի տնօրինման ներքո՝ մինչև 2008թ. հունվարի 25-ին այդ բաժնետոմսերի մարման վերաբերյալ համապատասխան որոշման ընդունումը:

Թողարկողի կողմից կանոնադրական կապիտալի ավելացման մտադրությունների վերաբերյալ տեղեկություններ չկան:

3.1.7. Տեղեկություններ Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ

Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ օպցիոններ առկա չեն:

3.2. Տեղեկություններ Թողարկողի գործունեության վերաբերյալ

3.2.1. Ռիսկային գործոններ

Թողարկողի պարտատոմսերում կատարվող ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ, որոնց ի հայտ գալը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի գործառնությունների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա: Սա իր հերթին կարող է հանգեցնել տվյալ պարտատոմսերի շուկայական գնի և ներդրումային որակի համապատասխան նվազեցման: Հետևաբար, մինչև սույն ազդագրի շրջանակում առաջարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարելը (մինչև պարտատոմսեր գնելու մասին որոշում կայացնելը), ներդրողներին խորհուրդ է տրվում մանրակրկիտ կերպով ուսումնասիրել սույն ազդագրում զետեղված տեղեկությունները և, անհրաժեշտության դեպքում, ռիսկերի ճիշտ գնահատման նպատակով խորհրդակցել խորհրդատուների հետ:

Ստորև ներկայացվում են պարտատոմսերում կատարվող ներդրումների և Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկերի նկարագիրը, որոնք սակայն չեն կարող համարվել ամբողջական և ներառել բոլոր հնարավոր ապագա զարգացումները, որոնք ազդեցություն կունենան պարտատոմսերի գների և ռիսկայնության մակարդակի վրա:

- 1) Թողարկողի ֆինանսական գործունեության արդյունքներն էապես կախվածություն ունեն չեն հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Կարգավորող հանձնաժողով) կողմից իրականացվող բնական գազի սակագնային քաղաքականությունից: Տվյալ քաղաքականության փոփոխությունները, որոնք կարող են նվազեցնել բնական գազի և/կամ Թողարկողի ծառայությունների սակագները, կարող են բացասաբար անդրադառնալ Թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչն իր հերթին կարող է հանդիսանալ թողարկվող արժեթղթերի ներդրումային որակի նվազեցման պատճառ: Սակայն առաջիկա տարիների համար սակագնի նվազեցման սպասումները քիչ հավանական են, քանի որ 2008 թվականի մայիսի 1-ից բնական գազի սակագները բարձրացվել են, ինչը դրականորեն կազդի Թողարկողի ֆինանսական վիճակի վրա:
- 2) Թողարկողի գործունեությունը բնական գազի ներկրման ոլորտում խիստ կախված է տարբեր ֆորս-մաժորային իրադարձություններից (բնական և տեխնոգեն աղետներ) և տարածաշրջանային քաղաքական իրավիճակի վատթարացումից (մասնավորապես՝ տարանցիկ երկրների կամ գազ արտահանող երկրների կամ այդ երկրների և Հայաստանի միջև քաղաքական և տնտեսական հարաբերությունների դադարեցում, խզում, պատարեզմական գործողություններ և այլն): Նման իրադարձության ի հայտ գալը կհանգեցնի Թողարկողի կողմից Հայաստանի Հանրապետություն բնական գազի ներկրման խոչընդոտմանը կամ սահմանափակմանը: Սակայն հարկ է նշել, որ նման իրադարձության ի հայտ գալու դեպքում կարճաժամկետ հեռանկարում այդ խնդիրը մասնակիորեն լուծված կարելի է համարել, քանի որ Թողարկողի կողմից մշտապես որոշակի քանակությամբ գազ է պահեստավորվում Աբովյանի պահեստարանում:
- 3) Բնական գազի ներկրման ոլորտում Թողարկողը մատակարարների ընտրության խիստ սահմանափակ հնարավորություններ ունի: Նման կախվածությունը մատակարարներից պարունակում է որոշակի ռիսկեր՝ կապված համապատասխան միջպետական, գերատեսչական և այլ պայմանագրային փոփոխությունների հետ: Սակայն, հաշվի առնելով մատակարարների և Թողարկողի միջև առկա փոխկապվածությունը, մոտակա տարիներին նման ռիսկի ի հայտ գալու հավանականությունը փոքր է:
- 4) ՀՀ ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումները կարող են բացասաբար ազդել պարտատոմսերի շահութաբերության ցուցանիշների վրա: Նույնը վերաբերվում է նաև ՀՀ դրամի փոխարժեքի տատանումներին, քանզի Թողարկողը ներկրված բնական գազի դիմաց վճարումներն իրականացնում է ԱՄՆ դոլարով: Ընդհանուր առմամբ, սղաճի ավելացմանը նպաստող բոլոր տեսակի գործոնները կարող են նվազեցնել պարտատոմսերի ներդրումային որակը:

5) ՀՀ-ում կորպորատիվ պարտատոմսերի շուկան դեռևս գտնվում է կազմավորման փուլում, և բացակայում է այս գործիքների ակտիվ երկրորդային շուկան: Հետևապես, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել իրենց համար շահավետ գնով: Իրացվելության ռիսկի աստիճանը նվազեցնելու նպատակով Թողարկողի կողմից պարտատոմսերը կցուցակվեն ֆոնդային բորսայում և այդ պարտատոմսերով ֆոնդային բորսայում կկատարվեն պարտադիր գնանշումներ:

3.2.2 Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը

ա. Թողարկողի հիմնական գործունեությունը կենտրոնացված է ՀՀ տարածքում զազամատակարարման համակարգում: Թողարկողը ՀՀ բնական գազի ներկրման և բաշխման շուկայում ունի մենաշնորհային դիրք և հանդիսանում է համապատասխան գործունեության լիցենզիաներ ունեցող միակ ընկերությունը, իսկ գազի փոխադրումը Թողարկողը կազմակերպում է իր դուստր ընկերության՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ի միջոցով: Ուստի Թողարկողի գործունեությունը, ի տարբերություն մրցակցային հատվածում ծավալվող գործունեության տեսակների, գտնվում է ավելի խիստ կարգավորման և վերահսկողության դաշտում: Թողարկողի գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքն է՝ համաձայն որի զազամատակարարման համակարգը հանդիսանում է ՀՀ էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ մասերից մեկը: Թողարկողի գործունեությունը կարգավորող մարմինն է Կարգավորող մարմին, որի հիմնական խնդիրներից մեկն է՝ զազամատակարարման բնագավառում սպառողներին հիմնավորված սակագներով հուսալի և անվտանգ բնական գազի մատակարարման երաշխիքների ապահովումը:

Թողարկողի կարգավորման բնագավառը կառուցվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ կարգավորման հետևյալ միջոցների վրա.

- գործունեության լիցենզավորում, լիցենզիայի պայմանների սահմանում և դրանց վերահսկում
- կարգավորող մարմնին հաշվետվություն ներկայացնելու նպատակով՝ լիցենզիա ստացած անձի համար հաշիվների, ենթահաշիվների ներդրումը՝ համաձայն ազգային հաշվային պլանի, հաշվապահական հաշվառմանն առնչվող օրենքների ու իրավական ակտերի
- կարգավորող սակագների սահմանումը
- գործունեության լիցենզիա ստացած անձանց միջև բնական գազի մատակարարման (ծառայությունների մատուցման), ինչպես նաև սպառողների հետ կնքվող բնական գազի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցումը
- շուկայի կանոնների և կարգերի սահմանումը
- կարգավորող մարմնի կողմից իր իրավասության սահմաններում իրավական ակտերի սահմանումը, կատարման վերահսկողությունը
- սպասարկման որակի նկատմամբ պահանջների սահմանումը
- գործունեության լիցենզիա ստացած անձի կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրումը հետագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով:

Թողարկողը բնական գազի ներկրումն իրականացնում է Ռուսաստանի Դաշնությունից: Միակ մատակարար ընկերությունը ռուսական «Գազպրոմէքսպորտ» ՍՊԸ-ն է, որն ամբողջությամբ պատկանում է «Գազպրոմ» ԲԲԸ-ին: Համաձայն Թողարկողի և «Գազպրոմէքսպորտ» ՍՊԸ-ի միջև կնքված բնական գազի առուվաճառքի մասին պայմանագրի՝ բնական գազի սեփականության իրավունքը մատակարարից Թողարկողին է անցնում բնական գազի՝ Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական սահմանն անցնելու պահից (այսինքն՝ բնական գազը մատակարարվում է DAF-Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական սահմանը պայմանով): ՀՀ տարածքում բնական գազի փոխադրումն իրականացնում է Թողարկողին պատկանող «Տրանսգազ» ՍՊԸ-ն (որը փոխադրման գործունեություն է իրականացնում ՀՀ բնական մենաշնորհները կարգավորող հանձնաժողովի 22.09.2003թ. թիվ 0111 լիցենզիայի հիման վրա), իսկ իրացումն իրականացնում է Թողարկողը՝ իր զազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղերի (ԳԳՄ) միջոցով:

«Տրանսգազ» ՍՊԸ-ն բնական գազի փոխադրումն իրականացնում է Թողարկողին սեփականության իրավունքով պատկանող գազափոխադրման համակարգի միջոցով (ՀՀ գազատրանսպորտային քարտեզը ներկայացված է ստորև), որի վերաբերյալ Թողարկողի և «Տրանսգազ» ՍՊԸ-ի միջև 01.07.2007թ. կնքվել է Թողարկողի գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր՝ համաձայն որի, գազափոխադրման նպատակով Թողարկողի կողմից «Տրանսգազ» ՍՊԸ-ի հավատարմագրային կառավարմանն է հանձնվել գազափոխադրման համար անհրաժեշտ գույքը:


ՀՀ գազատրանսպորտային քարտեզ



Սպառողներին բնական գազի մատակարարումը, գազի ֆիկսացումը, գազամատակարարման ցանցի վերականգնումը, գազամատակարարման ցանցին գազասպառման համակարգերի միացումը, գործարկումն ու տեխնիկական սպասարկումն իրականացվում են Կարգավորող հանձնաժողովի 08.07.2005թ. թիվ 95 Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ»-ով, ինչպես նաև Թողարկողի և բաժանորդի միջև կնքված՝ գազամատակարարման, գազի ֆիկսացման, միացման կամ տեխնիկական սպասարկման պայմանագրերով սահմանված կարգով և պայմաններով:

Բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման, վերականգնման, վերանորոգման և փոխարինման աշխատանքները կարող է կատարել Թողարկողը՝ անձամբ կամ պայմանագրով հանձնարարել Հանձնաժողովի հետ համաձայնեցված չափորոշիչներով ընտրված այլ սպասարկող անձի, մասնավորապես՝ համաձայն 02.07.2007թ. կնքված հանձնարարության պայմանագրի, այն պատվիրված է «ԷՅ-Ի-Ջի-Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Թողարկողի կողմից Հայաստան ներկրվող և իրացվող բնական գազի ծավալներում արձանագրվում է դինամիկ աճ: Այսպես, 2007թ.-ին ՀՀ-ում իրացվել է 1869.3 մլն խմ բնական գազ: Նշված ցուցանիշը շուրջ 18%-ով գերազանցում է 2006թ.-ին իրացված բնական գազի ծավալները: Իրացման ցուցանիշներում առկա դրական միտումները




■ բնական գազի իրացման ծավալները (մլն.խ.մ)

պայմանավորված են ինչպես երկրում գրանցվող տնտեսական աճով, այնպես էլ Թողարկողի կողմից վարվող էքստենսիվ և ինտենսիվ զարգացման քաղաքականությամբ: Գծապատկերում ներկայացված են Թողարկողի կողմից իրացված բնական գազի ծավալները՝ 2003-2007 թվականներին:

ՀՀ տարածքում բնական գազի սպառողների շրջանակը կարելի է բնութագրել 2 հիմնական խմբերով՝ բնակչությունը և տնտեսության արտադրական հատվածը: Բնակչության կողմից բնական գազի սպառման ծավալները թերևս սպառված ընդհանուր ծավալի մեջ գերակշիռ մաս չեն կազմում, սակայն

տարեցտարի դրա կազմում նկատվում է բնակչության կողմից սպառված բնական գազի ծավալների աճ, մասնավորապես՝ եթե 2003թ. բնակչության կողմից սպառված բնական գազի ծավալները կազմում էին սպառված ընդհանուր ծավալի շուրջ 15%-ը, ապա 2007թ. այդ ցուցանիշը կազմել է արդեն շուրջ 28.5%:



Վերջինս բացատրվում է ՀՀ քաղաքային և ոչ քաղաքային բնակավայրերում Թողարկողի կողմից իրականացվող էքստենսիվ գազիֆիկացման աշխատանքներով, ինչպես նաև բնակչության կողմից բնական գազի սպառման ծավալների աճով: Մասնավորապես՝ Թողարկողի գազաբաշխման համակարգում 15.04.2008թ. դրությամբ գրանցված են եղել 530 հազ. հաճախորդներ:

Ինչ վերաբերվում է արտադրական հատվածում բնական գազի սպառման ծավալներին, ապա այստեղ նույնպես գրանցվել է սպառման ծավալի աճ՝ հիմնականում ի հաշիվ արդյունաբերության ոլորտում և ԱԳԼՃԿ-ների կողմից բնական գազի սպառման ծավալների աճի, մասնավորապես՝ 2007 թվականին 2003 թվականի համեմատությամբ այդ ոլորտներում սպառված բնական գազի ծավալներն աճել են համապատասխանաբար շուրջ 2 և 3 անգամ:

2008թ. և հետագա տարիներին հանրապետությունում սպասվում է բնական գազի սպառման ծավալների դինամիկ աճ: Վերջինս պայմանավորված է դարձյալ տնտեսության սպասվող աճով և Թողարկողի կողմից բնական գազի իրացման ուղղությամբ վարվող քաղաքականությամբ:

Վարկային պատմության, ֆինանսատնտեսական վիճակի վերլուծության և գործունեության որակական գնահատականների հիման վրա 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից Թողարկողին շնորհվել է ներդրումային համարվող **Բ** վարկանիշ, համաձայն որի Թողարկողի պարտատոմսերով ՀՀ կենտրոնական բանկը պատրաստակամ է ռեպո գործարքներ կնքել: Իսկ դա իր հերթին մեծապես կնպաստի պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը և ներդրողների համար կհանդիսանա պարտատոմսերի ձեռքբերման լրացուցիչ խթան:

բ. Թողարկողի կողմից բնական գազի իրացման ծավալների վերաբերյալ մանրամասնությունները ներկայացված են նախորդ կետում:

Ինչ վերաբերվում է Թողարկողի կողմից ՀՀ ներկրված բնական գազի իրացման գնին, ապա վերջինս սահմանվում է կարգավորող մարմնի կողմից՝ հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ և 22-րդ հոդվածներով իրեն վերապահված լիազորությունները: Կարգավորող մարմնի կողմից իրացման սակագների սահմանման ժամանակ բնության են առնվում հետյալ հիմնական սկզբունքները՝

- լիցենզիայի պայմաններին համապատասխան լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը
- ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը

- հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը
- սպառման ծավալով պայմանավորված սակագների տարբերակումը
- հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը
- ՀՀ կառավարության կողմից հաստատված էներգետիկայի զարգացման ծրագրով նախատեսված էներգատեղակայանքների կոնսերվացման և պահպանման ծախսերի ներառումը
- հիմնավորված տեխնիկական և առևտրային կորուստների ներառումը
- օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Կարգավորող հանձնաժողովն իր 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 298 Ն որոշմամբ Թողարկողի կողմից բնական գազի իրացման սակագինը սահմանել է՝

ա) ամսական մինչև 10.0 հազար նորմալ խորանարդ մետր սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի սակագինը՝ 84 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) ամսական 10.0 հազար նորմալ խորանարդ մետր և ավելի սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P = 153.26 * E,$$

որտեղ՝

P - ն 10,0 հազար նորմալ խորանարդ մետր և ավելի սպառողներին վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազար խմ)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

E - ն յուրաքանչյուր հաշվետու ամսվա նախորդող ամսվա 25-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված մեկ ԱՄՆ դոլարի փաստացի հաշվարկային փոխարժեքի մեծությունն է:

2005-2007թթ. Թողարկողի կողմից բնական գազի իրացման սակագները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

1000 խորանարդ մետր բնական գազի սակագին	01.01.2005.- 10.04.2006թթ.	10.04.2006- 01.01.2007թթ.	01.01.2007թ. մինչ օրս
<i>մինչև 10.0 հազար նորմալ խորանարդ մետր սպառողներին</i>	59,000 ՀՀ դրամ	90,000 ՀՀ դրամ	84,000 ՀՀ դրամ
<i>10.0 հազար նորմալ խորանարդ մետր և ավելի սպառողներին</i>	79.1 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ	146.51 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ	153.26 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
<i>Հիմք</i>	Կարգավորող հանձնաժողովի 09.01.2004թ թիվ 2 Ն որոշում	Կարգավորող հանձնաժողովի 10.03.2006թ թիվ 29 Ն որոշում	Կարգավորող հանձնաժողովի 29.11.2006թ թիվ 298 Ն որոշում

ՀՀ կառավարության 06.04.2006թ. «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳՆԻ ՍԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍԱՄԻՆ» թիվ 449-Ն որոշմամբ նախատեսվել է, որ ՀՀ կառավարությունը 10.04.2006թ.-ից բնական գազի սպառողների օգտին Թողարկողին կվճարի բնական գազի՝ Կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագինը մեղմացնելու համար տրամադրվող սուբսիդիաներ¹ հետևյալ չափերով՝

- ամսական մինչև 10000 նորմալ խոր. մետր սպառման դեպքում՝ 1000 նորմալ խոր. մետրի համար 84000 ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 25000 ՀՀ դրամի սուբսիդիա.

¹ Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից սուբսիդիաների տրամադրումը 01.05.2008թ. դրությամբ դադարեցվել է:

- ամսական 10000 նորմալ խոր. մետր և ավելի սպառման դեպքում՝ 1000 նորմալ խոր. մետրի համար 153,26 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 52,01 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ սուբսիդիա:

Բացի մատակարարված գազի համար վճարներից, Թողարկողը գազիֆիկացման, գազամատակարարման ցանցի վերականգնման, գազամատակարարման ցանցին գազասպառման համակարգերի միացման, գործարկման ու տեխնիկական սպասարկման ծառայությունները մատուցում է վճարովի եղանակով՝ Կարգավորող հանձնաժողովի 08.07.2005թ. թիվ 95 Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ»-ով սահմանված պայմաններին համապատասխան: Սակայն նշված ծառայություններից ստացվող եկամուտները Թողարկողի համար հանդիսանում են գազաբաշխման գործունեությանն օժանդակող գործունեություն, ուստի այդ ծառայություններից ստացված եկամուտները Թողարկողի ընդհանուր հասույթում աննշան են:

Ինչ վերաբերվում է բնակչության ներտնային համակարգի տեխնիկական սպասարկման համար վճարներին, ապա դրանք սահմանվում են Կարգավորող մարմնի կողմից, իսկ կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման վճարները հաշվարկվում են Թողարկողի կողմից՝ Կարգավորող մարմնի հետ համաձայնեցված մեթոդիկայով:

Թողարկողի ներկայիս գնահատականներով, նոր արտադրանքների (ծառայությունների, աշխատանքների) նոր շուկաներում մասնակցության հնարավորություններ դեռևս առկա չեն:


Թողարկողը բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ չի զբաղվում:

Գ. Որպես Թողարկողի արտադրանքի սպառման շուկա դիտարկվում է ՀՀ տարածքը, քանի որ հանրապետություն ներկվող բնական գազն իրացվում է ողջ հանրապետության տարածքում: Ընդ որում՝ ՀՀ տարածքում բնական գազի ներկրումը և բաշխումն իրականացվում է միայն Թողարկողի կողմից, ուստի ՀՀ օրենսդրության համաձայն այն հանդիսանում է մենաշնորհային գործունեություն: Հետևաբար, Թողարկողի գործունեությունը, ի տարբերություն մրցակցային հատվածում ծավալվող գործունեության տեսակների, գտնվում է ավելի խիստ կարգավորման և վերահսկողության դաշտում:

Թողարկողը բնական գազը Հայաստան է ներկրում բարձր ճնշման մայրուղային գազատարների միջոցով, որը Թողարկողին 100% բաժնեմասի իրավունքով պատկանող «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից ընդունվում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության սահմանի վրա՝ «Superflow» տիպի մայրուղային գազահաշվիչների ցուցմունքների հիման վրա, և գազափոխադրման համակարգի միջոցով տեղափոխվում է դեպի գազաբաշխման կայաններ, որտեղ բարձր ճնշումից նվազեցվելով միջին ճնշման՝ գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի սահմանազատման կետերում բաշխման նպատակով՝ «Armflow» տիպի հաշվիչների ցուցմունքների հիման վրա հանձնվում է Թողարկողի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղերին (այսուհետև՝ Գ-ԳՄ): Գ-ԳՄ-ների կողմից գազակարգավորիչ կայանների միջոցով բնական գազի ճնշումը նվազեցվում է մինչև թույլատրելի մակարդակը, և գազաբաշխման համակարգի միջոցով բնական գազը մատակարարվում է վերջնական սպառողներին:


Բնական գազի սպառման շուկայի հատվածների դասակարգման և ծավալների միտումների մասին մանրամասությունները ներկայացված են սույն բաժնի ա. կետում:

Գ-ծապատկերում ներկայացված է 2007 թվականի ընթացքում սպառված բնական գազի ծավալները՝ ըստ սպառողների խմբերի: Անշուշտ, գերակշիռ մասը բաժին է ընկնում արտադրական հատվածին՝ 71.53%:



■ Բնակչության կողմից սպառված բնական գազի ծավալ (մլն.խ.մ) (%)
 ■ Արտադրական հատվածի կողմից սպառված բնական գազի ծավալ (%)

Հաջորդ գծապատկերում ներկայացված է արտադրական հատվածի սպառողների կառուցվածքը՝ ըստ նրանց կողմից սպառված ծավալների (դասակարգումը կատարվել է ըստ բնական գազի սպառման ծավալների մեծության): Գծապատկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արտադրական հատվածում բնական գազի սպառման գերակշիռ ծավալը բաժին է ընկնում 3 խումբ սպառողների՝ Էներգետիկա, Արդյունաբերություն և ԱԳԼՃԿ-ներ, որոնց սպառման ծավալը կազմում է արտադրական հատվածի կողմից սպառված բնական գազի ընդհանուր ծավալի ավելի քան 89%-ը, իսկ հանրապետությունում սպառված բնական գազի ընդհանուր ծավալի ավելի քան 64%-ը:



Համեմատաբար խոշոր սպառողների և նրանց կողմից 2007 թվականի ընթացքում սպառված գազի մասին տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Սպառողի անվանումը	Սպառված բնական գազի ծավալը (մլն խմ)	Տեսակարար կշիռը Թողարկողի կողմից բնական գազի ընդհանուր վաճառքի ծավալում
Հրազդանի Էներգ. ընկ. (Հրազ. ՋԷԿ)	353.99	18.94%
Երևանի ՋԷԿ	152.00	8.13%
«Արարատցեմենտ» ՓԲԸ	103.38	5.53%
«Նաիրիտ-գործարան» ՓԲԸ	77.31	4.14%
«Միկա ցեմենտ» ՓԲԸ	62.32	3.33%
«Արցախգազ» ՓԲԸ	26.30	1.41%

Թողարկողի կողմից մինչև 2007 թվականը էլեկտրաէներգիա էր արտահանվում Վրաստանի Հանրապետություն, որը Թողարկողի կողմից մատակարարված բնական գազի դիմաց արտադրվելով «ՀրազՋԷԿ» ԲԲԸ կողմից՝ այնուհետև համապատասխան վճարների դիմաց «ԲԷՑ» ՓԲԸ կողմից բարձրավոլտ էլեկտրական ցանցերի միջոցով տեղափոխվում էր Վրաստանի Հանրապետություն: Սակայն 2008թ.-ից սկսած Թողարկողի կողմից Վրաստանի Հանրապետություն այլևս էլեկտրաէներգիա չի արտահանվում:

դ. Թողարկողն իր գործունեության ոլորտում չունի մրցակիցներ (գործունեության մանրամասնությունները ներկայացված են սույն բաժնի ա. կետում), իսկ ինչ վերաբերվում է ապագայում նոր մրցակիցներ ի հայտ գալու վերաբերյալ տեղեկություններին, ապա Թողարկողը նման տեղեկատվության չի տիրապետում:

ե. 2007 թվականի ընթացքում Թողարկողի կողմից ձեռքբերված ապրանքանյութական արժեքների 10 տոկոսից ավելին բաժին է ընկել «Գազպրոմէքսպորտ» ՍՊԸ-ից (ՌԴ ռեզիդենտ) ձեռքբերված և ներկրված բնական գազին, մասնավորապես՝ 2007 թվականի ընթացքում ներկրվել է 2,054.4 մլն խ.մ. գազ, որի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 225,984 հազ. ԱՄՆ դոլար կամ 77,268,449.3 հազ. ՀՀ դրամ (հաշվարկի ժամանակ, որպես 2007 թվականի տարեկան միջին փոխարժեք՝ ընդունվել է 1 ԱՄՆ դոլարի դիմաց 341.92 ՀՀ դրամ փոխարժեքը): Ներկրված բնական գազի դիմաց վճարումը կազմում է Թողարկողի կողմից 2007 թվականի ընթացքում իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի 86.79%-ը:

զ. Թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 3 տոկոսը գերազանցող գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ազդագրի 3.2.7. կետում, քանի որ դրանք հանդիսանում են փոխկապակցված գործարքներ:

է. Թողարկողն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ լիցենզիաների հիման վրա.

- ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002թ. դեկտեմբերի 24-ի թիվ 95Ա որոշմամբ Թողարկողին տրվել է բնական գազի ներկրման թիվ 0102 լիցենզիան, համաձայն որի

Թողարկողն իրավունք է ստացել բնական գազ ներկրել Հայաստանի Հանրապետություն: Լիցենզիան ուժի մեջ է մտել 2003թ. հունվարի 1-ից, իսկ գործողության ժամկետը եղել է մինչև 2003թ. դեկտեմբերի 31-ը: Կարգավորող հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի թիվ 653Ա որոշման համաձայն լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2008թ. դեկտեմբերի 31-ը:

- ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. սեպտեմբերի 22-ի թիվ 56Ա որոշմամբ Թողարկողին տրվել է բնական գազի բաշխման թիվ 0109 լիցենզիան, որով Թողարկողը բնական գազի բաշխման գործունեություն իրականացնելու իրավունք է ստացել: Լիցենզիան ուժի մեջ է մտել 2003թ. սեպտեմբերի 29-ից և տրվել է 2 տարի գործողության ժամկետով: ՀՀ Կարգավորող հանձնաժողովի 2007թ. սեպտեմբերի 14-ի թիվ 366Ա որոշմամբ լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2009թ. սեպտեմբերի 29-ը:
- ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. սեպտեմբերի 22-ի թիվ 57Ա որոշմամբ Թողարկողին տրվել է գազամատակարարման համակարգի օպերատորի թիվ 0110 լիցենզիան, որով Թողարկողը գազամատակարարման համակարգի օպերատորի գործունեություն իրականացնելու իրավունք է ստացել: Լիցենզիան ուժի մեջ է մտել 2003թ. սեպտեմբերի 29-ից և տրվել է 2 տարի գործողության ժամկետով: Կարգավորող հանձնաժողովի 2007թ. սեպտեմբերի 14-ի թիվ 366Ա որոշմամբ լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2009թ. սեպտեմբերի 29-ը:

3.2.3. Թողարկողի գործունեության մեջ ներգրավված գույքը

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի հիմնական միջոցների կառուցվածքը հետևյալն է.

Անվանումը	Սկզբնական արժեք	Հաշվեկշռային արժեք	Տես. կշիռը	Կուտակված մաշվածություն
Շենքեր	10,596,227	9,689,733	7.08%	906,494
Կառուցվածքներ	5,792,367	5,246,885	3.83%	545,482
Փոխանցող հարմարանքներ	37,932,709	32,815,609	23.97%	5,117,100
Սեքենաներ և սարքավորումներ	21,457,134	13,177,539	9.63%	8,279,595
Տրանսպորտային միջոցներ	51,749,326	38,605,813	28.20%	13,143,513
Արտադր. և տնտես. գույք, գործիքներ	808,943	480,734	0.35%	328,209
Քաղաքացիական տնկարկներ	2,597	2,007	0.00%	590
Ընդամենը այլ հիմնական միջոցներ	29,565	18,346	0.01%	11,220
Ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ	128,368,868	100,036,666	73.08%	28,332,202
Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ	38,113,763	36,613,635	26.75%	1,500,127
Հողամասեր	230,964	230,964	0.17%	0.0
Ընդամենը հիմնական միջոցներ	166,713,595	136,881,265	100.00%	29,832,330

Թողարկողի հիմնական արտադրական միջոցներն են՝ մայրուղային և բաշխիչ գազատարները, գազակարգավորիչ կայանները, գլխամասային և կենցաղային գազահաշվիչները, էլեկտրապաշտպանիչ կայանները, պարանային ճնշման կարգավորիչ կետերը և այլն:

Թողարկողի բաշխիչ ցանցի՝ շահագործման մեջ գտնվող գազատարների երկարությունը ըստ մասնաճյուղերի 01.04.2008թ. դրությամբ

Թողարկողի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի (ԳԳՄ) անվանումը	Երկարությունը (կմ)
Երևանի ԳԳՄ	776.532

Թողարկողի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի (Գ-Գ-Մ) անվանումը	Երկարությունը (կմ)
Գյումրիի Գ-Գ-Մ	387.458
Շիրակի Գ-Գ-Մ	480.536
Լոռու Գ-Գ-Մ	939.040
Արմավիրի Գ-Գ-Մ	414.764
Կոտայքի Գ-Գ-Մ	373.017
Արարատի Գ-Գ-Մ	182.356
Արտաշատի Գ-Գ-Մ	538.759
Արմավիրի Գ-Գ-Մ	516.325
Էջմիածնի Գ-Գ-Մ	422.640
Տավուշի Գ-Գ-Մ	422.077
Գավառի Գ-Գ-Մ	169.871
Մարտունու Գ-Գ-Մ	266.139
Սևանի Գ-Գ-Մ	322.284
Արագածոտնի Գ-Գ-Մ	359.106
Սյունիքի Գ-Գ-Մ	341.911
Վայոց Ձորի Գ-Գ-Մ	84.342
Ընդամենը քաշխման ցանցի գազատարներ	6997.157

Թողարկողի՝ ՀՀ ողջ տարածքով անցնող և շահագործման մեջ գտնվող մայրուղային գազատարների երկարությունը **1349.6 կմ է**։

Թողարկողի գազամատակարարման համակարգում առկա են արտադրության մեջ ներգրավված **2474** միավոր գազակարգավորիչ կայաններ, գլխամասային գազահաշվիչներ, էլեկտրապաշտպանիչ կայաններ և պարանային ճնշման կարգավորիչ կետեր, որոնք տեղակայված են ՀՀ ողջ տարածքով։

Թողարկողին են պատկանում իր մասնաճյուղերի և դուստր ընկերությունների տարածքներում տեղակայված 100788.7 քմ ընդհանուր մակերեսով շենքեր և 46608.8 քմ ընդհանուր մակերեսով շինություններ։

Թողարկողի շենքերը

Անվանումը	Շենքերի ընդհանուր մակերեսը (քմ)	Ծանոթություն
Վարչական ապարատ	34808.8	Վարչական ապարատի կառավարման ներքո են թվով 26 շենքեր, որոնցից են՝ ք. Ծաղկաձորի «Աղիգազ» և գ. Արզականի «Կարին» հանգստյան համալիրները և թվով 9 պահեստային բազաներ։ Մնացած շենքերը գտնվում են ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43 հասցեում։
Երևանի Գ-Գ-Մ	6784.0	Երևանի Գ-Գ-Մ տնօրինման տակ են գտնվում թվով 7 շենքեր, բոլորն էլ գտնվում են Երևանում։
Գյումրիի Գ-Գ-Մ	1277.0	Գյումրիի Գ-Գ-Մ տնօրինման տակ են գտնվում թվով 5 շենքեր, բոլորն էլ գտնվում են Գյումրիում։
Շիրակի Գ-Գ-Մ	3202.0	Շիրակի Գ-Գ-Մ տնօրինման տակ են գտնվում

Անվանումը	Շենքերի ընդհանուր մակերեսը (քմ)	Ծանոթություն
		Ամասիայում, Աշոցքում, Անիում և Ախուրյանում տեղակայված թվով 7 շենքեր:
Լոռու Գ.Գ.Մ	2317.2	Լոռու Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Վանաձորում, Ստեփանավանում, Սպիտակում և Ալավերդիում տեղակայված թվով 12 շենքեր:
Աբովյանի Գ.Գ.Մ	1598.0	Աբովյանի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Աբովյանում և Նաիրիի տարածաշրջանում տեղակայված թվով 5 շենքեր:
Կոտայքի Գ.Գ.Մ	671.0	Կոտայքի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Հրազդանում և Չարենցավանում տեղակայված թվով 3 շենքեր:
Արարատի Գ.Գ.Մ	422.3	Արարատի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Արարատում և Վեդիում տեղակայված թվով 2 շենքեր:
Արտաշատի Գ.Գ.Մ	673.0	Արտաշատի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Մասիսում և Գետազատում տեղակայված թվով 3 շենքեր:
Արմավիրի Գ.Գ.Մ	1642.0	Արմավիրի Գ.Գ.Մ տնօրինման տակ է գտնվում Բաղրամյանում տեղակայված 2 ադմինիստրատիվ շենք:
Էջմիածնի Գ.Գ.Մ	508.0	Էջմիածնի Գ.Գ.Մ տնօրինման տակ է գտնվում Էջմիածնում տեղակայված թվով 1 ադմինիստրատիվ շենք:
Տավուշի Գ.Գ.Մ	2082.0	Տավուշի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Իջևանում, Դիլիջանում, Բերդում և Նոյեմբերյանում տեղակայված թվով 11 շենքեր:
Գավառի Գ.Գ.Մ	635.0	Գավառի Գ.Գ.Մ տնօրինման տակ է գտնվում Գավառում տեղակայված թվով 3 ադմինիստրատիվ շենք:
Մարտունու Գ.Գ.Մ	802.0	Մարտունու Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Մարտունիում և Վարդենիսում տեղակայված թվով 4 շենքեր:
Սևանի Գ.Գ.Մ	876.0	Սևանի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Սևանում և Ճամբարակում տեղակայված թվով 4 շենքեր:
Արագածոտնի Գ.Գ.Մ	2215.0	Արագածոտնի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Աշտարակում, Ապարանում, Թալինում, Ծաղկահովիտում և Ծիլքարում տեղակայված թվով 8 շենքեր:
Սյունիքի Գ.Գ.Մ	3163.0	Սյունիքի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Կապանում, Սիսիանում, Քաջարանում, Մեղրիում և Գորիսում տեղակայված թվով 9 շենքեր:
Վայոց Ձորի Գ.Գ.Մ	550.2	Վայոց Ձորի Գ.Գ.Մ տնօրինման տակ են գտնվում Եղեգնաձորում և Վայքի տարածաշրջանում տեղակայված թվով 8 շենքեր:
Ընդամենը ապարատ և Գ.Գ.Մ-ներ	64826.0	Վերոնշյալ բոլոր՝ թվով 123 շենքերը Թողարկողի սեփականությունն են հանդիսանում:
Դուստր ընկերություններ	35962.7	Թողարկողի դուստր ընկերությունների տնօրինման տակ գտնվող թվով 107 շենքերը տեղակայված են ՀՀ գրեթե բոլոր տարածաշրջաններում:

Անվանումը	Շենքերի ընդհանուր մակերեսը (քմ)	Ծանոթություն
Ընդհանուրը	100788.7	Ընդամենը՝ 230 շենք

Թողարկողին են պատկանում նաև ք. Երևանի Նուբարաշեն և Ջրվեժ թաղամասերում, գ. Բալահովիտում, ք. Հրազդանում, ք. Վանաձորում, ք. Գյումրիում, ք. Էջմիածնում, ք. Արարատում և ք. Սիսիանում տեղակայված ավտոգազալցակայանները, որոնք հավատարմագրային կառավարման են հանձնված իրեն պատկանող «Ավտոգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Թողարկողի սեփականությունն են հանդիսանում շահագործման մեջ գտնվող 667 միավոր մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներ և 373 միավոր մեխանիզմներ:

Արտադրության (ծառայության) մեջ ներգրավված տրանսպորտային միջոցներ և մեխանիզմներ

Անվանումը	Տրանսպորտային միջոցներ	Մեխանիզմներ
Վարչական	34	-
Երևանի Գ.Գ.Մ	72	9
Գյումրիի Գ.Գ.Մ	12	3
Շիրակի Գ.Գ.Մ	16	-
Լոռու Գ.Գ.Մ	31	4
Արմավիրի Գ.Գ.Մ	19	2
Կոտայքի Գ.Գ.Մ	21	3
Արարատի Գ.Գ.Մ	10	3
Արտաշատի Գ.Գ.Մ	13	5
Արմավիրի Գ.Գ.Մ	17	3
Էջմիածնի Գ.Գ.Մ	12	2
Տավուշի Գ.Գ.Մ	21	4
Գավառի Գ.Գ.Մ	14	3
Մարտունու Գ.Գ.Մ	20	1
Սևանի Գ.Գ.Մ	10	-
Արագածոտնի Գ.Գ.Մ	13	1
Սյունիքի Գ.Գ.Մ	24	3
Վայոց Ձորի Գ.Գ.Մ	12	2
«Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ	26	-
Ընդամենը	397	48
Դուստր ընկերություններ	270	230
Ընդհանուրը	667	278

3.2.4. Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են

Թողարկողը խոշոր սեփականատեր է հանդիսանում հետևյալ ընկերություններում, ընդ որում՝ նշված բոլոր ընկերություններում Թողարկողի բաժնեմասը կազմում է 100%.

№	Ընկերության անվանումը և կազմակերպչաիրավական ձևը	Գտնվելու վայրը
1.	«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Բութան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Պողոնի
2.	«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Ավտոտրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Մայակովսկի
3.	«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պողոնի
4.	«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Ավտոգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 27/3
5.	«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազչին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 41
6.	«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ «Արմավիրի գազմաշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Նորապատ, 5-րդ փողոց, թիվ 3
7.	«Ֆակել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	Վրաստանի Հանրապետություն, Մցխետի տարածաշրջան, գյուղ Նատախտարի
8.	«Ստրոխտել» դուստր ձեռնարկություն	Ուկրաինա, Դոնեցկի տարածաշրջան, գյուղ Սելիդովո, Լեսի Ուկրաինի փող.
9.	«Ստրոյինժպրոյեկտագազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	ՌԴ, ք. Մոսկվա, 16-րդ Պարկովայա փող., 21 շենք, բն. 1

3.2.5. Հարկային արտոնությունները

Թողարկողն օգտվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով օտարերկյա ներդրումներով ընկերությունների համար սահմանված արտոնությունից, համաձայն որի՝ մինչև 01.01.2009թ. Թողարկողի շահութահարկի գումարը նվազեցվում է 50%-ի չափով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողի կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը գերազանցում է 500 մլն դրամը:

3.2.6. Դատական և իրավական ընթացակարգը

ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից իրականացված ստուգման արդյունքում, որը նպատակ է ունեցել ստուգել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտությունը, 2007թ. դեկտեմբերի 27-ին կազմվել է ստուգման թիվ 1018913 ակտը, համաձայն որի Թողարկողի նկատմամբ կիրառվել են հետևյալ պատասխանատվության միջոցները.

Հարկի կամ պարտադիր վճարի տեսակը	Լրացուցիչ գանձման ենթակա հարկի գումար	Հաշվարկված օրական տույժեր	Հաշվարկված սուգանքի գումար	Ընդամենը
Շահութահարկի գծով	-	-	16,274.7	16,274.7
Ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով	5,281.1	690.2	3,168.7	9,140

հազ. դրամ

Հարկի կամ պարտադիր վճարի տեսակը	Լրացուցիչ գանձման ենթակա հարկի գումար	Հաշվարկված օրական տույժեր	Հաշվարկված տուգանքի գումար	Ընդամենը
Ավելացված արժեքի հարկի գծով	8,567.3	-	5,140.4	13,707.7
Սոց. վճարների գծով	1,950.2	-	975.1	2,925.3
Ընդամենը	15,798.6	690.2	25,558.9	42,047.7

ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից 2007թ. սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 20-ը Թողարկողի մոտ իրականացված ծրագրային ստուգման ընթացքում հայտնաբերվել է ամենամյա արձակուրդների տրամադրման և վճարման կարգի խախտում, որի հիման վրա 20.09.2007թ. կազմվել է ստուգման թիվ 2601 ակտը: Ստուգման արդյունքում Թողարկողի նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 600 հազ. ՀՀ դրամի չափով:

ՀՀ տնտեսական դատարանը 31.01.2007թ. կայացրել է վճիռ՝ քննելով քաղաքացիական գործն ըստ Թողարկողի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ որպես վարձատուի, և Թողարկողի՝ որպես վարձակալի, միջև կնքված հողի վարձակալության 11.06.2001թ. թիվ 438/Գ-Ա, 11.06.2001թ. թիվ 439/Գ-Ա, 11.06.2002թ. թիվ 437/Գ-Ա պայմանագրերի 8-րդ կետերը մասնակի անվավեր ճանաչելու, վերոնշյալ պայմանագրերի 8-րդ կետերում հողամասերի տարեկան վարձավճարները ՀՀ հողային օրենսգրքի 118 հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան սահմանելու, նշված պայմանագրերի հիմքով հաշվարկված վարձավճարների վերահաշվարկ կատարելուն Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնելու պահանջների վերաբերյալ, և ըստ հակընդդեմ հայցի Երևանի քաղաքապետարանի ընդդեմ Թողարկողի, երրորդ անձ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման՝

- 1) Երևանի քաղաքապետարանի՝ որպես վարձատուի, և Թողարկողի՝ որպես վարձակալի, միջև կնքված հողի վարձակալության 11.06.2001թ. թիվ 438/Գ-Ա, 11.06.2001թ. թիվ 439/Գ-Ա, 11.06.2002թ. թիվ 437/Գ-Ա պայմանագրերը վաղաժամկետ լուծելու,
- 2) Թողարկողի անվամբ տրված անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման 18.10.2002թ. թիվ 448982, 18.10.2002թ. թիվ 507306, 18.10.2002թ. թիվ 507312 վկայականներն անվավեր ճանաչելու,
- 3) Երևանի քաղաքապետարանի՝ որպես վարձատուի, և Թողարկողի՝ որպես վարձակալի, միջև կնքված վերոնշյալ պայմանագրերից ծագած վարձակալության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու,
- 4) Թողարկողից ի օգուտ Երևանի քաղաքապետարանի 17,935,052 (տասյոթ միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար հիսուներկու) ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջների վերաբերյալ:

Կայացրած վճռի համաձայն որոշվել է.

- հակընդդեմ հայցի 1-ին և 3-րդ մասերի պահանջները մերժել ամբողջությամբ,
- հակընդդեմ հայցի 2-րդ մասի պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի առաջին կետի հիմքով:
- հակընդդեմ հայցի 4-րդ մասի պահանջը բավարարել մասնակի, մասնավորապես՝ որոշվել է Թողարկողից ի օգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 461,465 (չորս հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ, որից՝
 - Երևանի քաղաքապետարանի՝ որպես վարձատուի, և Թողարկողի՝ որպես վարձակալի, միջև կնքված հողի վարձակալության 11.06.2001թ. թիվ 438/Գ-Ա պայմանագրի հիմքով՝ վարձավճար 177,094 (հարյուր յոթանասուներեք հազար իննսունչորս) ՀՀ դրամ, տույժ՝ 52,202 (հիսուներկու հազար երկու հարյուր երկու) ՀՀ դրամ,
 - Երևանի քաղաքապետարանի՝ որպես վարձատուի, և Թողարկողի՝ որպես վարձակալի, միջև կնքված հողի վարձակալության 11.06.2001թ. թիվ 438/Գ-Ա պայմանագրի հիմքով՝ վարձավճար 67,203 (վաթսուներեք հազար երկու հարյուր երեք) ՀՀ դրամ, տույժ՝ 19,811 (տասնինը հազար ութը հարյուր տասներեք) ՀՀ դրամ,
 - Երևանի քաղաքապետարանի՝ որպես վարձատուի, և Թողարկողի՝ որպես վարձակալի, միջև կնքված հողի վարձակալության 11.06.2002թ. թիվ 437/Գ-Ա պայմանագրի հիմքով՝ վարձավճար 112,102 (հարյուր տասներկու հազար հարյուր երկու) ՀՀ դրամ, տույժ՝ 33,053 (երեսուներեք հազար հիսուներեք) դրամ:

Որոշվել է նաև Թողարկողից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 9,229 (ինը հազար երկու հարյուր քսանինը) ՀՀ դրամ՝ հակընդդեմ հայցի մասով ավելացված հայցապահանջի գծով չվճարված պետական տուրքի գումարը:

Թողարկողը սպառողների կողմից կուտակված պարտքերի պատճառով մշտապես այդ պարտքերի բռնագանձման հայցապահանջներ է ներկայացնում, որոնց վերաբերյալ ամփոփ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում,

**Թողարկողի կողմից ներկայացված հայցապահանջները
01.02.2008թ. դրությամբ**

	Հայցապահանջներ քաղաքացիների դեմ	Հայցապահանջները կազմակերպությունների դեմ	Ընդամենը
Հայցապահանջների ընդհանուր գումարը	33,534	333,401.6	366,935.6
Դատարանի վճռով բավարարված	25,948.5	293,106.5	319,055
Վճարված	10,895.4	73,047.2	83,942.6
Պարտքի մնացորդը	22,707.4	260,421.1	283,128.5

Թողարկողի նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները (տույժերն ու տուգանքները) ամբողջությամբ բավարարված (վճարված) են:

3.2.7. Տեղեկություններ փոխկապակցված գործարքների վերաբերյալ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Թողարկողի կողմից վերջին 3 տարիներին կնքված այն փոխկապակցված գործարքների էական պայմանները, որոնց գինը գերազանցում է Թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 1 և ավելի տոկոսը և (կամ) գերազանցում է 2 միլիոն ՀՀ դրամը:

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
2005 թվական				
1.	<p>«Տրանսգազ» ՍՊԸ</p> <p>20.02.2002թ. կնքված շինհավաքակցման և վերանորոգման աշխատանքների կապալի թիվ ARG-Պ-5/3 պայմանագիր</p>	<p>«Տրանսգազ» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել իրեն հավատարմագրային կառավարման հանձնված հիմնական միջոցների շինհավաքակցման և վերանորոգման աշխատանքներ:</p>	<p>Աշխատանքների կատարման գինը որոշվում է նախատեսված աշխատանքի նախագծային-նախահաշվային փաստաթղթերով:</p> <p>Մասնավորապես՝ ըստ առանձին տարիների պայմանագրի գինը կազմել է 2005թ.՝ 494 925 222 դրամ, որը կազմում է Թողարկողի 2005թ. հասույթի 0.85%-ը, 2006թ.՝ 473 256 733 դրամ, որը կազմում է Թողարկողի 2006թ. հասույթի 0.58%-ը, 2007թ.՝ 563 571 953 դրամ, որը կազմում է Թողարկողի 2007թ. հասույթի 0.55%-ը:</p>	<p>Հիմնական պայմանագրի գործողության վերջնաժամկետը սահմանված է եղել 31.12.2002թ., սակայն հետագա համաձայնագրերով այն երկարաձգվել է, մասնավորապես՝ 17.01.2008թ. կնքված թիվ 7 լրացուցիչ համաձայնագրով պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 31.12.2008թ.:</p>
2.	<p>«Տրանսգազչին» ՍՊԸ</p> <p>02.03.2004թ. կնքված Բնական գազի փոխադրումն իրականացնելու մասին թիվ ARG-Պ-1-04/7 պայմանագիր</p> <p>Վերոհիշյալ պայմանագրի շրջանակում 24.05.2006թ., 03.08.2006թ., 01.06.2007թ. և 05.09.2007թ. կնքվել են Լրացուցիչ համաձայնագրեր:</p> <p>02.03.2004թ. կնքված Բնական գազի փոխադրում իրականացնելու մասին թիվ ARG-Պ-1-04/7 պայմանագիրը և կնքված բոլոր լրացուցիչ համաձայնագրերը գրանցված են Կարգավորող</p>	<p>«Տրանսգազչին» ՍՊԸ-ն պարտավորվել է Թողարկողից առաքված բնական գազը փոխադրելով հասցնել համապատասխան կայաններ և հանձնել Թողարկողին:</p>	<p>Բնական գազի փոխադրման սակագինը սահմանվել է ՀՀ բնական մենաշնորհները կարգավորող հանձնաժողովի 29.01.2004թ. թիվ 19Ս որոշմամբ, մասնավորապես՝ 1000 խմ բնական գազի փոխադրման սակագինը սահմանվել է 6.626 ԱՄՆ դոլար՝ ներառյալ ԱԱՀ-ն: Հետագայում նշված սակագինը փոփոխվել է Կարգավորող հանձնաժողովի 10.03.2006թ. թիվ 30Ա և 29.11.2006թ. թիվ 300Ա որոշումներով՝ կազմելով համապատասխանաբար 3445.515 դրամ և 4638.841 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:</p> <p>Սակայն նույն պայմանագրով (հատուկ պայմաններով) սահմանված է նաև, որ Թողարկողի կողմից բնական գազի փոխադրման դիմաց վճարված գումարի և 01.07.1997թ. կնքված գույքի</p>	<p>Հիմնական պայմանագրի գործողության վերջնաժամկետը սահմանված է եղել 31.12.2004թ., սակայն հետագա համաձայնագրերով պայմանագրի գործողության վերջնաժամկետ սահմանված չէ:</p>

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
	հանձնաժողովի կողմից:		<p>հավատարմագրային կառավարման պայմանագրով «Տրանսգազ» ՍՊԸ-ին հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կառավարման վարձատրության, կառավարչի կողմից կատարված անհրաժեշտ ծախսերի հատուցման, ինչպես նաև հասանելի շահույթի հանրագումարի տարբերությունը վճարվում է Թողարկողին՝ որպես հավատարմագրային կառավարման հիմնադրի շահ հանդիսացող գումար:</p> <p>Ուստի որպես պայմանագրի գին ստորև ներկայացվում է 2005, 2006 և 2007 թվականների համար «Տրանսգազ» ՍՊԸ-ին վճարման ենթակա հավատարմագրային կառավարման վճարների ընդհանուր գումարը, մասնավորապես՝ 2005 թվականին՝ 1,274.4 մլն դրամ, որը կազմում է Թողարկողի 2005թ. հասույթի 2.2%-ը, 2006 թվականին՝ 1,555.2 մլն դրամ, որը կազմում է Թողարկողի 2006թ. հասույթի 1.92%-ը, 2007 թվականին՝ 1,799.1 մլն դրամ, որը կազմում է Թողարկողի 2007թ. հասույթի 1.75%-ը:</p>	
3.	«Տրանսգազին» ՍՊԸ 15.04.2005թ. կնքված նպատակային փոխառության պայմանագիր	Թողարկողը պարտավորվել է «Տրանսգազին» ՍՊԸ-ին տրամադրել 50,000,000 դրամ նպատակային փոխառություն՝ մարումներն իրականացնելով համաձայն պայմանագրին կից վճարման ժամանակացույցի:	Տարեկան 12% Գործարքի արդյունքում իրականացված ֆինանսական հոսքերը (մայր գումարի և տոկոսների մարումը) Թողարկողի 2005թ. հասույթում կազմում է 0.091%:	Ըստ վճարման ժամանակացույցի՝ փոխառության մարման նպատակով կատարվող վերջին վճարումը նախատեսվել է կատարել 2005 թվականի հոկտեմբերին:
4.	«Արմավիրի Գազմաշ» ՍՊԸ	«Արմավիրի Գազմաշ» ՍՊԸ-ն հայտարարված մրցույթի	21,000,000 դրամ, առանց ԱԱՀ:	Առաջարկի ընդունման վերաբերյալ ծանուցելու

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
	19.07.2005թ. կնքված թիվ ARG-05-07/1 AG պայմանագիր	արդյունքներով իրավունք է ձեռք բերել Թողարկողին մատակարարել բնական գազի արդյունաբերական հաշվիչներ:	Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2005թ. հասույթում կազմում է 0.043%:	պահից 60 օրվա ընթացքում
5.	«Պողզեմգազպրոմ» ՍՊԸ 28.09.2005թ. կնքված ստորգետնյա պահեստների կոմպլեքս գեոֆիզիկական հետազոտությունների և Աբովյանի ստորգետնյա պահեստակայանի վերանորոգման-վերականգնողական աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման թիվ ARG-05-10-PGP պայմանագիր	«Պողզեմգազպրոմ» ՍՊԸ-ն պարտավորվել է իրականացնել պայմանագրով նախատեսված օբյեկտների տեխնիկական վիճակի կոմպլեքս հետազոտություններ և մշակել վերանորոգման-վերականգնողական աշխատանքների իրականացման համար նախագծային փաստաթղթեր:	541,731.34 ԱՄՆ դոլար Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2005թ. հասույթում կազմում է 0.43% (հաշվարկված 2005թ. միջին տարեկան փոխարժեքով՝ 1ԱՄՆ դոլար=457.4 ՀՀ դրամ):	Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը
6.	«Գազէքսպորտ» ՍՊԸ 28.12.2005թ. բնական գազի առուվաճառքի թիվ 2107-06-04 պայմանագիր	Սույն պայմանագրով «Գազէքսպորտ» ՍՊԸ-ն պարտավորվում է 01.01.2006-31.12.2006թթ. ժամանակահատվածում մատակարարել, իսկ Թողարկողը ընդունել բնական գազ՝ DAF Վրաստանի Հանրապետություն / Հայաստանի Հանրապետություն պայմանով (INCOTERMS 2000): 2006 թվականին նախատեսվել է մատակարարել մինչև 2,100 մլն խմ բնական գազ:	110 ԱՄՆ դոլար՝ 1000 խմ բնական գազի համար DAF Վրաստանի Հանրապետություն / Հայաստանի Հանրապետություն (INCOTERMS 2000) մատակարարելու պայմանով: Նշված ժամանակահատվածում գործարքի պայմանագրային գինը կազմում է 231 մլն ԱՄՆ դոլար, որը կազմում է Թողարկողի 2006թ. ընդհանուր եկամուտների 118.4%-ը (հաշվարկված 2006թ. միջին տարեկան փոխարժեքով՝ 1 ԱՄՆ դոլարը=415.1 ՀՀ դրամ):	Պայմանագրի գործողության վերջնաժամկետը 31.12.2006թ.-ն է, իսկ մատակարարված գազի դիմաց հաշվարկների մասով՝ մինչև դրանց վերջնական մարումը:
	Վերոհիշյալ պայմանագրի շրջանակում 01.04.2006թ. կնքվել է թիվ 2 լրացուցիչ համաձայնագիրը		Թիվ 2 համաձայնագրով 01.04.2006.-01.01.2009թթ. ժամանակաշրջանի համար մատակարարման գինը վերասահմանվել է բնական գազի 1000 խմ-ի համար 110 ԱՄՆ դոլար:	Թիվ 2 համաձայնագրով 28.12.2005թ. կնքված թիվ 2107-06-04 պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 01.01.2009թ.:
	Վերոհիշյալ պայմանագրի շրջանակում 26.12.2006թ. կնքվել է թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը	2007 թվականին մատակարարվող գազի ծավալների սահմանում, մասնավորապես՝ շուրջ 1,940 մլն խմ, սակայն ոչ պակաս 1,878 մլն խմ:	Նշված ժամանակահատվածում գործարքի պայմանագրային գինը կազմում է 213.4 մլն ԱՄՆ դոլար, սակայն ոչ պակաս 206.58 մլն ԱՄՆ դոլար, որը կազմում է Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտների շուրջ	Նշված պայմանագրի գործողության ժամկետը պայմանավորված է հիմնական պայմանագրով և դրա շրջանակում կնքված լրացուցիչ

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
			70%-ը (հաշվարկված 2007թ. միջին տարեկան փոխարժեքով՝ 1 ԱՄՆ դոլարը=341.9 ՀՀ դրամ):	համաձայնագրերով:
	Վերոհիշյալ պայմանագրի շրջանակում 19.12.2007թ. կնքվել է թիվ 6 լրացուցիչ համաձայնագիրը	2008 թվականին մատակարարվող գազի ծավալների սահմանում, մասնավորապես՝ 2,212 մլն խմ, սակայն տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում՝ 2,400 մլն խմ:	Նշված ժամանակահատվածում գործարքի պայմանագրային գինը կազմում է 243.32 մլն ԱՄՆ դոլար, իսկ տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում՝ 264.0 մլն ԱՄՆ դոլար:	Նշված պայմանագրի գործողության ժամկետը պայմանավորված է հիմնական պայմանագրով և դրա շրջանակում կնքված լրացուցիչ համաձայնագրերով:
2006 թվական				
7.	«Տրանսգազին» ՍՊԸ 13.04.2006թ. կնքված օբյեկտի կառուցման շինմոնտաժային աշխատանքների իրականացման մասին թիվ ARG-06-02 TG պայմանագիր 28.04.2007թ. կնքվել է վերոհիշյալ պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր	«Տրանսգազին» ՍՊԸ-ն պարտավորվել է ութ օրացույցային ամսվա ընթացքում կատարել «Աբովյանի ԳՍՊԿ-ի աղաջրապահեստարան Զովունի գյուղի տարածքում» օբյեկտի կառուցման շինմոնտաժային աշխատանքներ:	376,745,544 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը կազմում է Թողարկողի 2006թ. ընդհանուր եկամուտների մեջ կազմում է 0.47%-ը:	Մույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը (լրացուցիչ համաձայնագրով որպես աշխատանքների կատարման և հանձնման վերջնաժամկետ սահմանվել է 15.06.2007թ.):
8.	ՀՀ կառավարություն 30.06.2006թ. կնքված Հրագրան-5-ի գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր	Հիմք ընդունելով ՀՀ կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջև 31.03.2006թ. կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում գազատեղեկության նախագծերում «Գազպրոմ» ԲԲԸ-ի մասնակցության մասին» համաձայնագիրը, ՀՀ կառավարության 06.04.2006թ. «Պետական գույքի օտարման և բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների մասին» թիվ 449-Ն որոշումը՝ տվյալ նախնական պայմանագրով ՀՀ կառավարությունը և Թողարկողը պարտավորվում են կնքել առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն ՀՀ կառավարությունը կվաճառի, իսկ Թողարկողը որպես	Գույքի նախնական համաձայնեցված ընդհանուր գինը կազմում է 248,800,000*E ՀՀ դրամ (որտեղ E-ն ՀՀ կենտրոնական բանկի սահմանած վճարման իրականացման համապատասխան օրվա 1 ԱՄՆ դոլարի փաստացի հաշվարկային փոխարժեքն է), որը չի ներառում ԱԱՀ-ն: Պայմանագրի գնի վճարումն իրականացվում է հետևյալ կարգով՝ 2006թ.-ին 58,800,000*E, 2007թ.-ին 70,000,000*E, 2008թ.-ին 120,000,000*E:	Պայմանագիրը գործում է մինչև հիմնական պայմանագրի կնքումը կամ նախնական պայմանագրի չեղյալ ճանաչումը:

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
		սեփականություն ձեռք կրերի «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրը:	Նշված գործարքի արդյունքում 2006թ. ֆինանսական հոսքերը Թողարկողի 2006թ. հասույթում կազմում են 30.14%, իսկ 2007թ. ֆինանսական հոսքերի ընդհանուր մասնաբաժինը 2007թ. հասույթում՝ 23.3% (հաշվարկված 2006թ. և 2007թ. միջին տարեկան փոխարժեքներով):	
9.	<p>ՀՀ կառավարություն ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ էներգետիկայի նախարարության «Հրազդան-5» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ</p> <p>30.06.2006թ. կնքված «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրը պահատվության հանձնելու մասին պայմանագիր</p> <p>Սույն պայմանագրի շրջանակում կնքվել են 02.04.2007թ. թիվ 1 և 07.01.2008թ. թիվ 2 համաձայնագրերը</p>	<p>Հիմք ընդունելով ՀՀ կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջև 31.03.2006թ. կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում գազաէներգետիկ նախագծերում «Գազպրոմ» ԲԲԸ-ի մասնակցության մասին» համաձայնագիրը, ՀՀ կառավարության 06.04.2006թ. «Պետական գույքի օտարման և բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների մասին» թիվ 449-Ն որոշումը և ՀՀ կառավարության ու Թողարկողի միջև 30.06.2006թ. կնքված «Հրազդան-5-ի գույքի առուվաճառքի» նախնական պայմանագիրը, սույն պայմանագրի համաձայն «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրը պահատվության է հանձնվել ՀՀ էներգետիկայի նախարարության «Հրազդան-5» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին:</p>	<p>Պահատվության համար վարձատրությունը կատարում է Թողարկողը՝ ամսական 9,279,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:</p> <p>Լրացուցիչ համաձայնագրերով Թողարկողը պարտավորվել է կատարել 2006թ. երկրորդ կիսամյակից մինչև 2008 թվականի ավարտն ընկած ժամանակահատվածում Հրազդան-5» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կրած ծախսերը՝ կապված «Силловые машины» ԲԲԸ-ի կողմից մատուցված ծառայությունների հետ:</p> <p>Նշված գործարքի արդյունքում 2006թ. ֆինանսական հոսքերը Թողարկողի 2006թ. հասույթում կազմում են 0.069%, իսկ 2007թ. ֆինանսական հոսքերի ընդհանուր մասնաբաժինը 2007թ. հասույթում՝ 0.11%:</p>	<p>Պայմանագիրը գործում է մինչև ՀՀ կառավարության և Թողարկողի միջև «Հրազդան-5-ի գույքի առուվաճառքի» հիմնական պայմանագրի կնքումը:</p>
10.	<p>«Ավտոտրանսգազ» ՍՊԸ</p> <p>28.07.2006թ. կնքված պայմանագիր</p>	<p>«Ավտոտրանսգազ» ՍՊԸ-ն պարտավորվել է իրականացնել Թողարկողին պատկանող թվով 12 հատ Գ-ազ-52 մակնիշի «վանդակավոր» ՄՏԲ-1 տիպի, «վթարա-վերանորոգման» ԱԳՄ տիպի ավտոմեքենաների վերափոխման և դրանց հիմնանորոգման</p>	<p>Մեկ ավտոմեքենայի վերափոխման աշխատանքների կատարման գինը 1,152,000 ՀՀ դրամ է՝ ներառյալ ԱԱՀ-ն, հիմնանորոգման աշխատանքների կատարման գինը մեկ ավտոմեքենայի համար որոշվում է «Ավտոտրանսգազ» ՍՊԸ-ի կողմից փաստացի կատարված աշխատանքների կատարողական</p>	<p>Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը:</p>

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
		աշխատանքներ:	ակտով, բայց ոչ ավելի քան 888,000 ՀՀ դրամը՝ ներառյալ ԱԱՀ-ն: Նշված գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2006թ. ընդհանուր եկամուտներում կազմում է շուրջ 0.03%:	
11.	«Տրանսգազչին» ՍՊԸ 21.08.2006թ. կնքված օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների իրականացման մասին թիվ ARG-06-05 TG պայմանագիր	«Տրանսգազչին» ՍՊԸ-ն պարտավորվել է 2 օրացուցային ամսվա ընթացքում կատարել «Երևան քաղաքի Նոր-Նորք համայնքի Բաղյան փող.-ից մինչև Գյուրջյան փող. միջին ճնշման գազատարի կառուցում» օբյեկտի շինմոնտաժային աշխատանքներ	39,800,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2006թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.049%:	Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը:
12.	«Տրանսգազչին» ՍՊԸ 21.08.2006թ. կնքված օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների իրականացման մասին թիվ ARG-06-06 TG պայմանագիր	«Տրանսգազչին» ՍՊԸ-ն պարտավորվել է 2 օրացուցային ամսվա ընթացքում կատարել «Երևան քաղաքի Լևոնյան փող.-ի ՊԳԿԿ-ից մինչև Մարգարյան փող. միջին ճնշման Dy200մմ գազատարի կառուցում» օբյեկտի շինմոնտաժային աշխատանքներ	24,800,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2006թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.03%:	Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը:
13.	«Տրանսգազչին» ՍՊԸ 28.09.2006թ. կնքված օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների իրականացման մասին թիվ ARG-06-09 TG պայմանագիր	«Տրանսգազչին» ՍՊԸ-ն պարտավորվել է 60 օրացուցային օրվա ընթացքում կատարել «Երևան քաղաքի Նոր-Արեշ փող.-ի հաշվիչ հանգույցից մինչև «Հաստոցանորմալ» գործարան միջին ճնշման Dy160մմ գազատար» օբյեկտի շինմոնտաժային աշխատանքներ	36,708,000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2006թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.045%:	Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի պարտավորությունների պատշաճ կատարումը:
14.	«Տրանսգազչին» ՍՊԸ 29.09.2006թ. կնքված պայմանագիր	«Տրանսգազչին» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել հողային աշխատանքներ Զաջարան-Արարատ գազատարի 24473 մետր ընդհանուր երկարությամբ թվով 3 հատվածների մասով:	2,087,860,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 2.03%:	Որպես աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.11.2007թ.:
15.	«Արմավիրի Գազմաշ» ՍՊԸ	«Արմավիրի Գազմաշ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել, իսկ	14,112,000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:	Սույն պայմանագիրը գործում է մինչև Կողմերի

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
	20.10.2006թ. կնքված պայմանագիր 04.10.2007թ. կնքվել է վերոհիշյալ պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր	Թողարկողն՝ ընդունել 28 հատ RPT-3 տիպի բնական գազի արդյունաբերական հաշվիչներ: Լրացուցիչ համաձայնագրով «Արմավիրի Գազմաշ» ՍՊԸ-ն պարտավորվել է Թողարկողին մատակարարել լրացուցիչ 28 հատ RPT-3 տիպի բնական գազի արդյունաբերական հաշվիչներ :	Լրացուցիչ համաձայնագրով մատակարարվող հաշվիչների ընդհանուր արժեքը նույնպես սահմանվել է 14,112,000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: 2006թ. և 2007թ. մատակարարված հաշվիչների արժեքը Թողարկողի 2006թ. և 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում են համապատասխանաբար 0.017% և 0.014%:	պարտավորությունների պատշաճ կատարումը:
16.	«Գազայրոմ» ԲԲԸ 10.11.2006թ. կնքված լրացուցիչ բաժնետոմսերի առուվաճառքի մասին պայմանագիր	Նշված պայմանագրի առարկան հանդիսացել է 05.09.2006թ. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ թողարկված և «Գազայրոմ» ԲԲԸ-ի օգտին տեղաբաշխվող 11,180,000 հատ լրացուցիչ բաժնետոմսերի առուվաճառքը:	Մեկ բաժնետոմսի գինը կազմում է 5,026.5 դրամ Սակայն Թողարկողի 05.09.2006թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկված 11,180,000 հատ սովորական անվանական բաժնետոմսերից փաստացի տեղաբաշխվել են 8,314,992-ը (41,795,307,288 դրամ ընդհանուր արժեքով)՝ փաստացի նշված քանակի բաժնետոմսերի վճարման հիմքով: Ինչ վերաբերվում է մնացած 2,865,008 հատ չվճարված բաժնետոմսերին՝ դրանք գտնվել են Թողարկողի տնօրինման ներքո և մարվել են 2008թ. հունվարի 25-ին Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ (կանոնադրական կապիտալի փոփոխությունը գրանցվել է 07.04.2008թ.): Նշված գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2006թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 51.6%:	Պայմանագրով որպես վճարման վերջնաժամկետ սահմանվել է 31.12.2006թ.:
17.	«Տրանսգազի» ՍՊԸ	«Տրանսգազի» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել «Երևանի	62,000,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:	Որպես աշխատանքների կատարման

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
	04.12.2006թ. կնքված պայմանագիր 17.01.2008թ. կնքվել է վերոհիշյալ պայմանագրի լրացուցիչ համաձայնագիրը	ԳԲԿ-2-ից քաղաքը, ՋԷԿԸ և «Նաիրիտ» ԳԱՍԸ սնող բ/ճ գազատարների վերատեղադրում» աշխատանքային նախագծով շինարարական աշխատանքներ:	Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.06%:	վերջանաժամկետ սահմանվել է 30.03.2007թ.: Լրացուցիչ համաձայնագրով աշխատանքների կատարման վերջանաժամկետը երկարաձգվել է մինչև 01.03.2008թ.:
2007 թվական				
18.				
19.	«Տրանսգազին» ՍՊԸ 13.03.2007թ. կնքված պայմանագիր	«Տրանսգազին» ՍՊԸ-ն պարտավորվել է իրականացնել «Երևան քաղաքի Հալաբյան փող.-ի միջին ճնշման գազատարի վթարային հատվածի վերատեղադրում» նախագծի շինարարական աշխատանքներ:	69,574,270 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.068%:	Աշխատանքների կատարման վերջանաժամկետ է սահմանվել 01.07.2007թ.-ը:
20.	«Արմավիրի Գազմաշ» ԱՊԸ 17.04.2007թ. կնքված պայմանագիր	«Արմավիրի գազմաշ» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել համաձայնեցված տեսքին և նմուշին համապատասխան ջահի պատրաստման աշխատանքներ:	Աշխատանքի կատարման գինը որոշվել է պլանային գնահաշվարկին համապատասխան, որը կազմում է 2,580,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.003%:	Սույն պայմանագիրը դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:
21.	«Ավտոտրանսգազ» ՍՊԸ 28.04.2007թ. կնքված պայմանագիր 30.07.2007թ. կնքվել է վերոնշյալ պայմանագրի թիվ 1 լրացուցիչ համաձայնագիրը	«Ավտոտրանսգազ» ՍՊԸ-ն պարտավորվել է Թողարկողին պատկանող թվով 15 հատ Գազ-52 մակնիշի «վանդակավոր» ՍՏԲ-1 տիպի, «վթարավերականգնման» ԱԳՄ տիպի ավտոմեքենաների վերափոխման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում:	Մեկ ավտոմեքենայի վերափոխման սկզբնական գինը կազմում է 1,152,000 ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն, իսկ մեկ ավտոմեքենայի հիմնանորոգման աշխատանքների կատարման գինը որոշվում է կատարողական ակտով, բայց ոչ ավել, քան 888,000 ՀՀ դրամը, ներառյալ ԱԱՀ-ն: Սակայն լրացուցիչ համաձայնագրով մեկ ավտոմեքենայի վերափոխման գինը վերասահմանվել է 1,482,000	Սույն պայմանագիրը դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
			դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ մեկ ավտոմեքենայի հիմնանորոգման աշխատանքների գինը՝ ոչ ավել, քան 1,341,375 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի ընդհանուր մասնաբաժինը Թողարկողի 2007թ. հասույթում կազմում է շուրջ 0.041%:	
22.	«Տրանսգազհին» ՍՊԸ 29.05.2007թ. կնքված պայմանագիր	«Տրանսգազհին» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել Ջերմուկ-Արարատ գազատարի 15000 գծամետր ընդհանուր երկարությամբ հատվածի հողային աշխատանքներ:	583,400,000 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.57%:	Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 20.12.2007թ.:
23.	«Օրգէներգոգազ» ԲԲԸ («Գազպրոմ» ԲԲԸ-ի դուստր ընկերություն) 17.07.2007թ. կնքած Գազատար համակարգի օբյեկտների տեխնիկական վիճակի հետազոտման ծառայությունների մատուցման մասին թիվ 07M020 պայմանագիր 31.08.2007թ. կնքվել է վերը նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ թիվ 1 լրացուցիչ համաձայնագիրը 12.09.2007թ. կնքվել է վերը նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ թիվ 2 լրացուցիչ համաձայնագիրը	Գործող գազատար խողովակաշարի գծային տեղամասերի և տեխնիկական վիճակի հետազոտում, ինչպես նաև նոր տեղամասերի տեխնիկական վիճակի համապատասխանության ստուգում:	464,700 եվրո, առանց ԱԱՀ-ի: Սակայն 12.09.2007թ. կնքված լրացուցիչ համաձայնագրով վերանայելով ծառայությունների շրջանակը, պայմանագրի արժեքը վերասահմանվել է 356,478.4 եվրո՝ առանց ԱԱՀ-ի: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. հասույթում կազմում է 0.21% (հաշվարկված 2007թ. միջին տարեկան փոխարժեքով՝ 1 եվրո=467.6 ՀՀ դրամ):	Պայմանագիրը գործում է մինչև 31.12.2007թ, սակայն 12.09.2007թ. կնքված լրացուցիչ համաձայնագրով պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 31.03.2008թ.:
24.	«Գազպրոմ» ԲԲԸ 18.06.2007թ. կնքված փոխառության թիվ 1 պայմանագիր 28.12.2007թ. կնքվել է փոխառության թիվ 1 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1/06/07 լրացուցիչ համաձայնագիրը	40,500,000 ԱՄՆ դոլարի չափով փոխառության տրամադրում	Տարեկան 5.4% Գործարքի արդյունքում իրականացված ֆինանսական հոսքերը (մայր գումարի և տոկոսների մարումը) Թողարկողի 2007թ. հասույթում կազմում է 14.08%: (հաշվարկված 2007թ. միջին տարեկան փոխարժեքով՝ 1ԱՄՆ դոլար=341.9 ՀՀ դրամ)	Պայմանագրով որպես հիմնական պարտքի մարման ժամկետ նախատեսված է եղել 28.12.2007թ., սակայն լրացուցիչ համաձայնագրով այն երկարաձգվել է մինչև 01.05.2008թ.:

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
25.	«ԳազպրոմԷներգո» ՍՊԸ 29.10.2007թ. ծառայությունների մատուցման թիվ ՄՊԹ-03/232 պայմանագիր	«ԳազպրոմԷներգո» ՍՊԸ-ն պարտավորվում է «Հրազդան-5» կոմպլեքսի շինարարության և վերազինման ավարտման ուղղությամբ նախագծման փուլում մատուցել հետևյալ ծառայությունները՝ - նախագծման տեխնիկական պահանջների և տեխնիկական խնդիրների համաձայնեցում, - մասնակցություն ՏՏՀ ուղղությամբ եզրակացության պատրաստմանը, - մասնակցություն նախագծահաշվարկի փաստաթղթերի հիմնավորման պատրաստմանը, - մասնակցություն գլխավոր կատարողի ընտրության հանձնաժողովի աշխատանքներին:	1,049,448.95 ՌԴ ռուբլի, առանց ԱԱՀ-ի Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտների մեջ կազմում է 0.014%:	Մույն պայմանագիրը դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ (ծառայությունների մատուցման ժամանակացույցին համապատասխան):
26.	«Գազպրոմ» ԲԲԸ 07.11.2007թ. կնքված փոխառության թիվ 2 պայմանագիր 28.12.2007թ. կնքվել է փոխառության թիվ 2 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 2/11/07 լրացուցիչ համաձայնագիրը	Ոչ ավելի քան 146,000,000 ԱՄՆ դոլարի չափով փոխառության տրամադրում:	Տարեկան 6.72% Գործարքի արդյունքում իրականացված ֆինանսական հոսքերը (մայր գումարի և տոկոսների մարումը) Թողարկողի 2007թ. հասույթում կազմում է 50.22%: (հաշվարկված 2007թ. միջին տարեկան փոխարժեքով՝ 1 ԱՄՆ դոլար=341.9 ՀՀ դրամ)	Պայմանագրով որպես հիմնական պարտքի մարման ժամկետ նախատեսված է եղել 31.12.2007թ., սակայն լրացուցիչ համաձայնագրով այն երկարաձգվել է մինչև 01.05.2008թ.:
27.	«Տրանսգազին» ՍՊԸ 01.11.2007թ. կնքված պայմանագիր	Թողարկողը «Տրանսգազին» ՍՊԸ-ին որպես սեփականություն հանձնել է 2006 թվականի ՅՕ-4225A մակնիշի էքսկավատորը՝ իր բանվորական և փոխարինվող սարքավորումներով:	Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 45,574,019.42 ՀՀ դրամ՝ 2007թ. նոյեմբեր-2008թ. հունիս ժամանակահատվածում ամսական 5մլն և 2008թ. հուլիս ամսվա համար՝ 5,574,019.42 ՀՀ դրամ վճարելու պայմանով: Նշված գործարքի արդյունքում 2007թ. ֆինանսական հոսքերը Թողարկողի 2007թ. հասույթում կազմել են 0.089%:	Մույն պայմանագիրը դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:
28.	«Գազպրոմ» ԲԲԸ	Նշված պայմանագրի առարկան է	Մեկ բաժնետոմսի գինը կազմում է	Պայմանագրով վճարման

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
	21.12.2007թ. կնքված լրացուցիչ բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիր	հանդիսանում Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատման ենթակա «Գազպրոմ» ԲԲԸ-ի օգտին 19,000,000 հատ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի առուվաճառքը: (Բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է 25.01.2008թ. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից)	5,026.5 ՀՀ դրամ, իսկ գործարքի ընդհանուր արժեքը՝ 95,503,500,000 ՀՀ դրամ: 28.04.2008թ. գրանցվել է կանոնադրական կապիտալի ավելացումը : Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 92.96%:	վերջնաժամկետ սահմանվել 01.05.2008թ.:
2008 թվական				
29.	«Տրանսգազչին» ՍՊԸ 14.04.2008թ. կնքված օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների իրականացման մասին թիվ ARG-08-03 TG պայմանագիր	«Տրանսգազչին» ՍՊԸ-ն պարտավորվել է երեք օրացուցային ամսվա ընթացքում կատարել «Արմավիրի մարզի Երասխահուն գյուղի գազաբաշխիչ ցանցի կառուցում և վերականգնում» օբյեկտի շինմոնտաժային աշխատանքներ:	Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 22,022,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.021%:	Մույն պայմանագիրը դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:
30.	«Տրանսգազչին» ՍՊԸ 14.04.2008թ. կնքված օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների իրականացման մասին թիվ ARG-08-07 TG պայմանագիր	«Տրանսգազչին» ՍՊԸ-ն պարտավորվել է երկու օրացուցային ամսվա ընթացքում կատարել «Արմավիրի մարզի Եղեգնուտ գյուղի միջին ճնշման գազատարի վթարային հատվածի կառուցում» օբյեկտի շինմոնտաժային աշխատանքներ:	Պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 26,555,248 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գործարքի մասնաբաժինը Թողարկողի 2007թ. ընդհանուր եկամուտներում կազմում է 0.026%:	Մույն պայմանագիրը դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

3.2.8. Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները

Մոտակա տարիներին Թողարկողի գործունեության հիմնական ուղղությունը շարունակելու է մնալ բնական գազի ներկրումը և բաշխումը, ուստի Թողարկողի հիմնական եկամուտները կձևավորվեն այդ գործունեության հասույթից, մասնավորապես՝ Թողարկողը գազի ներկման գործող պայմանագիր ունի «Գազէքսպորտ» ՍՊԸ-ի հետ՝ 28.12.2005թ. կնքված բնական գազի առուվաճառքի թիվ 2107-06-04 պայմանագիրը (27.12.2007թ. կնքվել է թիվ 6 լրացուցիչ համաձայնագիրը): Համաձայն վերոհիշյալ պայմանագրի՝ 2008 թվականին նախատեսվում է 2,212 մլն խմ, իսկ տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում՝ մինչև 2,400 մլն խմ գազ մատակարարել Հայաստանի Հանրապետություն:

Միաժամանակ, Թողարկողը, համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 1 կետի բ) և ը) ենթակետերի և Թողարկողի թիվ 0109 լիցենզիայի 5.13 կետի և թիվ 0111 լիցենզիայի 5.12 կետի պայմանների, կազմում և պետական կարգավորող մարմին է ներկայացնում առաջիկա երեք տարիների ներդրումային ծրագիրը: Ներդրումային ծրագրի նպատակն է 2008-2010թթ. ընթացքում Թողարկողի կողմից գազափոխադրման և գազաբաշխման համակարգում ներդրումների ներգրավման ճանապարհով սպառողների անխափան, հուսալի և անվտանգ գազամատակարարման ապահովումը:

Թողարկողի ներդրումային ծրագիրը կազմվում է «Տրանսգազ» ՍՊԸ-ից ու Գազամատակարարման և Գազիֆիկացման Մասնաճյուղերից (ԳԳՄ) ստացված գազամատակարարման համակարգի աշխատունակության պահպանման, համակարգի հուսալիության բարձրացման և անվտանգ շահագործման լրիվ ծրագրերի հիման վրա, որոնցում ներառված են ներդրումներ պահանջող օբյեկտների և աշխատանքների անվանացանկը՝ իրենց ծավալագումարային գնահատմամբ, ըստ տարիների և սպասվող արդյունքների:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Թողարկողի կողմից Կարգավորող հանձնաժողով ներկայացված 2008-2010թթ. ներդրումային ծրագրով² գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում նախատեսված ներդրումների կառուցվածքը:

(մլն ՀՀ դրամ)

h/h	Միջոցառումների անվանումը	2008թ.	2009թ.	2010թ.	Ընդամենը, 2008-2010թթ.
Գազափոխադրման համակարգ		25,448.2	2,149.4	1,360.8	28,958.4
1	Գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղված ներդրումներ	19,360.0	670.0	-	20,030.0
1.1	Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում	40.0	-	-	40.0
1.2	Շինարարական բազայի կառուցում	120.0	-	-	120.0
1.3	Նախապատրաստական աշխատանքներ (վերաբազավորում, ուղեգծի և հարթակների պատրաստում)	5,200.0	-	-	5,200.0
1.4	Հիմնական օբյեկտների կառուցում (խրամուղու պատրաստում, խողովակների մոնտաժում)	5,880.0	-	-	5,880.0
1.5	Մետաղական խողովակների ձեռքբերում (մրցույթի կազմակերպում և մատակարարում)	1,200.0	-	-	1,200.0
1.6	Տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերում (մրցույթի կազմակերպում և մատակարարում)	1,280.0	-	-	1,280.0
1.7	Օժանդակ օբյեկտների կառուցում	640.0	-	-	640.0
1.8	Տրանսպորտային տնտեսության և կապի օբյեկտների կառուցում	2,500.0	-	-	2,500.0

² Նշված ծրագրին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր համաձայնությունն է տվել 2008 թվականի մարտի 7-ի թիվ 97Ա որոշմամբ:

h/h	Միջոցառումների անվանումը	2008թ.	2009թ.	2010թ.	Ընդամենը, 2008-2010թթ.
1.9	Էլեկտրաբիմիական սլաշտպանություն	200.0	-	-	200.0
1.10	Գոյություն ունեցող գազատարների համալիր ախտորոշիչ հետազոտում և վերակառուցում	1,980.0	-	-	1,980.0
1.11	Գազատարի փորձարկման աշխատանքներ	-	620.0	-	620.0
1.12	Այլ ծախսեր (տնօրինության պահպանում, հեղինակային հսկողություն, փորձաքննություն)	320.0	50.0	-	370.0
2	Գազափոխադրման համակարգի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և ընդլայնման ուղղությամբ ներդրումների 2008-2010 թվականների կանխատեսվող ծավալը	1,277.6	767.5	739.4	2,784.5
3	Մայրուղային գազատարների կառուցում, վերատեղադրում և փոխարինում	536.2	175.5	200.5	912.2
4	Գազաբաշխիչ կայանների կառուցում, վերականգնում և արդիականացում	3,522.2	121.2	121.2	3,764.6
5	Էներգամատակարարման համակարգի վերականգնում	22.0	23.0	23.0	68.0
6	Հաշվառման համակարգի արդիականացում	42.1	38.5	40.5	121.1
7	Գծային փականների ամբողջական վերազինում կամ նորերի տեղակայում	37.5	37.5	25.0	100.0
8	Էլեկտրապաշտպանիչ կայանների վերազինում կամ նորերի տեղակայում	158.8	88.8	-	247.5
9	ՀՀ տարածքում մինչև 16-18 Մվտ հզորությամբ ճնշակայանի տեղակայման նախագծահետազոտական աշխատանքի իրականացում	171.0	-	-	171.0
10	Մեքենաներ և մեխանիզմներ	205.4	148.9	124.6	478.8
11	Ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիա	91.9	77.9	85.9	255.7
12	Ռադիոտեղեկական կապի համակարգի արդիականացում	23.6	0.7	0.7	25.1
Գազաբաշխման համակարգ		10,730.6	6,940.5	3,550.2	21,221.3
1	Շինհավաքակցման աշխատանքներ	1,042.0	-	-	1,042.0
2	Գազահաշվիչների ձեռքբերում	1,400.0	980.0	840.0	3,220.0
3	Գազաբաշխման գազատարների վերականգնում	2,402.0	1,500.0	1,500.0	5,402.0
4	Էներգամատակարարման համակարգի արդիականացում	101.4	42.7	39.3	183.4
5	Գազաբաշխման համակարգի հաշվառման համալիրի բարելավում	190.0	121.4	101.4	412.8
6	Էլեկտրապաշտպանիչ կայանների ախտորոշում, նախագծում և տեղադրում	119.3	190.8	230.5	540.5

h/h	Միջոցառումների անվանումը	2008թ.	2009թ.	2010թ.	Ընդամենը, 2008-2010թթ.
7	Ժամանակակից տեխնիկա և տեխնոլոգիա	4,438.7	3,345.1	60.9	7,844.7
8	Անվտանգության համակարգերի արդիականացում	18.9	1.2	0.8	20.9
9	Կապի համակարգի արդիականացում	56.7	44.6	43.3	144.6
10	Շենքերի, շինությունների բարեկարգում, ընդլայնում	424.0	390.0	330.0	1,144.0
11	Սեքեանների և մեխանիզմների ձեռքբերում	537.7	324.7	404.0	1,266.4
ԸՆԴԱՄԵՆԸ		36,178.8	9,089.9	4,911.0	50,179.7

3.3. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ

3.3.1. Ֆինանսական հաշվետվություններ

Թողարկողի 2005, 2006 և 2007 թվականների տարեկան, ինչպես նաև 2008 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հավելվածներ բաժնում:

3.3.2. Տեղեկություններ Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ

Վերջին 3 տարվա համար Թողարկողի գուտ շահույթի մեծությունը ներկայացված է ստորև.

	<i>մլն դրամ</i>		
	2005թ.	2006թ.	2007թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ	58,045	80,977	102,735
Համախառն շահույթ/(վնաս)	3,696	9,899	13,706
Գործառնական շահույթ/(վնաս)	(1,778)	504	4,454
Չուտ շահույթ/(վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	627	6,638	11,544
Չուտ շահույթ/(վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	627	6,638	11,194

Թողարկողի գուտ շահույթը կայուն աճի միտում ունի, քանի որ 2005 թվականի համեմատությամբ 2006թ. և 2007թ. գուտ շահույթի աճը կազմել է համապատասխանաբար շուրջ 1059% և 1785%:

Շահույթի աճի նման ցուցանիշները պայմանավորված են Թողարկողի կողմից բնական գազի իրացման ծավալների աճով: Ընդ որում՝ իրացման եկամտաբերության նման աճի հիմնական գործոն են հանդիսացել նաև արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված եկամուտները, որոնք ի հայտ են եկել ՀՀ-ում այդ տարիներին ԱՄՆ դոլարի արժեզրկման հանգամանքով: Մասնավորապես՝ 2006 և 2007 թվականներին Թողարկողի արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված եկամուտները կազմել են համապատասխանաբար 6,490 և 8,199 մլն ՀՀ դրամ: Ավելին, Թողարկողը 2006 և 2007 թվականներին օգտվել է շահութահարկի արտոնությունից և շահութահարկը նվազեցվել է 50%-ով՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վերջին 3 տարիների կտրվածքով Թողարկողի եկամտաբերության ցուցանիշները ներկայացված են ստորև.

	2005թ.	2006թ.	2007թ.
Ակտիվների եկամտաբերություն (%)	0.35	3.0	3.9
Սեփական կապիտալի եկամտաբերություն (%)	0.5	3.7	5.9
Իրացման եկամտաբերություն (%)	1.1	8.2	10.9

Ինչպես երևում է աղյուսակից, Թողարկողի եկամտաբերության բոլոր ցուցանիշները 2005-2007թթ.-ին դրսևորել են աճի միտում: Նշված ժամանակահատվածում աճել է ինչպես Թողարկողի գուտ շահույթը, այնպես էլ՝ Թողարկողի մյուս ֆինանսական ցուցանիշները (ակտիվները, սեփական կապիտալը և իրացումը), սակայն գուտ շահույթի բացարձակ աճը եղել է ավելի մեծ, քան մյուս ցուցանիշների բացարձակ աճը, ուստի յուրաքանչյուր տարի աճել է նաև եկամտաբերությունների չափը: Այս ցուցանիշների նման աճը պայմանավորված է նաև 2006 և 2007 թվականների ընթացքում Թողարկողի կողմից արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված եկամուտների մեծ ծավալով:

3.3.3. Թողարկողի ֆինանսական գործունեությունը

ա. 31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ Թողարկողի ընդհանուր պարտավորությունները կազմել են ակտիվների համապատասխանաբար 24.5%, 17.7% և 33.6%-ը:

Ոչ ընթացիկ պարտավորությունները 31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 4.5%, 2.3% և 2.0%-ը:

Ստորև ներկայացված է Թողարկողի ոչ ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը.

	<i>հազ. դրամ</i>		
	31.12.2005	31.12.2006	31.12.2007
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	907,307	57,668	1,038,437
Ակտիվներին վերաբերող շնորհներ	1,022,862	837,975	842,031
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	1,930,169	895,643	1,880,468

Ընթացիկ պարտավորությունները 31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 95.5%, 97.7% և 98.0%-ը: Թողարկողի երկարաժամկետ վարկերի և փոխառությունների գերակշիռ մասը կազմել է Թողարկողի 2007 թվականին թողարկված պարտատոմսերը, որը 2008 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվություններում այն ճանաչվել է Թողարկողի կողմից որպես «Կարճաժամկետ փոխառություններ»՝ պարտատոմսերի մարման ժամկետը 1 տարուց փոքր լինելու հանգամանքով: 31.03.2008թ. դրությամբ երկարաժամկետ վարկերի և փոխառությունները կազմում են 42,186 հազար դրամ:

Ստորև ներկայացված է Թողարկողի ընթացիկ պարտավորությունների կառուցվածքը.

	<i>հազ. դրամ</i>					
	31.12.2005	%	31.12.2006	%	31.12.2007	%
Կարճաժամկետ վարկեր	2,883,267	7.1	228,268	0.6	2,844	0.0
Կարճաժամկետ փոխառություններ	41,700	0.1	1,200	0.0	66,468,256	70.1
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	30,404,535	74.7	28,819,712	76.1	21,563,765	22.8
Ստացված ընթացիկ կանխավճարներ	5,542,026	13.6	6,265,577	16.6	5,849,531	6.2
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	978,321	2.4	1,444,708	3.8	47,467	0.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. վճարների գծով	88,648	0.2	124,657	0.3	149,425	0.2
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	304,620	0.7	515,984	1.4	512,833	0.5
Այլ կրեդիտորական պարտքեր	469,228	1.2	457,085	1.2	175,003	0.2
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	40,712,345	100	37,857,191	100	94,769,123	100

31.12.2006թ. համեմատությամբ 31.12.2007թ.-ին ընթացիկ պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է եղել Թողարկողի կարճաժամկետ փոխառությունների կտրուկ աճով, որը հիմնականում պայմանավորված է եղել Թողարկողի և «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջև 18.07.2007թ. կնքված փոխառության թիվ 1 և 07.11.2007թ. կնքված փոխառության թիվ 2 պայմանագրերով Թողարկողին «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից 186.5 մլն ԱՄՆ դոլարի (31.12.2007թ. դրությամբ Թողարկողի հաշվեկշռում արտացոլված է շուրջ 57,330 մլն ՀՀ դրամ ծավալով) փոխառության տրամադրման հանգամանքով (նշված գործարքների մանրամասնությունները բացահայտված են 3.2.7. բաժնում): Բացի «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված փոխառություններից Կարճաժամկետ փոխառությունների կառուցվածքում ընդգրկված է «Բարձրավոլտ էլեկտացանց» ՓԲԸ-ի կողմից տրված 9,137 մլն ՀՀ դրամ ծավալով փոխառությունը և 1.2 մլն ՀՀ դրամի այլ փոխառություններ: «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված փոխառությունները Թողարկողի կողմից օգտագործվել են ՀՀ տարածքում «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից գազաէներգետիկ ոլորտում ներդրումային ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

07.11.2007թ. կնքված փոխառության թիվ 2 պայմանագրով «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված 146 մլն դոլարի փոխառությունը սույն ազդագրի ներկայացման պահի դրությամբ մարվել է: Մյուս փոխառությունները Թողարկողի կողմից դեռևս մարված չեն, սակայն Թողարկողը չի տեսնում փոխառությունների մարման խոչընդոտող գործոններ:

բ. 31.12.2005թ.-ի դրությամբ Թողարկողի սեփական կապիտալի մեծությունը կազմել է 131,587,501.0 հազ. ՀՀ դրամ, 31.12.2006թ.-ի դրությամբ՝ 180,022,290.0 հազ. ՀՀ դրամ և 31.12.2007թ.-ի դրությամբ 191,215,844.0 հազ. ՀՀ դրամ:

Թողարկողի սեփական կապիտալի փոփոխությունները պայմանավորված են եղել հիմնականում 2 գործոններով՝

- ա) կուտակված շահույթի աճի ավելացմամբ, մասնավորապես՝ 2006 և 2007 թվականների ընթացքում Թողարկողի զուտ շահույթը կազմել է համապատասխանաբար 6,638 և 11,194 դրամ,
- բ) Թողարկողի կանոնադրական կապիտալի ավելացմամբ, մասնավորապես՝ 2006 թվականի ընթացքում Թողարկողի սեփական կապիտալի էական աճը (շուրջ 37%) հիմնականում պայմանավորված է եղել «Գազպրոմ» ԲԲԸ-ի օգտին լրացուցիչ 11,180,000 հատ բաժնետոմս տեղաբաշխելու մասին 05.09.2006թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ավելացնելով կանոնադրական կապիտալը 56,196,270,000 ՀՀ դրամով: Սակայն Թողարկողի 05.09.2006թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկված 11,180,000 հատ սովորական անվանական բաժնետոմսերից տեղաբաշխվել են 8,314,992-ը: Մնացած 2,865,008 հատ չվճարված բաժնետոմսերը 25.01.2008թ. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի համապատասխան որոշմամբ մարվել են:

Թողարկողի սեփական կապիտալը 2008 թվականի ընթացքում կպահպանի աճի միտումը, որը պայմանավորված կլինի նույնպես վերը նշված հանգամանքներով՝ մասնավորապես՝ 25.01.2008թ.բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից որոշում է ընդունվել ավելացնել Թողարկողի կանոնադրական կապիտալը 95,503,500,000 ՀՀ դրամի չափով՝ լրացուցիչ թողարկելով 19,000,000 հատ սովորական անվանական բաժնետոմս: Կանոնադրական կապիտալի նշված ավելացումը գրանցվել է 28.04.2008թ.: 2008 թվականի ընթացքում սեփական կապիտալը կաճի նաև 2008 թվականի ընթացքում ստացվող զուտ շահույթի չափով:

3.4. Տեղեկություններ Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ

3.4.1. Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ

ա. Թողարկողի կառավարման մարմինների կառուցվածքն ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Թողարկողի կանոնադրությամբ Թողարկողի կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

Բաժնետերերի ընդհանուր ժողով

1. Թողարկողի կառավարման բարձրագույն մարմինն է հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով):
Թողարկողը պարտավոր է ամեն տարի գումարել ընդհանուր ժողով:
Թողարկողի բաժնետերերի հիմնադիր ժողովը համարվում է նրա առաջին ընդհանուր ժողովը:
2. Ժողովում իրավունք ունեն մասնակցել Թողարկողի բոլոր բաժնետերերը, անկախ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակից կամ պատշաճ կերպով լիազորված բաժնետերերի ներկայացուցիչները:
Մեկ բաժնետիրոջ ներկայացուցիչների քանակը չի սահմանափակվում:
Բաժնետերերի ներկայացուցիչները կարող են լինել մշտական կամ մշանակվել որոշակի ժամկետով:
Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխարինել իր ներկայացուցչին ընդհանուր ժողովում՝ տեղյակ պահելով Թողարկողի վարչությանը դրա մասին:
Ընդհանուր ժողովում մասնակցող բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները) գրանցվում են՝ նշելով իրենց պատկանող ձայների քանակը: Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ցուցակը ստորագրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:
Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Թողարկողի բաժնետեր չհանդիսացող Թողարկողի տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի անդամները:
3. Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.
 - ա) Թողարկողի կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, Թողարկողի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
 - բ) Թողարկողի վերակազմակերպումը.
 - գ) Թողարկողի լուծարումը, լուծարքային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարքային հաշվեկշիռների հաստատումը.
 - դ) Թողարկողի տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Թողարկողի տնօրենների խորհրդի կանոնակարգի հաստատումը, պարզևատրման սահմանումը.
 - ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
 - զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Թողարկողի կանոնադրական կապիտալի չափի մեծացումը.
 - է) Թողարկողի կանոնադրական կապիտալի նվազեցումը բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման ճանապարհով, ընդհանուր ժողովի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերմամբ բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով.
 - ը) Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, պարզևատրման սահմանումը.
 - թ) Թողարկողի աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
 - ժ) Թողարկողի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշվի, Թողարկողի շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, ինչպես նաև Թողարկողի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը.
 - ժա) Ընդհանուր ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
 - ժբ) Թողարկողի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը.
 - ժգ) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը).
 - ժդ) գործարքների կնքումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածով նախատեսված դեպքերում.

- ժե) Թողարկողի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.
- ժզ) Թողարկողի տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետգնումը.
- ժէ) Թողարկողի ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը.
- ժը) Օրենսդրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
4. Թողարկողի կանոնադրության 9.3. հոդվածի «ա»-ից «ժէ» ենթակետերով սահմանված հարցերով որոշումների ընդունումը հանդիսանում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել Թողարկողի տնօրենների խորհրդին:
Թողարկողի ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք չեն սահմանվել որպես Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություն:
 5. Բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությունը կատարվում է հետևյալ սկզբունքով՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն:
 6. Ընդհանուր ժողովում կատարվում է բաց քվեարկություն:
 7. Ընդհանուր ժողովը իրավագոր է, եթե նրա մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Թողարկողի ձայնի իրավունք տվող ոչ պակաս 75% տեղաբաշխված բաժնետոմսեր ունեցող Թողարկողի բաժնետերերը (ներառյալ ներկայացուցիչները):
Եթե Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավել, ապա յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:
 8. Բոլոր հարցերով որոշումները Թողարկողի հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովում ընդունվում են ձայնի իրավունք տվող բաժնետոմս ունեցող և ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով:
 9. Ընդհանուր ժողովը գումարվում է ամեն տարի Թողարկողի տնօրենների խորհրդի կողմից, հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 2-ից 6 ամսյա ժամկետում հաջորդաբար՝ Հայաստանում և Ռուսաստանում: Թողարկողի ընդհանուր տարեկան ժողովների միջև ժամանակահատվածը չպետք է գերազանցի 18 ամիսը:
Եթե Թողարկողի տնօրենների խորհուրդը սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում չի հրավիրում բաժնետերերի ընդհանուր ժողով, ապա նրա գումարումը և իրականացումը կարող է կազմակերպվել պետական ռեգիստրի մարմնի կողմից:
Բացի բաժնետերերի տարեկան ժողովից Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովները հրավիրվում են համարվում են արտահերթ:
Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Օրենսդրությամբ սահմանված կարգով:
 10. Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Թողարկողի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերստուգող հանձնաժողովի, Թողարկողի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Թողարկողի առնվազն 10% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ պահանջով: Թողարկողի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ Թողարկողի տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանվում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:
 11. Ընդհանուր ժողովի քննարկման ենթակա որոշումները կարող են ընդունվել առանց ընդհանուր ժողովի անցկացման, նախնական տեղեկացմամբ և առանց քվեարկության, պայմանով, որ բոլոր բաժնետերերը գրավոր ձևով կարտահայտեն իրենց համաձայնությունը այդ որոշման նկատմամբ: Թողարկողի կանոնադրության 9.3. կետի «ժ» ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա քվեարկությամբ:
 12. Ընդհանուր ժողովի օրակարգը սահմանում և հաստատում է Թողարկողի տնօրենների խորհուրդը:
 13. Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման, տեղի, ժամանակի, անցկացման և օրակարգի մասին Թողարկողի տնօրենների խորհուրդը տեղեկացնում է բաժնետերերին ընդհուպ ժողովի անցկացման օրից ոչ ուշ քան 3 շաբաթ առաջ: Ընդհանուր ժողովի ընթացքի վերաբերյալ 15 օրվա ընթացքում արձանագրություն է կազմվում 2 օրինակից, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

Թողարկողի տնօրենների խորհուրդը

1. Թողարկողի գործունեության ընդհանուր ղեկավարությունը բաժնետերերի ժողովների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է Թողարկողի տնօրենների խորհուրդը, բացառությամբ այն հարցերի, որոնք պատկանում են նրա բացառիկ իրավասությանը: Թողարկողի տնօրենների խորհուրդն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 7 հոգանոց կազմով (3 ներկայացուցիչ ՀՀ էներգետիկայի նախարարությունից, 3 ներկայացուցիչ «Գազպրոմ» ԲԲԸ-ից և 1 ներկայացուցիչ «Իտերա» ՍԷԿ-ից):
Ընկերությունը կազմում է Թողարկողի տնօրենների խորհրդի անդամների ցուցակները, որոնք հասու են Թողարկողի բաժնետերերին ծանոթացման համար և պարունակում են տվյալներ նախատեսված «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:
2. Թողարկողի տնօրենների խորհուրդն ընտրում է.
 - Թողարկողի խորհրդի նախագահին խորհրդի անդամների կազմից «Գազպրոմ» ԲԲԸ-ի ներկայացմամբ.
 - Թողարկողի տնօրենների խորհրդի նախագահի տեղակալին՝ խորհրդի անդամների կազմից, ՀՀ էներգետիկայի նախարարության ներկայացմամբ:Թողարկողի տնօրենների խորհրդի նախագահը և նախագահի տեղակալն ընտրվում են խորհրդի նիստին ներկա խորհրդի անդամների ձայների 3/4-ով:
3. Թողարկողի տնօրենների խորհրդի անդամներն իրենց պարտականությունների կատարման համար վարձատրվում են կամ ստանում են փոխհատուցում, կապված իրենց կողմից խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Վարձատրության կամ փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:
4. Իր իրավասությանը պատկանող հարցերը Թողարկողի տնօրենների խորհուրդը քննարկում է նիստերի ժամանակ, որոնք անցկացվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ:
Խորհուրդն իրավասու է որոշումներ ընդունել, եթե նրա նիստերին մասնակցում են խորհրդի ոչ պակաս, քան հինգ անդամ՝ բոլոր հիմնադիրների ներկայացուցիչների մասնակցության պայմանով:
Թողարկողի տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների 3/4-ով:
Քվեարկության ժամանակ Թողարկողի տնօրենների խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Թողարկողի տնօրենների խորհրդի մեկ անդամից խորհրդի մյուս անդամին չի թույլատրվում:
5. Թողարկողի տնօրենների խորհրդի լիազորության տևողությունը մեկ տարի է (մինչև հաջորդ ընդհանուր ժողովը):
Թողարկողի տնօրենների խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Թողարկողի տնօրենների որևէ խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
6. Թողարկողի տնօրենների խորհրդի որոշումները կարող են ընդունվել առանց խորհրդի նիստի, հեռակա քվեարկությամբ (գրավոր):
7. Թողարկողի տնօրենների խորհրդի գործունեության իրականացման կազմակերպումը և ձևը սահմանվում է նրա կանոնակարգով, որը հաստատվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
8. Թողարկողի տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում.
 - ա) Թողարկողի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
 - բ) Թողարկողի բաժնետերերի ընդհանուր և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ այն դեպքերի որոնք սահմանված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի 6-րդ կետով:
 - գ) Թողարկողի գործադիր մարմնի (Գլխավոր տնօրեն, վարչություն) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
 - դ) ընդհանուր ժողովի օրակարգի հաստատումը.
 - ե) ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ ու տրված են Թողարկողի տնօրենների խորհրդի իրավասությանը:

- զ) Թողարկողի կանոնադրության 9 հոդվածի 9.3. կետի «բ», «ժբ»-ից «ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.
 - է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
 - ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածով սահմանված կարգով.
 - թ) Թողարկողի վերստուգող հանձնաժողովի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի պայմանների վերաբերյալ Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
 - ժ) Թողարկողի աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.
 - ժա) տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
 - ժբ) միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
 - ժգ) Թողարկողի պահուստային ֆոնդի օգտագործումը.
 - ժդ) Թողարկողի կառավարման մարմինների (բացառությամբ Թողարկողի տնօրենների խորհրդի կանոնակարգի) գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
 - ժե) Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
 - ժզ) ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումը.
 - ժէ) դուստր ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը.
 - ժը) Թողարկողի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը.
 - ժթ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.
 - ի) Թողարկողի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.
 - իա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ գլխով նախատեսված գործարքների կնքումը.
 - իբ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
9. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել իր իրավասության ենթակա առանձին ֆունկցիաները Թողարկողի տնօրենների խորհրդին փոխանցելու մասին, հաշվի առնելով Թողարկողի կանոնադրության 9.4. կետի պահանջները:
10. Թողարկողի տնօրենների խորհրդի ղեկավարները և անդամները չեն կարող լինել Թողարկողի վարչության անդամներ:

Թողարկողի գործադիր մարմին

1. Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը Թողարկողի Վարչության հետ համատեղ: Այդ մարմինները կազմակերպում են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի և Թողարկողի տնօրենների խորհրդի որոշումների կատարումը:
 Թողարկողի Վարչությունը նշանակվում է Թողարկողի խորհրդի կողմից 7 անդամ կազմով (երեք ներկայացուցիչ «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից, երեք ներկայացուցիչ ՀՀ էներգետիկայի նախարարության կողմից և մեկ ներկայացուցիչ «Իտերա» ՍԷԿ-ի կողմից):
 Գլխավոր տնօրենը նշանակվում է Թողարկողի տնօրենների խորհրդի կողմից, Թողարկողի վարչության անդամներից՝ ՀՀ էներգետիկայի նախարարության առաջադրմամբ:
 Գլխավոր տնօրենը կատարում է Թողարկողի Վարչության նախագահի պարտականությունները:
 Վարչության նախագահի տեղակալը նշանակվում է Թողարկողի խորհրդի կողմից «Գազպրոմ» ԲԲԸ-ի առաջադրմամբ:
 Գլխավոր տնօրենի հետ պայմանագիրը Թողարկողի անունից կնքում է Թողարկողի տնօրենների խորհրդի նախագահը:
2. Թողարկողի Գլխավոր տնօրենը (Վարչության նախագահը).
 ա) տնօրինում է Թողարկողի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Թողարկողի անունից, բացառությամբ խոշոր գործարքների, Օրենսդրության համապատասխան.

- բ) ներկայացնում է Թողարկողին ՀՀ-ում և արտասահմանում.
 - գ) գործում է առանց լիազորագրի.
 - դ) տալիս է լիազորագրեր.
 - ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
 - զ) բանկերում բացում է Թողարկողի հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ.
 - է) Թողարկողի տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Թողարկողի Վարչության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը.
 - ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
 - թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Թողարկողի աշխատակիցներին.
 - ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
3. Թողարկողի Վարչությունն ընդունում է որոշումներ Թողարկողի գործունեության բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք պատկանում են ընդհանուր ժողովի, Թողարկողի տնօրենների խորհրդի և Գործադիր տնօրենի իրավասությանը:
 4. Թողարկողի Վարչությունը գործում է սույն կանոնադրության, ինչպես նաև Թողարկողի տնօրենների խորհրդի կողմից հաստատված Վարչության կազմը, նրա նիստերի գումարման, անցկացման և որոշումներ ընդունելու կարգը սահմանող Վարչության գործունեության կանոնակարգի հիման վրա:
 5. Թողարկողի վարչության նիստերը հրավիրվում են Վարչության նախագահի կողմից՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:
 6. Թողարկողի խորհրդի անդամները, Թողարկողի Գլխավոր տնօրենը, Թողարկողի Վարչության անդամները Թողարկողի առջև Օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Թողարկողին պատճառած վնասների համար:
Թողարկողին հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են Թողարկողի տնօրենների խորհրդի կամ Վարչության այն անդամները, որոնք Թողարկողին վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:
Թողարկողի տնօրենների խորհրդի կամ վարչության անդամի հրաժարականը կամ պաշտոնից հեռ կանչելը կամ ազատելը չի ազատում նրան Թողարկողին հասցրած վնասի համար պատասխանատվությունից:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը

1. Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում է վերստուգող հանձնաժողովը, որն ընտրվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով, երեք հոգանոց կազմով՝ մեկական ներկայացուցիչ յուրաքանչյուր հիմնադրի կողմից:
Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, «ԻՏԵԲԱ»-ի ներկայացմամբ:
Վերստուգող հանձնաժողովի անդամները հաշվետու են Թողարկողի հիմնադիրների ընդհանուր ժողովին:
2. Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:
3. Վերստուգող հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով:
4. Վերստուգող հանձնաժողովը Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը իրավունք ունի իրականացնել սեփական նախաձեռնությամբ, Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
5. Վերստուգող հանձնաժողովը ինքնուրույն, առանց իր գործունեության մեջ որևէ միջամտության ստուգում է Թողարկողի հաշվապահական փաստաթղթերը, հաշվետվությունների

- համապատասխանությունը գործող օրենքներին և այլ նորմատիվ ակտերին, վարչության հաշվետվության տեղեկատվության, տարեկան հաշվեկշռի ճշտությունը և ճշգրտությունը:
6. Թողարկողի պաշտոնատար անձինք և աշխատակիցները ստուգումները անցկացնելու նպատակով պարտավոր են վերստուգող հանձնաժողովին տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթեր:
 7. Թողարկողի գործունեության հաշվետվության և տարեկան հաշվեկշռի ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը վերստուգող հանձնաժողովը ներկայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովին:
 8. Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն մասնակցել Թողարկողի վարչության նիստերին՝ առանց ձայնի իրավունքի:
 9. Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության ստուգում անցկացնելու մասին ինչպես վերստուգող հանձնաժողովի կողմից, այնպես էլ անկախ աուդիտորական ծառայության (աուդիտորի) կողմից:
 10. Առանց ստուգումն անցկացնող վերստուգող հանձնաժողովի կամ անկախ աուդիտորական ծառայության եզրակացության, ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել Թողարկողի հաշվեկշիռը:
 11. Վերստուգող հանձնաժողովը պարտավոր է պահանջել ընդհանուր ժողովի արտահերթ գումարում Թողարկողի շահերին սպառնալիք առաջանալու կամ Թողարկողի ղեկավարության կողմից չարաշահումներ հայտնաբերելու դեպքում:
 12. Վերստուգող հանձնաժողովը պատասխանատու չէ վարչության անդամների, ինչպես նաև ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարված խախտումների համար, բացառությամբ այն դեպքերի, եթե վերստուգող հանձնաժողովը տեղյակ է եղել նշված խախտումների մասին, բայց չի տեղեկացրել այդ մասին Թողարկողի տնօրենների խորհրդին և/կամ ընդհանուր ժողովին:

բ. Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Անուն, ազգանուն Մասնակցությունը կառավարման մարմիններում	Գործունեության վայրը (բնակության վայրը (հասցեն)), Մասնագիտությունը	Վերջին 3 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոնները, այդ թվում համատեղությամբ
Գոլուբև Վալերի Ալեքսանդրի Տնօրենների խորհրդի նախագահ	Ռ-Դ, ք. Սանկտ-Պետերբուրգ, Մորսկայա նրբ. 45, բն. 118 Տնտեսագետ	2007թ. հուլիսից առ այսօր զբաղեցնում է Թողարկողի Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը 2003թ. փետրվարից առ այսօր՝ «Գազկոնսոլիդացիա» ՍՊԸ-ի Գլխավոր տնօրեն, «Գազպրոմ» ԲԲԸ-ի վարչության անդամ 2006թ. նոյեմբերից «Գազպրոմ» ԲԲԸ-ի վարչության նախագահի տեղակալ
Մովսիսյան Արմեն Խիկարի Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ	ՀՀ, ք. Երևան, Սունդուկյան փող., 26 շենք, բն. 26 Ինժեներ-մեխանիկ	2002թ.-ից առ այսօր զբաղեցնում է Թողարկողի Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնը 2001թ.-առ այսօր՝ ՀՀ էներգետիկայի նախարար
Կարպել Ելենա Եվգենիի Տնօրենների խորհրդի անդամ	Ռ-Դ, ք. Մոսկվա, Նովոչերյոմուշկայի փող. 71/32, բն. 67 Տնտեսագետ	1999 թվականից Թողարկողի Տնօրենների խորհրդի անդամ է 1997թ.-առ այսօր՝ «Գազպրոմ» ԲԲԸ-ի Տնտեսական փորձաքննության և գնագոյացման դեպարտամենտի տնօրեն 25.06.2004թ.-ից՝ «Գազպրոմ» ԲԲԸ-ի

Անուն, ազգանուն Մասնակցությունը կառավարման մարմիններում	Գործունեության վայրը (բնակության վայրը (հասցեն)), Մասնագիտությունը	Վերջին 3 տարվա ընթացքում գրադեցրած ղեկավար պաշտոնները, այդ թվում համատեղությամբ
		Տնօրենների խորհրդի անդամ
Լավրով Գեորգի Գեորգի Տնօրենների խորհրդի անդամ	Ռ.Գ., ք. Սանկտ-Պետերբուրգ, Բասեյնայա փող. 47 շենք, բն. 67 Տնտեսագետ	2008 թ. հունիսի 27-ից Թողարկողի Տնօրենների խորհրդի անդամ է 2007թ.-ից՝ «Գազպրոմ» ԲԲԸ Գույքի կառավարման և կորպորատիվ հարաբերությունների ղեկարարամենտի Գույքի հետ կապված աշխատանքի կազմակերպման վարչության պետ
Իսայան Իոսիֆ Գեորգի Տնօրենների խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան, 16 թաղամաս, 33 շենք, բն. 64 Տնտեսագետ	2002 թվականից Թողարկողի Տնօրենների խորհրդի անդամ է 2001թ.-առ այսօր՝ ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ
Կարապետյան Կարեն Վիկտորի Վարչության նախագահ- Գլխավոր տնօրեն, Տնօրենների խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան, Ա. Ավետիսյան փող., 4 շենք, բն. 2 Մաթեմատիկ	2001թ.-ից առ այսօր գրադեցնում է Թողարկողի Վարչության նախագահ- Գլխավոր տնօրենի պաշտոնը 2004 թ.-ից Թողարկողի Տնօրենների խորհրդի անդամ է
Սկիդանով Գեորգի Նիկոլայի Տնօրենների խորհրդի անդամ	Ռ.Գ., ք. Մոսկվա, Ակադեմիկ Կորոլյովի փող., 4 շենք, մասնաշենք 2, բն. 468 Տնտեսագետ	2003թ.-ից Թողարկողի Տնօրենների խորհրդի անդամ է 2001թ.-ից՝ «ՆԳԿ «Իտերա» ԲԲԸ-ի վարչության նախագահի տեղակալ, Գլխավոր առևտրային վարչության պետ
Գյուլումյան Բորիս Հակոբի Վարչության անդամ	ՀՀ, ք. Երևան, Կուզնեցովի փող., 14 շենք, բն. 26 Տնտեսագետ	2002թ.-ից Թողարկողի Վարչության անդամ է 2001թ.-ից՝ ՀՀ էներգետիկայի նախարարության Գլխավոր ֆինանսատնտեսական վարչության պետ
Հովսեփյան Աշոտ Միքայելի Վարչության անդամ	ՀՀ, ք. Երևան, Ուլնեցու 66, բն. 49 Ինժեներ-տեխնոլոգ	2001թ.-ից Թողարկողի Վարչության անդամ է 2001թ.-առ այսօր՝ Թողարկողի Գլխավոր տնօրենի տեղակալ- Գլխավոր ճարտարագետ
Պողոմիշյանի Անատոլի Արկադիի Վարչության նախագահի տեղակալ	Ռ.Գ., ք. Մոսկվա, Ստարոկազարովսկայա 4, բն. 42 Ինժեներ	1997թ.-ից Թողարկողի Վարչության նախագահի տեղակալ է 1996թ.-առ այսօր՝ «Գազպրոմ» ԲԲԸ-ի Մերձավոր երկրների հետ աշխատանքի վարչության պետ
Բորովկա Ելենա Իգորի Վարչության անդամ	Ռ.Գ., ք. Մոսկվա, Նովոյերյոմուշկայի փող. 71/32, բն. 197 Տնտեսագետ	Թողարկողի Տնօրենների խորհրդի 27.02.2008թ. թիվ 10/50-2008 որոշման համաձայն նշանակվել է Թողարկողի Վարչության անդամ 2005թ.-առ այսօր՝ «Գազպրոմ» ԲԲԸ-ի Արտաքին տնտեսական

Անուն, ազգանուն Մասնակցությունը կառավարման մարմիններում	Գործունեության վայրը (բնակության վայրը (հասցեն)), Մասնագիտությունը	Վերջին 3 տարվա ընթացքում գրադեցրած ղեկավար պաշտոնները, այդ թվում համատեղությամբ
		գործունեության ղեկարտամենտի միջազգային ծրագրերի վարչության պետի տեղակալ
Տերնյուկ Ալեքսանդր Միխայիլի Վարչության անդամ	Ռ-Դ, ք. Մոսկվա, պրոսպ. Սիրա 89, բն. 71 Ինժեներ	Թողարկողի Տնօրենների խորհրդի 27.02.2008թ. թիվ 10/50-2008 որոշման համաձայն նշանակվել է Թողարկողի Վարչության անդամ 2006թ.-առ այսօր՝ «Գազպրոմ» ԲԲԸ-ի Մերձավոր երկրների հետ աշխատանքի վարչության բաժնի պետ
Ախմետովալեն Նաիլ Իսխակի Վարչության անդամ	Ռ-Դ, ք. Մոսկվա, Ստրոիտելյ փող., շենք 7, 1-ին մասնաշենք, բն. 108 Ինժեներ-տեխնոլոգ	2003թ.-ից Թողարկողի Վարչության անդամ է 2000թ.-առ այսօր՝ «ՆԳԿ «Իտերա» ԲԲԸ-ի Առևտրային վարչության գազի գնման, Միջին Ասիայի հանրապետություններ գազի իրացման և տրանսպորտային բաժնի պետ
Սալիկով Պավել Բորիսի Վերստուգող հանձնաժողովի նախագահ	Ռ-Դ, ք. Կորոլյով, Ստրոիտելյ փող., 14 շենք, բն.5 Հաշվապահ-տնտեսագետ	2001թ.-ից Թողարկողի վերստուգող հանձնաժողովի նախագահ է 2001թ.-ից «Իտերա-Հոլդինգ» ընկերության Ներքին աուդիտի վարչության Վերլուծությունների բաժնի պետ
Կովալյով Վիտալի Անատոլիի Վերստուգող հանձնաժողովի անդամ	Ռ-Դ, ք. Մոսկվա, Բալակլավսկի պող., տուն 18, մասն. 1, բն.179 Տնտեսագետ	2006թ.-ից Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամ է 2005թ.-ից՝ «Գազպրոմ» ԲԲԸ Գազամատակարարման համակարգի աշխատանքի ապահովման գծով ընկերությունների գործունեության վերահսկողության վարչության պետի տեղակալ
Հակոբյան Վալերի Նիկոլայի Վերստուգող հանձնաժողովի անդամ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Հ.Հովհաննիսյան 24/3, բն. 12 Հաշվապահ-տնտեսագետ	2003թ.-ից Թողարկողի վերստուգող հանձնաժողովի անդամ է 2002թ.-ից՝ Թողարկողի Ներքին աուդիտի և ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության վարչության պետ

գ. Թողարկողի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի որևէ բախում չկա:

3.5. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի սեփականատերերի վերաբերյալ

3.5.1. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ

ա. Թողարկողի հետ փոխկապակցված ֆիզիկական անձինք չկան:

բ. Ստորև ներկայացվում են Թողարկողի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկությունները.

1. Թողարկողի հետ փոխկապակցված իրավաբանական անձ է հանդիսանում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, Նամետկինի փող. 16 հասցեում: «Գազպրոմ» ԲԲԸ-ին պատկանում է Թողարկողի բաժնետոմսերի 57.59%-ը: Այն աշխարհի խոշորագույն ընկերություններից է, որը զբաղվում է բնական գազի արդյունահանմամբ, փոխադրմամբ և վաճառքով: Ռուսաստանի Դաշնությունը «Գազպրոմ» ԲԲԸ-ի հիմնական բաժնետերերն է՝ նրան է պատկանում ընկերության բաժնետոմսերի 50.002%-ը: «Գազպրոմ» ԲԲԸ-ն տնօրինում է բնական գազի համաշխարհային պաշարների 16%: Նրա երկրաբանահետախուզական պաշարները գնահատվում են մոտ 28.8 տրիլիոն խորանարդ մետր: Ընկերությանն են պատկանում Ռուսաստանի գազամատակարարման միացյալ համակարգի մայրուղային գազատարները: Այն կազմում է ավելի քան 150 հազ. կմ և համարվում է աշխարհի խոշորագույն գազափոխադրման համակարգերից մեկը: «Գազպրոմ» ԲԲԸ-ի գործունեությունը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

- 20% համաշխարհային գազի արդյունահանում,
- 30% եվրոպական շուկա,
- 15,0 մլրդ ԱՄՆ դոլարի տարեկան շրջանառություն,
- 20% ՌԴ բյուջետային դրամական մուտք,
- 58 ընկերություններ և մասնաճյուղեր,
- մասնակցում է 100 ընկերությունների հիմնադիր կապիտալում,
- 300 հազար աշխատողներ ամբողջ աշխարհում:

Թողարկողի Տնօրենների խորհրդի նախագահ Վալերի Գոլուբը և Տնօրենների խորհրդի անդամ Ելենա Կարպելը «Գազպրոմ» ԲԲԸ-ում զբաղեցնում են համապատասխանաբար Վարչության նախագահի տեղակալի և Տնօրենների խորհրդի անդամի պաշտոններ:

2. Թողարկողի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում ՀՀ էներգետիկայի նախարարությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեում: ՀՀ էներգետիկայի նախարարությանն է պատկանում Թողարկողի բաժնետոմսերի 34.7%-ը: ՀՀ էներգետիկայի նախարարությունը ստեղծվել է 1992 թվականին՝ էներգետիկ ճգնաժամի հաղթահարման, ինչպես նաև ոլորտի սեփականաշնորհման ու բարեփոխման գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով: Էներգետիկայի նախարարության գործունեության ծրագրային հիմնարար ուղղություններն են.

- 1) սպառողների արմատական կարիքները բավարարելու համար ապահովել ցածր գներով հուսալի էներգամատակարարում՝ միևնույն ժամանակ խթանելով երկրում էներգախնայողությունը,
- 2) խուսափել էներգիայի ներկրման այնպիսի եղանակներից, որոնց դեպքում Հայաստանի անվտանգությունն ու տնտեսությունը կարող են ենթարկվել ՀՀ իրավասությունից դուրս գտնվող իրադարձությունների ու քաղաքականության անհարկի ազդեցությանը, երկրի էներգետիկ հաշվեկշռում առավելագույնս օգտագործել սեփական վերականգնվող էներգառեսուրսները և միջուկային էներգիան,
- 3) ապահովել Հայկական ԱԷԿ-ի (այսուհետ՝ ՀԱԷԿ) անվտանգ շահագործումը մինչև ներառյալ 2016թ. կամ մինչև այն պահը, երբ հնարավոր կլինի այն փոխարինել նոր միջուկային հզորությամբ և շահագործումից հանել՝ առանց անընդունելի տնտեսական, սոցիալական, բնապահպանական և էներգետիկ անվտանգության բնույթի ազդեցությունների,
- 4) ապահովել բնապահպանորեն կենսունակ էներգամատակարարում՝ հիմնված կայուն զարգացման սկզբունքների վրա և համահունչ ՀՀ միջազգային բնապահպանական պարտավորություններին,
- 5) կառուցել ֆինանսապես կենսակայուն էներգահամակարգ՝ էներգիա մատակարարող բոլոր կառույցների տնտեսապես արդյունավետ գործունեությամբ և մասնավոր կապիտալի մասնակցությամբ,
- 6) կառուցել արտահանման կողմնորոշում ունեցող և ավելացված արժեք ստեղծող էլեկտրաէներգետիկական համակարգ:

Թողարկողի Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ Արմեն Մովսիսյանը ՀՀ էներգետիկայի նախարարն է, իսկ Տնօրենների խորհրդի անդամ Իոսիֆ Իսայանը ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալն է:

3. Թողարկողն ունի 6 դուստր ընկերություն, որոնց 100% բաժնեմասը պատկանում է իրեն, այսինքն՝ դրանք գտնվում են Թողարկողի հսկողության տակ: Այդ ընկերություններն են՝

- ա) «ՀայՌ-ուսագարդ» ՓԲԸ «Բութան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Պտղնի: Ընկերության կողմից իրականացվող գործունեության հիմնական տեսակներն են՝
- հեղուկ գազի ընդունում, պահեստավորում, տեղափոխում և իրացում,
 - հեղուկ գազի բալոնների վերանորոգում և վկայագրման աշխատանքների իրականացում,
 - գազալիցքավորման կայանների սարքավորումների շահագործում, ընթացիկ վերանորոգում և կարգաբերում,
 - բութանաօդային խառնուրդի արտադրություն և ալյն:
- բ) «ՀայՌ-ուսագարդ» ՓԲԸ «Ավտոտրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Մայակովսկի: Ընկերության կողմից իրականացվող գործունեության հիմնական տեսակներն են՝
- ավտոտրանսպորտային ծառայությունների մատուցում,
 - ավտոմեքենաների հիմնական և ընթացիկ վերանորոգում, տեխնիկական սպասարկում ու շահագործում և ալյն:
- գ) «ՀայՌ-ուսագարդ» ՓԲԸ «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի: Ընկերության կողմից իրականացվող գործունեության հիմնական տեսակներն են՝
- բնական գազի տեղափոխում,
 - տեղափոխվող և պահեստավորվող բնական գազի հաշվառում,
 - գազի ստորգետնյա պահեստարաններում բնական գազի ներմղում, պահեստավորում ու բացթողում և ալյն:
- դ) «ՀայՌ-ուսագարդ» ՓԲԸ «Ավտոգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 27/3: Ընկերության կողմից իրականացվող գործունեության հիմնական տեսակներն են՝
- սեղմված բնական և հեղուկ գազի ընդունում, պահեստավորում, տեղափոխում և իրացում,
 - հեղուկ և բնական սեղմված գազի ավտոգազալակայանների և հեղուկ գազ տեղափոխող ու լիցքավորող ավտոցիստեմների տեխնիկական շահագործում, ընթացիկ վերանորոգում և անվտանգ սպասարկում, թողարկման և կարգաբերման աշխատանքներ,
 - ավտոմեքենաների լիցքավորում հեղուկ և բնական սեղմված գազով (որպես շարժիչային վառելիք),
 - ավտոմեքենաների գազաբալոնային սարքավորումների տեղադրում, փորձարկում, կարգաբերում, նորոգում, վկայագրում,
 - ճնշման տակ աշխատող անոթների տեխնիկական վկայագրում և ալյն:
- ե) «ՀայՌ-ուսագարդ» ՓԲԸ «Տրանսգազ շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 41: Ընկերության կողմից իրականացվող գործունեության հիմնական տեսակներն են՝
- մեծ շառավղով մայրուղային խողովակաշարերի, բաշխիչ գազատարների և գազային ցանցերի, այդ թվում պոլիէթիլենային խողովակներով, գազի ստորգետնյա պահեստավորման, կարգավորող, գազի չափման, ավտոգազալցավորման կարգավորիչ կայանների, գազալիցքավորման կայանների շինարարություն,
 - հորատման-պայթեցման աշխատանքների իրականացում, ստորգետնյա պահեստարանների շինարարություն և վերանորոգում, հատուկ աշխատանքներ գրունտներում,
 - ջրատարների, ջրատար ցանցերի, կոյուղիների և ջերմային ցանցերի շինարարություն,
 - բարձր լարման կայանների, էլեկտրահաղորդման գծերի, էլեկտրակայանների, սարքերի և սարքավորումների փորձարկման, շինհավաքակցման, վերանորոգման, թողարկման-կարգաբերման աշխատանքների իրականացում,
 - արդյունաբերական և քաղաքացիական նշանակության օբյեկտների շինարարություն, հիդրոտեխնիկական շինարարություն: Ավտոճանապարհների հիմքերի և ծածկերի աշխատանքների ու տարածքների բարեկարգման իրականացում,
 - ճանապարհաշինարարական տեխնիկայի, հորատման մեքենաների ու սարքերի հիմնական, ընթացիկ վերանորոգում ու սպասարկում և ալյն:
- զ) «ՀայՌ-ուսագարդ» ՓԲԸ «Արմավիրի գազմաշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Նորապատ, 5-րդ փող., թիվ 3: Ընկերության կողմից իրականացվող գործունեության հիմնական տեսակներն են՝

- մեքենաշինական արտադրանքի արտադրություն,
- մետաղյա, պլաստմասսե և փայտե իրերի արտադրություն,
- գազի սարքերի և սարքավորումների արտադրություն,
- կենցաղային և արդյունաբերական նշանակության սարքավորումների արտադրություն և այլն:

- է) **«Ֆակել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**, որի գտնվելու վայրն է՝ Վրաստանի Հանրապետություն, Մցխետիի տարածաշրջան, գյուղ Նատախտարի:
- ը) **«Մտրոխել» դուստր ձեռնարկությունը**, որի գտնվելու վայրն է՝ Ուկրաինա, Դոնեցկի տարածաշրջան, գյուղ Սելիդովո, Լեսի Ուկրաինի փող.:
- թ) **«Մտրոյինժպրոյեկտգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**, որի գտնվելու վայրն է՝ ՌԴ, ք. Մոսկվա, 16-րդ Պարկովայա փող., 21 շենք, բն. 1:

Վերջին 3 ընկերությունները զբաղվում են գազի խողովակների արտադրությամբ և գազատարների շինարարությամբ:

4. Թողարկողի բաժնետեր **«Գազպրոմ» ԲԲԸ-ի հետ փոխկապակցված անձինք** հանդիսանում են նաև Թողարկողի հետ փոխկապակցված, քանի որ Թողարկողը և այդ ընկերությունները գտնվում են ընդհանուր հսկողության տակ: «Գազպրոմ» ԲԲԸ-ի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հանդիսանում է հրապարակային և բացահայտված է ընկերության՝ www.gazprom.ru ինտերնետային կայքում:

3.5.2. Տեղեկություններ Թողարկողի նշանակալից սեփականատերերի վերաբերյալ

Թողարկողի նշանակալից սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձինք չկան:

3.6. Տեղեկություններ Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ

3.6.1. Թողարկողի կողմից նախկինում թողարկվել և տեղաբաշխվել են փաստաթղթային անվանական սովորական բաժնետոմսեր և ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր:

3.6.2. Տեղաբաշխված բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն: Պարտատոմսերը ցուցակված են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում, գրանցման համարն է՝ ASE/ARS0275, տարբերակիչ ծածկագիրը (ISIN)՝ AMHRGAB01ER4:

«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի (այսուհետև՝ ՀՖԲ) տվյալներն են՝
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մեծ Սկրտչյան 5բ,
Հեռ./ֆաքս՝ (374 10) 543 324,
Էլ. փոստ՝ info@armex.am:

3.6.3. Տեղաբաշխված բաժնետոմսերի քանակն ազդագիրը ներկայացնելու պահին կազմում է 55,314,992 հատ՝ յուրաքանչյուրը 5,026.5 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 278,040,807,288 (երկու հարյուր յոթանասուներե միլիարդ քառասուն միլիոն ութ հարյուր յոթ հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ:

Տեղաբաշխված պարտատոմսերի քանակը կազմում է 100,000 հատ՝ յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը կազմում է 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ:

3.6.4. Համաձայն Թողարկողի գրանցման վկայականի՝ Թողարկողի գործունեության ժամկետն է մինչև 2047թ. դեկտեմբերի 31-ը, հետևաբար՝ Թողարկողի կողմից թողարկված բաժնետոմսերը կմարվեն 2047թ. դեկտեմբերի 31-ին:

Տեղաբաշխված պարտատոմսերը մարվելու են 2008թ. դեկտեմբերի 25-ին:

3.6.5. Բաժնետոմսերի վերաբերյալ

Համաձայն Թողարկողի կանոնադրության՝ Թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- ստանալ իրենց պատկանող բաժնետոմսերի անվանական արժեքին համամասնական շահույթի մասը, որը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից.
- մասնակցել անձամբ, կամ իր ներկայացուցիչների միջոցով ընդհանուր ժողովին և ընդհանուր ժողովի օրակարգի համապատասխան հարցերի լուծմանը.
- տեղեկություն ստանալ Թողարկողի գործունեության մասին.
- մասնակցել Թողարկողի կառավարմանը.
- Թողարկողի լուծարման դեպքում ստանալ իրենց հասանելի գույքի բաժինը.
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Թողարկողի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը՝ պահպանելով Օրենսդրության պահանջները.
- Թողարկողից դուրս գալ իրենց պատկանող բաժնետոմսերի փաթեթի օտարման ճանապարհով, ընդ որում բաժնետոմսերի վաճառքն իրականացվում է՝ հաշվի առնելով մյուս բաժնետերերի նախապատվության իրավունքը.
- օտարել կամ այլ միջոցով փոխանցել երրորդ անձանց իրենց պատկանող բաժնետոմսերը՝ Թողարկողի համաձայնությամբ.
- այլ իրավունքներ, որոնք նախատեսված են Օրենսդրությամբ և Թողարկողի կանոնադրությամբ:

Բաժնետերերը պարտավոր են.

- Թողարկողի գործունեության ժամանակաշրջանում և նրա դադարեցումից հետո 3 տարվա ընթացքում պահպանել ստացված տեղեկությունների գաղտնիությունը.
- տեղեկության ծավալը, ցանկը և երրորդ անձանց դրա փոխանցման կարգը որոշվում է վարչության կողմից և հաստատվում է Թողարկողի տնօրենների խորհրդի կողմից.
- պահպանել Թողարկողի կանոնադրության դրույթները.
- կատարել Թողարկողի նկատմամբ ստանձնած պարտավորությունները.
- աջակցել Թողարկողին նրա գործունեության իրականացման գործում.
- վճարել ձեռք բերված բաժնետոմսերի արժեքը՝ Թողարկողի կողմից սահմանված ժամկետներում:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում բոլոր հարցերի լուծման ժամանակ Թողարկողի յուրաքանչյուր բաժնետոմս իր բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք: Բաժնետոմսն անբաժանելի է: Երկու կամ ավելի անձանց կողմից մեկ բաժնետոմսի սեփականատեր հանդիսանալու դեպքում, բաժնետերերը հանդես են գալիս որպես մեկ բաժնետեր:

Բաժնետոմսերը կարող են այլ անձանց սեփականությանն անցնել միայն Օրենսդրության համաձայն և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով: Թողարկողի բաժնետերերը ունեն բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք կանոնադրական կապիտալի մեծացման և բաժնետիրոջ կողմից իրեն պատկանող բոլոր բաժնետոմսերի կամ դրանց մի մասի օտարման դեպքում:

Բաժնետերը, ով ցանկանում է իրացնել (փոխանցել) բաժնետոմսերը, պարտավոր է օտարման պահից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր առաջ տեղեկացնել այդ մասին Թողարկողի մյուս բաժնետերերին և Թողարկողի Վարչությանը՝ նշելով օտարվող բաժնետոմսերի քանակը և արժեքը՝ բաժնետերերին առաջարկելով ձեռք բերել օտարվող բաժնետոմսերը: Բաժնետերերը, ովքեր ցանկանում են ձեռք բերել բաժնետոմսեր, պետք է 30 օրացուցային օրվա ընթացքում տեղեկացնեն բաժնետոմսեր օտարող բաժնետիրոջը և Թողարկողի Վարչությանը, դրանց ձեռքբերման կամ գնման իր հրաժարվելու մտադրության մասին: Բաժնետոմսերը գնելու բաժնետերերի հրաժարվելու դեպքում Վարչությունը, այդ մասին տեղեկանալուց 30 օրացուցային օրվա ընթացքում, պարտավոր է որոշում ընդունել Թողարկողի կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ ձեռք բերելուց հրաժարվելու մասին և 7 օրացուցային օրվա ընթացքում ընդունված որոշման մասին տեղեկացնել բաժնետոմսերը առաջարկող բաժնետիրոջը: Բաժնետոմսերը ձեռք բերելուց Թողարկողի հրաժարվելու դեպքում բաժնետերն իրավունք ունի նույն պայմաններով իրացնել իր բաժնետոմսերը երրորդ անձանց:

Պարտատոմսերի վերաբերյալ

Պարտատոմսերը սեփականատիրոջն իրավունք են տալիս ստանալ պարտատոմսերի անվանական արժեքի 4.5% (արժեկտրոնը) կազմող գումարը՝ տեղաբաշխման օրվանից հետո յուրաքանչյուր վեց ամիս ժամանակահատվածի վերջին օրը (երեք անգամ): Համաձայն Թողարկողի և ՀԿԴ-ի միջև կնքված պայմանագրի՝ արժեկտրոնի վճարմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը 10:00 դրությամբ, ՀԿԴ-ն համապատասխան ռեեստրի քաղվածքը փոխանցում է Թողարկողին:

Թողարկողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գումարը փոխանցում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված համապատասխան բանկային հաշիվների վրա:

Պարտատոմսերը սեփականատիրոջն իրավունք են տալիս պարտատոմսերի մարման պահին ստանալ պարտատոմսում նշված անվանական արժեքը: Համաձայն Թողարկողի և ՀԿԴ-ի միջև կնքված պայմանագրի՝ մարման օրը ժամը 14:00, ՀԿԴ-ն մարման օրվա դրությամբ համապատասխան ռեեստրի քաղվածքը փոխանցում է Թողարկողին: Թողարկողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում մարվող գումարը փոխանցում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված համապատասխան բանկային հաշիվների վրա:

Ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի, պարտատոմսերով տոկոսները չվճարելու կամ սահմանված ժամկետում պարտատոմսերը չմարելու դեպքում Թողարկողը կարող է լուծարվել դատական կարգով:

3.6.6. Պարտատոմսերը հանդիսանում են կարգավորվող շուկայում՝ ՀՖԲ-ում առևտրին թույլատրված արժեթղթեր: Այս պարտատոմսերի գծով վճարումների տարեկան տոկոսադրույքը 9% է, արժեկտրոնները վճարվում են 6 ամիսը մեկ անգամ 4.5%-ի չափով՝ հաշվարկված մեկ պարտատոմսի անվանական արժեքի նկատմամբ: 2007թ. դեկտեմբերի 31-ին Թողարկողն իրականացրել է արժեկտրոնների վճարում առաջին կիսամյակի համար: Արժեկտրոնների հաջորդ կիսամյակային վճարումները լինելու են 26.06.2008թ. և 25.12.2008թ.: Արժեկտրոնային վճարումները Թողարկողի կողմից փոխանցվում են ներդրողների բանկային հաշիվներին:

Պարտատոմսերի գծով արժեկտրոնների չվճարման դեպքեր չեն գրանցվել:

Թողարկողը պարտատոմսերի գծով միջանկյալ վճարումներ չի իրականացրել:

3.6.8. Տեղաբաշխված պարտատոմսերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման կամ հետգնման դեպքեր չեն եղել:

Տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը նախապես սահմանված է եղել ԱՄՆ դոլարով, մասնավորապես՝ 1 բաժնետոմսի անվանական արժեքը կազմել է 10 ԱՄՆ դոլար, որը համարժեք է եղել 5026.5 ՀՀ դրամի 1997թ. օգոստոսի 15-ի դրությամբ: 05.09.2006թ. բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշման համաձայն Թողարկողի բաժնետոմսերի անվանական արժեքը սահմանվել է ՀՀ դրամով, մասնավորապես՝ 1 բաժնետոմսի անվանական արժեքը սահմանվել է 5026.5 ՀՀ դրամ: Նշված փոփոխությունն իրականացվել է Թողարկողի կանոնադրությունը «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. «ՀայՌ-ուսգագարդ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության ընթացակարգ

Հավելված 2. Ֆինանսական հաշվետվություններ
(2005թ., 2006թ., 2007թ., 2008թ. I եռամսյակ)

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«Հայֆուսգազարդ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հիմք ընդունելով «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Թողարկող) տնօրենների խորհրդի 11.09.2007թ. թիվ 3/47-2007 որոշումը և Թողարկողի ու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) միջև 20.05.2008թ. կնքված թիվ IB/08-002 պայմանագիրը, Բանկը ստանձնել է երաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերը (այսուհետև՝ պարտատոմսեր) հետևյալ պայմաններով.

Պարտատոմսի դասը	Անվանական արժեկտրոնային պարտատոմս
Պարտատոմսի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը	տարեկան 9.5%
Շրջանառության ժամկետը	36 ամիս
Շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով
Տեղաբաշխման ենթակա ծավալը	1 000 000 000 ՀՀ դրամ
Արժեկտրոնի (տոկոսագումարների) վճարման պարբերականությունը	Արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարումը կատարվում է տեղաբաշխման առաջին օրվանից հետո կիսամյակային պարբերականությամբ
Տեղաբաշխման գնի որոշման բանաձև	$P = \frac{N}{(1+t * R / m)} * \left\{ C * \sum_{j=1}^n \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$

որտեղ՝

- P – պարտատոմսի հաշվարկված (տեղաբաշխման) գինն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,

- R – պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքն է,
- t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
- m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
- c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
- n – մնացած արժեկտրոնների վճարումների քանակն է, ընդ որում n արժեքը պարտատոմսի շրջանառության ընթացքում փոփոխվում է ըստ նվազման, այսինքն՝ 6-1 միջակայքում:
- j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ j արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ն արժեքները (երբ n-ը ընդունում է 1 արժեք, j-ն նույնպես ընդունում է 1 արժեքը):

- 1.2. Հիմք ընդունելով Թողարկողի ու Բանկի միջև 20.05.2008թ. կնքված թիվ IB/08-002 պայմանագրի 2.2.5. կետի պահանջները՝ Բանկը լիազորված է.
 - ա) ձևավորել տեղաբաշխողների խումբ (սինդիկատ)՝ համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով,
 - բ) կազմակերպել պարտատոմսերի ազատ բաժանորդագրություն՝ իր կողմից սահմանված կարգին համապատասխան:
- 1.3. Հաշվի առնելով, որ Բանկը ֆինանսական շուկայի մասնակիցների հետ 05.06.2008թ. կնքել է Թողարկողի պարտատոմսերի տեղաբաշխման խմբի ստեղծման և գործունեության մասին պայմանագիրը, համաձայն, որի տեղաբաշխման խումբը պատրաստական է ձեռք բերել 500 մլն ծավալի (10,000 հատ) պարտատոմսեր, նախատեսվում է 500 մլն ծավալի (10,000 հատ) պարտատոմսեր տեղաբաշխել սույն ընթացակարգին համապատասխան կազմակերպվող ազատ բաժանորդագրության միջոցով:

2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 2.1. Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացվում է հետևյալ կարգով.
 - 2.1.1 Բաժանորդագրության եղանակով տեղաբաշխվող պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է բաց բաժանորդագրության եղանակով, որն սկսվում է պարտատոմսերի գրանցման հայտարարագրի գրանցման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվանից և տևում 10 աշխատանքային օր:
 - 2.1.2 Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացվում է Բանկի կողմից:
 - 2.1.3 Պարտատոմսեր ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք (այսուհետ՝ ներդրողներ) կարող են մասնակցել բաժանորդագրությանը միայն սույն ընթացակարգի 2.1.1 կետում նշված ժամկետում: Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ Տեղաբաշխողի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2), ինչպես նաև նրա ինտերնետային կայքից (www.armswissbank.am) կամ Թողարկողի ինտերնետային կայքից (www.armrusgasprom.am):
 - 2.1.4 Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի ձեռք բերման հաստատումը ներդրողն իրականացնում է սույն ընթացակարգին կից հաստատված հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկին ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00:
 - 2.1.5 Պարտատոմսերի ձեռք բերումը կատարվում է ներդրողի կողմից հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական գումարը (որը որոշվում է հետևյալ ձևով՝ պարտատոմսերի ձեռք բերվող քանակ բազմապատկած տեղաբաշխման գին՝ հաշվարկված սույն ընթացակարգի 1.1. կետում սահմանված բանաձևով) Բանկում բացված 250003691186 տարանցիկ հաշվին միանվագ մուտքագրելուց անմիջապես հետո: Եթե Ներդրողի կողմից համապատասխան դրամական միջոցները սույն կետում նշված բանկային հաշվին վճարվել են մինչև տվյալ

աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

- 2.1.6 Պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ են մուտքագրվում անկանխիկ եղանակով: Ֆիզիկական անձինք իրավունք ունեն պարտատոմսերի ձեռք բերման գումարները մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը պարտատոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը:
- 2.1.7 Բանկը 2.1.5. կետում նշված բանկային հաշվին գումարի ստացման օրվա ընթացքում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (այսուհետ նաև՝ ՀԿԴ) է ներկայացնում Թողարկողի թողարկման հաշվից պարտատոմսերի փոխանցման հանձնարարագիր՝ ՀԿԴ-ի կանոններով սահմանված կարգով:
- 2.1.8 Բանկի կողմից 2.1.5. կետում նշված գումարը Թողարկողի տնօրինմանն է հանձնվում (փոխանցվում է Թողարկողի համապատասխան բանկային հաշվին) միայն ՀԿԴ-ում կամ լիցենզավորված այլ պահառուի մոտ ներդրողների համար բացված համապատասխան արժեթղթերի հաշվին պարտատոմսերի գրանցվելուց հետո:
- 2.1.9 Եթե տեղի է ունեցել պարտատոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են առաջնահերթության կարգով, իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված հայտերում ձեռք բերվող պարտատոմսերի ծավալը գերազանցում է տվյալ օրվա ընթացքում չվաճառված պարտատոմսերի ծավալին, ապա՝ մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական պարտատոմսեր, ապա դրանք ենթակա են կլորացման թվաբանական կլորացման եղանակով: Չբավարարված պարտատոմսերի համապատասխան դրամական միջոցները Բանկի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):
- 2.1.10 Տեղաբաշխման ընթացքում ներդրողները պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ ՀԿԴ-ից կամ լիցենզավորված այլ պահառուից (որտեղ բացված է տվյալ ներդրողի արժեթղթերի հաշիվը)՝ նրանց ներքին կանոններով սահմանված ժամկետներում գործարքի վերաբերյալ հաշվետվություններ (քաղվածքներ) ստանալու միջոցով:
- 2.1.11 Ներդրողները պարտատոմսերի հայտերը մուտքագրելուց հետո 9 ժամվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր կերպով Բանկից ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչել իրենց բաժանորդագրությունները՝ եթե մինչև այդ ներդրողների հայտերը չեն բավարարվել և տվյալ հայտերի հիման վրա գործարքներ չեն կատարվել: Երբ ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և 2.1.4 և 2.1.5-րդ կետերում նշված կարգով տրվում է նոր հայտ:
- 2.1.12 Հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա հայտի հետ կանչման ամսաթվից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Բանկի կողմից ենթակա է վերադարձման՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):
- 2.1.13 Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթաց-

քում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

2.1.14 Սույն ընթացակարգը չի տարածվում տեղաբաշխման խմբի կողմից պարտատոմսերի ձեռք բերման գործընթացի վրա:

3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 3.1. Բաժանորդագրության ընթացքում պարտատոմսերում ներդրման եկամտաբերությունը հաշվարկվում է տարեկան 10 տոկոս եկամտաբերությամբ:
- 3.2. Բաժանորդագրության ընթացքում պարտատոմսերի ձեռքբերման հայտերի բացակայու-
թյունը և պարտատոմսերով գործարքների չկատարումը պարտատոմսերի տեղաբաշխումը
չեղյալ ճանաչելու հիմք չեն:
- 3.3. 2.1.1 կետում նշված ժամկետի վերջին օրվա ժամը 17:00-ի դրությամբ չտեղաբաշխված
Պարտատոմսերը ձեռք են բերվում Բանկի կողմից:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ
Հ Ա Յ Տ

---/-----/2008թ.

(Հայտ ներկայացնողի անվանումը (անունը, ազգանունը))

(Պետական գրանցման համարը (ԱՆՃՆ հաստատող փաստաթղթի համարը) և տրման ամսաթիվը)

(Գտնվելու վայրը (Հաշվառման վայրը) և կապի միջոցները)

Սույնով ցանկանում եմ ձեռք բերել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի պարտատոմսերը՝
_____ հատ՝ _____ ընդհանուր անվանական արժեքով:
(նշվում է անվանական արժեքը թվերով)

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անվանումը	Արժեթղթերի հաշվի համարը

Դրամական միջոցների փոխանցման (նուտքագրման) ամսաթիվը	
Բանկային հաշվի համարը	

Այլ նշումներ _____

Ստորագրություն _____

Անուն, Ազգանուն¹ _____

Յիշեցում՝ Եթե Ներդրողի կողմից համապատասխան դրամական միջոցները համապատասխան բանկային հաշվին վճարվել են մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

¹ Իրավաբանական անձի դեպքում լրացվում է լիազորված անձի անունը, ազգանունը և պաշտոնը, իսկ հայտը կնքվում է տվյալ իրավաբանական անձի կնիքով:

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական
վաթիքով միջամուկայ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ
սահմանված կազմակերպությունների վրա

կ.տ Գնկավար Կ.Կարապետյան
անուն ազգանուն

Գլխավոր հաշվապահ Ա.Ունանյան
անուն ազգանուն

Ձև N 1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒ

առ

31 դեկտեմբերի 2005թ.
(ամսաթիվ, ամիս, տարի)

		Ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«ՀայՌուսագաղղ» ՓԲԸ	37400154
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	բնական գազի ներկրում և իրացում	40202
		40102
Պետական ռեգիստրում գրանցման համարը		26412004128
Հարկ վճարողի հաշվառման համարը		23-00046317
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43	հեռախոսը 29-47-27
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43	հեռախոսը 29-47-27

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	123 273 847	127 901 797
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	3 898 231	4 194 470
Ոչ նյութական ակտիվներ	030	117 251	2 000 322
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040	10 128 686	10 128 686
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060		94 417
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	444 766	408 724
	071		
	072		
	073		
	074		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	137 862 781	144 728 417
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	1 212 012	2 140 326
Աճեցվող և բավոլ կենդանիներ	100		
Արագամաշ առարկաներ	110	25 191	48 646
Անավարտ արտադրություն	120		6 203
Արտադրանք	130		
Ապրանքներ	140	1 902 427	2 695 757
Տրված ընթացիկ կամխաճարներ	150	1 613 443	880 720
Պեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	16 201 028	14 652 215
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	25 863	15 903
Այլ դեբիտորական պարտքեր	180	4 236 940	1 811 956
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190	1 420 164	4 142 057
Ռաճական միջոցներ և դրանց համարժեքներ	200	1 230 866	2 754 455
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	343 073	353 361
ընթացիկ հետաձգված հարկային ակտիվներ	211	274 946	334 529
	212		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	28 211 007	29 501 598
Հ Ա Շ Ա Վ Ե Կ Ը Ի Ռ	230	166 073 788	174 230 014

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240	136 218 150	136 218 150
Էմիսիոն եկամուտ	250		
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260		
Կուտակված շահույթ	270	(6 336 351)	(4 630 649)
Պահուստային կապիտալ	280	615 100	
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290		
	291		
Ընդամենը սեփական կապիտալ	300	130 496 899	131 587 501
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	20 894	907 307
Հետաձգված հարկային պարտավորություններ	320	83	
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330	1 015 185	1 022 862
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350		
	351		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	1 036 162	1 930 169
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	1 756 838	2 883 267
Կարճաժամկետ փոխառություններ	380	54 801	41 700
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	24 160 034	30 404 535
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	4 129 848	5 542 026
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	1 167 869	978 321
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	27 873	88 648
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	213 714	304 620
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	440		
Այլ կրեդիտորական պարտքեր	450	23 029	65 135
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460		
Ընթացիկ պահուստներ	470		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480	3 006 721	404 093
հետաձգված հարկային պարտավորություններ	481	817 374	380 426
	482		
	483		
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	34 540 727	40 712 345
Հ Ա Շ Ա Վ Ե Կ Ը Ի Ռ	500	166 073 788	174 230 014

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական
վաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ
սահմանված կազմակերպությունների վրա

Ձև N 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2005թ.
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

	ծածկագիրը
Կազմակերպության անվանումը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ	37400154
Փաստացի գործունեության բնական զգալի ներկրում և իրացում	40202
հիմնական երկու տեսակները	40102
Պետական ռեգիստրում գրանցման համարը	26412004128
Հարկ վճարողի հաշվառման համարը	23-00046317
Չափի միավորը	հազ. դրամ
Գտնվելու վայրը <u>ՀՀ, Երևան, Թրիխյան խճուղի 43</u>	հեռախոսը 29-47-27
Փաստացի գործունեության <u>ՀՀ, Երևան, Թրիխյան խճուղի 43</u>	հեռախոսը 29-47-27
իրականացման վայրը	

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անողական)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքատր, աշխատանքների, ծառայությունների իրացումը	010	47 222 373	58 045 294		
Իրացված ապրանքատր, ապրանքատր, աշխատանքների, ծառայությունների իրացումը	020	(43 526 313)	(50 980 110)	()	()
Համախառն շահույթ (վնաս)	030	3 696 060	7 065 184		
Իրացման ծախսեր	040	(5 981 871)	(7 238 126)	()	()
Վարչական ծախսեր	050	(1 275 913)	(1 955 159)	()	()
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	(3 561 724)	(2 128 101)		
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	2 701 788	3 211 575		
	071	388 413	70 404		
	072	1 936 670	2 715 299		
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	(918 229)	(2 164 774)	()	()
	081	(165 425)	(129 518)		
	082				
Գործառնական շահույթ (վնաս)	090	(1 778 165)	(1 081 300)		
Ֆինանսական ծախսեր	100	(89 573)	(69 296)	()	()
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110				
Ընդհատվող գործառնական վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	120				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	2 495 001	2 102 507		
	131				
Մովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	627 263	1 090 503		
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150				
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	627 263	1 090 503		
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170				
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	627 263	1 090 503		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)*	200				

* Սույն հոդվածների լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հոդվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով):

Գեկավար
կ.տ

Գլխավոր հաշվապահ

Կ.Կարապետյան
անուն ազգանուն

Ա.Ունանյան
անուն ազգանուն

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
12.12.2001թ. թիվ 465 որոշմամբ տարեկան (ամբողջական
փաթեթով միջամուկայ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ
սահմանված կազմակերպությունների վրա

Ձև N 3

Կ.տ Գեկավար _____ Կ. Կարապետյան
անուն ազգանուն
Գլխավոր հաշվապահ _____ Ա. Ունանյան
անուն ազգանուն

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2005թ.
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

		Ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«ՀայՈւսգազարդ» ՓԲԸ	37400154
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	բնական գազի ներկրում և իրացում	40202
		40102
Պետական ռեզիստրում գրանցման համարը		26412004128
Հարկ վճարողի հաշվառման համարը		23-00046317
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43	հեռախոսը 29-47-27
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43	հեռախոսը 29-47-27

Մեփական կապիտալի տարրերի անվանումը	I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)												
	տող	Կանոնադրական (բաժնեհավար) կապիտալ				Էմիսիոն եկամուտ (վնաս)	Վերագնահատումից տարբերություններ	Վերաչափումից տարբերություններ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Միջանկյալ շահաբաժիններ	Մեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
		Կանոնադրական կապիտալ	Չվճարված կապիտալ	Հետ գնված կապիտալ	Զուտ գումարը								
Հոդվածներ	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2003թ.	010	#####			140 742 000				(7 117 651)	615 100			134 239 449
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	020								154 034				154 034
Վերահաշվարկված մնացորդը	030	#####			140 742 000				(6 963 617)	615 100			134 393 483
Ռոդակիրներն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր	040												
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	050	(4 523 850)			(4 523 850)								(4 523 850)
կանոնադրական կապիտալի համարում	051	(4 523 850)			(4 523 850)								(4 523 850)
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) գուտ շահույթ (վնաս)	060								627 263				627 263
Շահաբաժիններ	070								()	()			
Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	080												
	081												
Ներքին շարժեր, այդ թվում՝	090						()						
	091						()						
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2004թ.	100	#####			136 218 150				(6 336 351)	615 100			130 496 899

Մեփական կապիտալի տարրերի անվանումը	II. Հաշվետու տարի (ժամանակաշրջան)												
	տող	Կանոնադրական (բաժնեհավար) կապիտալ				Էմիսիոն եկամուտ (վնաս)	Վերագնահատումից տարբերություններ	Վերաչափումից տարբերություններ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Միջանկյալ շահաբաժիններ	Մեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
		Կանոնադրական կապիտալ	Չվճարված կապիտալ	Հետ գնված կապիտալ	Զուտ գումարը								
Հոդվածներ	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2004թ.	010	#####			136 218 150				(6 336 351)	615 100			130 496 899
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	020								98				98
Վերահաշվարկված մնացորդը	030	#####			136 218 150				(6 336 253)	615 100			130 496 997
Ռոդակիրներն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր	040												
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	050												
կանոնադրական կապիտալի նվազեցում	051	(101 988)			(101 988)								(101 988)
կանոնադրական կապիտալի ավելացում	052	101 988			101 988								101 988
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) գուտ շահույթ (վնաս)	060												
Շահաբաժիններ	070								(1 090 503)	()			(1 090 503)
Մեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝	080												
	081												
Ներքին շարժեր, այդ թվում՝	090						()		615 100	(615 100)			
	091						()						
Մնացորդը առ....	100	#####			136 218 150				(4 630 649)				131 587 501

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության
12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական
փաթեթով միջամուկայ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ
սահմանված կազմակերպությունների վրա

Ձև N 4

Կ.տ Դեկավար
Գլխավոր հաշվապահ

Կ. Կարապետյան
անուն ազգանուն

Ա. Ունանյան
անուն ազգանուն

ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2005թ.
(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))

Ծածկագիրը

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ	
Կազմակերպության անվանումը	37400154
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	բնական գազի ներկրում և իրացում 40202 40102
Պետական ռեգիստրում գրանցման համարը	26412004128
Հարկ վճարողի հաշվառման համարը	23-00046317
Չափի միավորը	հազ. դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43 հեռախոսը 29-47-27
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43 հեռախոսը 29-47-27

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ ժամանակաշրջան						ԳՄՀ*	Հաշվետու ժամանակաշրջան					
		Գումար	դրամարկղ		այդ թվում քանկային հաշիվներ		ԳՄՀ*		Գումար	դրամարկղ		այդ թվում քանկային հաշիվներ		ԳՄՀ*
			դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ				դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	
			4	5	6	7				3	4	5	6	
1	2	3	4	5	6	7	8	3	4	5	6	7	8	
Գրամական միջոցների տարեկցի մնացորդը	010	5 926 796	25 698		291 385	5 609 713		1 230 866	28 596		459 499	742 771		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր լրորտորմսերը, ապրատարերը, աշխատանքները, օտաաշորությունները	020	45 519 224	202 780		41 750 740	3 565 704		73 094 744	674 382		65 274 202	7 146 160		
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝ հավատ. կառ. հիմնադրի շահից	030	7 214 481	31 620		5 763 193	1 419 668		13 048 978	38 370		11 846 698	1 163 911		
Հահաբաժիններից	032	1 109			1 109									
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	040	52 733 705	234 400		47 513 933	4 985 372		86 143 722	712 752		77 120 900	8 310 071		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր														
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	050	35 825 023	8 812		10 724 684	25 091 527		45 356 505	18 621		7 130 133	38 207 751		
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	060	7 839 699	12 108		7 796 954	30 637		14 188 227	28 534		14 124 334	35 359		
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	070	2 608 853	2 202 991		400 165	5 697		3 741 939	3 132 328		551 641	57 970		
Վճարումներ քյուպե	080	1 457 389	40		1 457 349			7 938 052	14		7 937 315	723		
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	090	456 422			456 422			830 444	505		829 939			
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	100	4 709 078	40 355		4 481 311	187 412		9 650 277	78 657		9 391 563	180 058		
	101													
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	110	52 896 464	2 264 306		25 316 885	25 315 273		81 705 445	3 258 659		39 964 924	38 481 862		
